

Վ.ՕՀԱՆՅԱՆ, Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ, Լ.ՂԱԶԱՐՅԱՆ, Վ.ԱՌԱԶԵԼՅԱՆ, Վ.ԱՍՏԱՆՅԱՆ,  
Ֆ.ԵՐԻՑՅԱՆ, Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Ա.ՎԻՐԱԲՅԱՆ

# ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

11-րդ դասարան



«ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ»  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2010

ՀՏԳ- 373.167.1:355/359(075.3)  
ԳՄԴ- 68.49(2)9 y72  
Ն 236

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

Հեղինակներ՝

<b>Վ. Օհանյան</b>	Էջեր հայ ռազմարվեստի պատմությունից, կրակային պատրաստություն, խմբի ղեկավար, մասնագետ խմբագիր
<b>Ս. Մարգարյան</b>	ՀՀ ՋՈՒ համազորային կանոնադրություններ, շարային պատրաստություն, ռազմական տերմինների բառացանկ, ընդհանուր խմբագիր
<b>Լ. Ղազարյան</b>	Մարտավարության հիմունքներ
<b>Վ. Առաքելյան</b>	Ռազմական տեղագրություն
<b>Վ. Աստանյան, Ֆ. Երիցյան</b>	Միջազգային մարդասիրական իրավունք
<b>Ռ. Ալավերդյան, Հ. Մաթևոսյան</b>	Անվտանգ կենսագործունեություն
<b>Ա. Վիրաբյան</b>	Առաջին բուժօգնության հիմունքներ

Ն 236 **Նախնական զինվորական պատրաստություն:** Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք/Վ.Օհանյան, Ս.Մարգարյան, Լ.Ղազարյան և ուրիշներ: Ընդի. խմբ.՝ Ս.Մարգարյան, մասնագետ խմբ.՝ Վ.Օհանյան. - Եր., «Աստղիկ Գրատուն», 2010, 112 էջ:

ՀՏԳ- 373.167.1:355/359 (075.3)  
ԳՄԴ- 68.49(2)9 y72

ISBN 978-99941-76-51-9

© «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2010 թ.:  
© Վ.Օհանյան և ուրիշներ, 2010 թ.:

# ԷԶԵՐ ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ



## Հայ ժողովուրդը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ

1939 թվականի սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա: Սկսվեց 2-րդ համաշխարհային պատերազմը: Շուրջ երկու տարում հիտլերյան զորքերը գրեթե առանց լուրջ դիմադրության զավթեցին ողջ Եվրոպան:

1941 թվականի հունիսի 22-ին Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա: Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, որը տևեց չորս տարի՝ 1941–1945թթ. մայիսի 8-ը: Պատերազմի սկզբնական շրջանում Խորհրդային Միությունն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կրեց մեծ պարտություններ: Այդ պարտությունների հիմնական պատճառը համարվում էր հնուտ և փորձառու հրամանատարական կազմի բացակայությունը:

Մինչ Հայրենական պատերազմի սկիզբը տարբեր պատճառներով ստալինյան բռնատիրության զոհ էին դարձել ավելի քան 43000 սպա, որոնց 53 տոկոսը զնդի հրամանատարից բարձր պաշտոն ունեցող զինվորականներ էին: Միաժամանակ Գերմանիան ուներ «կայծակնային» պատերազմ վարելու երկու տարվա փորձ և մշակել էր պատերազմի «կայծակնային պլան»՝ «բլիցկրիգ», որի հետևանքով պատերազմի սկզբնական շրջանում նա հասավ զգալի հաջողությունների:


Այդ պատերազմին մասնակցեցին շուրջ 600 հազար հայորդիներ: Բացի խառը զորամասերում ընդգրկվելուց կազմավորվեցին նաև զուտ ազգային դիվիզիաներ, որոնք մարտական փառավոր ուղի անցան Կովկասյան լեռներից մինչև Բեռլին:

Հայրենական պատերազմին մասնակցել են **6 հայկական դիվիզիա**:

- **76-րդ Հայկական լեռնահրաձգային դիվիզիա**: Կազմավորվել է 1922 թ. սեպտեմբերի 5-ին: Տարբեր տարիների դիվիզիայի հրամանատարներ են եղել Ա. Մելիք-Շահնազարյանը, Հ. Աթոյանը, պատերազմի տարիներին՝ այլազգի հրամանատարներ: Դիվիզիայի թերթի խմբագիրներից է եղել գրող-հրապարակախոս Հր. Բոչարը: 1942-ի հոկտեմբերին Դ-ոնը զետանցելու և երկաթուղային հանգույցը գրավելու համար դիվիզիան արժանացել է զվարդիականի

կոչման: Այնուհետև վերակազմավորվել է 51-րդ գվարդիական դիվիզիայի: 1942-ի աշնանը մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին, որի համար պարգևատրվել է Լենինի շքանշանով: Դիվիզիան մասնակցել է Կուրսկի ճակատամարտին, ապա 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի կազմում հասել է մինչև Կուռլանդական թերակղզի: Անցնելով շուրջ 7000 կմ մարտական ուղի՝ դիվիզիան ազատագրել է 600 բնակավայր, 21 մարտիկ արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման:

- 408-րդ Հայկական հրաձգային դիվիզիա: Կազմավորվել է 1941 թ. օգոստոսին: Մարտական գործողություններն սկսել է 1942-ի սեպտեմբերից՝ Նովոռոսիյսկի մոտ, Յենեսյան և Ռիբացկի ծովախորշերում: 1942-ի հոկտեմբերին մարտի մեջ է մտել Տուապսեի մոտ՝ Պշիշ գետի հովտում:
- 409-րդ Հայկական հրաձգային դիվիզիա: Կազմավորվել է 1941 թ. օգոստոսին, հրամանատար՝ Ա.Վասիլյան: Մարտի մեջ է մտել 1942 թ. նոյեմբերին Մոզորկի շրջանում, մասնակցել Մոզորկի, Գեորգիևսկի, Միներալնիե Վոդիի ազատագրմանը: Այնուհետև, հարձակողական մարտերի ժամանակ աչքի է ընկել Դնեպրոպետրովսկի, Դնեպրոժերժինսկի ազատագրման, Դնեպրի գետանցման մարտերում: Կիրովոգրադ քաղաքի ազատագրման համար արժանացել է «Կիրովոգրադյան» պատվանվանը: Մարտերով հասել է մինչև Պրահա: 1700 մարտիկներ պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով:
- 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիա: Կազմավորվել է 1941 թ. դեկտեմբերին: Հրամանատարներ են եղել Ս.Չաքյանը, Ա.Սարգսյանը, Ն.Սաֆարյանը: Դիվիզիան մարտական փառահեղ ուղի է անցել Գրոզնուց մինչև Բեռլին:



89-րդ և 409-րդ դիվիզիաների մարտական ուղին

Թամանի թերակղզու գրավման համար արժանացել է Թամանյան պատվավոր կոչման: Դոլգայա լեռան գրոհի ժամանակ սերժանտ Հ.Ավետիսյանն իր մարմնով փակել է թշնամու հրակնատը և հետմահու արժանացել Խորհրդային Միության հերոսի կոչման: Կուրբատսկայա ստանիցայի գրավման ժամանակ ցուցաբերած հերոսության համար հետմահու Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց նաև սերժանտ Ս.Առաքելյանին: Կերչի մատույցներում քաջի մահով ընկած սակրավոր Ջ.Կարախանյանն արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Դիվիզիան աչքի ընկավ Սևաստոպոլի համար մղված մարտերում, ինչի համար հերոսի կոչման արժանացան Ս.Բաղդասարյանը, Խ.Խաչատրյանը, Ա.Հարությունյանը, Հ.Մկրտչյանը, Հ.Ռոստոմյանը: 1945 թ. փետրվարին դիվիզիան անցավ Օդերը, հենակետ գրավեց Ֆրանկֆուրտ քաղաքի մատույցներում, ապա ապրիլին մասնակցեց քաղաքի գրավմանը: Ապրիլի 29-ին դիվիզիան մտավ Բեռլին, մասնակցեց փողոցային մարտերին, քաղաքի գրավումից հետո Ռախիստագի պարիսպների տակ աշխարհին ցուցադրեց հայկական քոչարին: Դիվիզիայից 9 մարդ արժանացել է ԽՍՀՄ հերոսի կոչման, 7333 մարդ պարգևատրվել շքանշաններով ու մեդալներով:

- 390-րդ Հայկական հրաձգային դիվիզիա: Կազմավորվել է 1942 թ. հունվարին, Կերչում, Դրիմի զորամիավորումների հայ ռազմիկներից: Հրամանատարն էր Ս.Ջաքյանը: Դիվիզիան ծանր մարտեր մղեց գերմանական զերազանցող ուժերի դեմ, մեծ կորուստներ կրեց և 1942-ի մայիսին վերակազմավորվեց:
- 261-րդ Հայկական հրաձգային դիվիզիա: Կազմավորվել է 1942-ի աշնանը, հրամանատար՝ Ն.Բալոյան: Դիվիզիան տեղակայվել է ՀԽՍՀ տարածքում և զինվորներ պատրաստել կռվի դաշտում գտնվող զորամասերը համալրելու նպատակով:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտի մեջ իրենց արժանի լուծման են ներդրել հայագի հրամանատարական կադրերը:

Մոտ 70 հայորդիներ զբաղեցրել են գնդի, դիվիզիայի, կորպուսի և այլ բարձր հրամանատարական պաշտոններ:

Աշխարհահռչակ զորավար Խորհրդային Միության մարշալ **Հովհաննես Բաղրամյանը** պատերազմի ժամանակ զբաղեցնում էր 1-ին Մերձբայթյան ռազմաճակատի հրամանատարի պաշտոնը: Նրա ղեկավարությամբ գործող զորքերը 1944 թ. հոկտեմբերին դուրս եկան Բալթիկ ծովի ափերը և



Հովհաննես Բաղրամյան

Արևելյան Պրուսիայից կտրեցին թշնամու Կուռլանդական խմբավորումը՝ 38 հետևակային ու տանկային դիվիզիա: Իր զորավարական մեծ տաղանդի շնորհիվ նա հետագայում զբաղեցրեց ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնը:



*Հովհաննես Իսակով*

ունեցել Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսներին, մասնակցել է նաև Ճապոնիայի Մանջուրական բանակի ջախջախման օպերացիային: Խանփերյանցի զորավարական տաղանդն ըստ արժանվույն գնահատել են նաև եվրոպական և ամերիկյան պետական ու ռազմական գործիչները:

Իրենց զորավարական և գիտական տաղանդով աչքի են ընկել նաև հրետանու գործերի գեներալ-գնդապետ Միքայել Պարսեղովը, քիմիական գործերի գեներալ-մայոր Սերգեյ Կնունյանցը, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լևոն Օրբելին, ավիակոնստրուկտոր գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանը, արդիական հրետանու մեծ գիտակ գեներալ-մայոր Համո Յոլյանը, հրետանու գեներալ-մայորներ Կարապետ Հախնազարյանը, Վեբիլյանը և այլն: 107 հայրորդիներ արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման, 27-ը՝ Փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետի կոչման, մոտ 70000 հայրորդիներ պարգևատրվել են տարբեր մեդալներով և շքանշաններով: ԽՍՀՄ կրկնակի հերոսի կոչման են արժանացել Հովհաննես Բաղրամյանը և Նելսոն Ստեփանյանը: Պատերազմից չվերադարձան մոտ 300 հազար հայրորդիներ: Պատերազմի ժամանակ գործում էին բացառապես հայերից կազմված 6 պարտիզանական ջոկատ, որոնց ընդհանուր թվաքանակը կազմում էր ավելի քան 2000 մարդ:

ԽՍՀՄ նավատորմի ծովակալ **Հովհաննես Իսակովը** զբաղեցրել է ԽՍՀՄ ռազմածովային ուժերի նախարարի տեղակալի, շտաբի պետի պաշտոնները, եղել է Լենինգրադի պաշտպանության կազմակերպիչներից մեկը:

Ջրահատանկային գործերի գլխավոր մարշալ **Համազասպ Բաբաջանյանը** կարևոր ներդրում է ունեցել Կուրսկի և Բեռլինի գրավման օպերացիաներին:

Ռազմաօդային ուժերի մարշալ **Արմենակ Խանփերյանցը** /Սերգեյ Խուդյակով/, որը եղել է ռազմաօդային ուժերի շտաբի պետը, մեծ ներդրում է



*Արմենակ Խանփերյանց*

Դաշնակից պետությունների զինված ուժերի կազմում հայերը նույնպես մեծ մասնակցություն ունեցան: ԱՄՆ-ի կողմից պատերազմին մասնակցել են մոտ 18000 հայորդիներ, լեյտենանտ Երվանդ Դերվիշյանն արժանացել է ԱՄՆ-ի հերոսի՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանին, իսկ երկուսը՝ Ջորջ Մարտիկյանը և Հայկ Շեքերջյանը՝ ԱՄՆ-ի գեներալի կոչման:



*Համազասպ Բարաջանյան*

Ֆրանսիայում պարտիզանական ջոկատի հրամանատար Միսակ Մանուշյանն արժանացել է Ֆրանսիայի բարձրագույն պարգևին՝ «Պատվո լեգեոնի» շքանշանի՝ Ֆրանսիայի ազգային հերոսի կոչման: Սկրտիչ Դաշտոյանն արժանացել է Իտալիայի Հանրապետության բարձրագույն պարգևի:

Հայկական պարտիզանական ջոկատներ էին ստեղծվել նաև Ռումինիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Նիդեռլանդներում և այլն: Պատերազմի մասնակից գեներալների թվով հայերը ԽՍՀՄ-ում զբաղեցնում էին 4-րդ տեղը՝ Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելոռուսիայից հետո:

Պատերազմի հաղթական ավարտին մեծ ներդրում ունեցան նաև թիկունքի աշխատողները: Հայ ժողովրդի ներդրմամբ պատրաստվեցին և ռազմա-

ճակատ ուղարկվեցին «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» էսկադրիլիաները, «Հայաստանի կոմերիտական», «Սասունցի Դավիթ-1» և «Սասունցի Դավիթ-2» տանկային շարասյուները: Պատրաստվեց նաև «Խորհրդային Հայաստան» զբաղադրանքը:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիայի և նրա դաշնակից երկրների տարածքում սփռված հայության ներկայացուցիչներն զգալով, որ օրեցօր հզորացող գերմանական ֆաշիզմը մեծ վտանգ է ներկայացնում հայերի համար, 1938 թ. Կահիրեում գումարված դաշնակցության ընդհանուր ժողովում որոշում կայացրեցին Գերմանիայում և նրա դաշնակից երկրներում ստեղծել Հայոց ազգային խորհուրդ, որը ղեկավարում էր հայտնի գրականագետ Մանուկ Աբեղյանի եղբորորդի Արտաշես Աբեղյանը: Ազգային խորհրդի կազմի մեջ էին մտնում Աբրահամ Գյուլխանդանյանը, Դրաստամատ Կանայանը և մի շարք այլ գործիչներ: Ազգային խորհրդի նպատակն էր՝ սատար լինել




*Նեյտոն Մտեփանյան*

հայությանը, ապահովել նրա անվտանգությունը: Մի քանի ծխախոտային ֆաբրիկաների սեփականատեր Ալֆրեդ Մուրադյանի միջնորդությամբ կարողացան ֆա-



շիստական մտավորականությանը և ղեկավար էլիտային համոզել, որ հայերը համարվում են արիական ընտանիքի լիարժեք ներկայացուցիչներ: Բացի այդ, նախնական որոշում կար, որ պատերազմի մի փուլում, եթե Կովկասյան ճակատից հարձակման անցներ Քեմալական Թուրքիան, բացառապես հայերից կազմավորված զինվորական ստորաբաժանումները պետք է օգնության հասնեին հայրենիքին: Այդ գործնասերի նպատակն էր նաև գերի ընկած հայազգի զինվորականներին փրկել համակենտրոնացման ճամ-

**Հայկական լեգեոնի զինանշանը**  
 բարներից: Կազմավորվեց հայկական լեգեոն, որի հրամանատարը Դրաստամատ Կանայանն էր, իսկ լեգեոնի անմիջական պատասխանատուն՝ Վարդան Սարգսյանը, որը Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի զարմիկն էր: Լեգեոնն ուներ 11 գումարտակ մոտ 18000 զինվորականով, ուներ իր ուրույն տարբերանշանները: Պետք է ասել, որ լեգեոնը գերմանախորհրդային ոչ մի ռազմաճակատում ռազմական գործողության չի մասնակցել, զբաղվել է հիմնականում քիկունքային աշխատանքներով և իր ողջ գործունեության ժամանակ կարողացել է գերմանական համակենտրոնացման ճամբարներից ազատել մոտ 30–40 հազար հայ ռազմագերու:



*Դրաստամատ Կանայան*



## ՅԻՇԻՐ

1. Հայ մարշալներին ու ծովակալին, քո սեղանին մշտապես ունեցիր նրանց լուսանկարները:
2. Կրկնակի հերոսներին:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է սկսվել Հայրենական մեծ պատերազմը, քանի՞ տարի է տևել այն:
2. Հայկական քանի՞ դիվիզիա է մասնակցել պատերազմին:



3. Ո՞ր դիվիզիան է մասնակցել Բեռլինի գրավմանը, ո՞վ էր այդ դիվիզիայի հրամանատարը:
4. Թվարկի՛ր Խորհրդային Միության հայազգի կրկնակի հերոսների և տասը քեզ հայտնի հերոսների անուններ:
5. Փառքի երեք աստիճանի շքանշանի քանի՞ հայ շքանշանակիր կա:
6. Թիկունքի աշխատողներն ինչպե՞ս են օգնել ճակատայիններին:
7. Կարդա՛ Մեծ հայրենականին նվիրված Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպը: Ի՞նչ կլինոնկարներ և արվեստի գործեր գիտեք Հայրենական պատերազմի մասին:



## Հայ ժողովուրդն Արցախյան ազատամարտի ժամանակ

1988 թվականի փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհուրդը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը վերամիավորելու մասին: 1989 թվականի դեկտեմբերի մեկին Հայաստանի Խորհրդային Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում կայացրեց ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին: Այս ամենին հետևեց ազերիական խուժանի և խորհրդային ներքին զորքերի կազմակերպված ռազմական ճնշումը Հայաստանի Հանրապետության և Արցախի տարբեր հատվածների վրա: Սկսվեց Արցախյան ազատամարտը:

1991 թվականին Ադրբեջանի տարածքում տեղակայված ԽՍՀՄ 4-րդ բանակի հեռանալուց հետո այդ հանրապետությանը բաժին հասավ ահռելի քանակությամբ զենք և զինամթերք, այդ թվում մոտ 1300 ռազմական տեխնիկա, 70 ինքնաթիռ և ուղղաթիռ, մոտ 10000 վազոն այլ զենք և զինամթերք: Իսկ Հայաստանում տեղակայված ռազմական տեխնիկան և սպառազինությունը հիմնականում դուրս բերվեց:

Արցախյան ազատամարտը պայմանականորեն կարելի է բաժանել 3 փուլի.

**Առաջին փուլ՝** 1991–1992 թ. մայիս՝ մինչև Շուշիի ազատագրումը:


**Երկրորդ փուլ՝** 1992 թ. մայիս–1993 թ. հունվար՝ ծանր ինքնապաշտպանական մարտեր:

**Երրորդ փուլ՝** 1993 թ. հունվար–1994 թ. մայիս՝ ազատագրական մարտեր և անվտանգության գոտու ստեղծում:

**1991 թվականի ապրիլ-օգոստոսին** խորհրդային ներքին զորքերի հետ մեկտեղ թուրք-ազերիները հարձակվեցին հյուսիսային Արցախի վրա՝ այն հայաթափելու նպատակով: Նախապես մշակված այս ծրագիրը կոչվում էր «Օղակ» («Կոլցո»): Տարածքի հայ բնակչության կյանքն ապահովելու համար ստեղծվեցին կամավո-

րական ջոկատներ՝ Վահան Զատիկյանի ղեկավարությամբ՝ «Մալաթիա-Սեբաստիա», Զարգանդ Դանիելյանի՝ «Հրազդան», Թաթուլ Կրպեյանի՝ «Դաշնակցություն», Սիմոն Աչիգոյանի՝ «Արաբո», Շահեն Մեղրյանի կամավորական ջոկատը և շատ-շատ այլ ջոկատներ, որոնց անդամագրվեցին հազարավոր հայորդիներ:

Հայկական պարզունակ զինված ջոկատներին հաջողվեց մեծ զոհողությունների գնով ապահովել հայ բնակչության տարահանումը այս տարածքից: Այս կռիվներում քաջիմահով ընկան հրամանատարներ Սիմոն Աչիգոյանը՝ «Գեղը», և Թաթուլ Կրպեյանը: Հետագայում Շահեն Մեղրյանի ջոկատը մնաց Շահունյանի տարածաշրջանում և վարեց պարտիզանական պատերազմ՝ թշնամու թիկունքում մեծ կորուստներ պատճառելով հակառակորդին:



Արցախյան ազատամարտի կարևորագույն ճակատամարտերը

Ռազմական գործողությունների ծավալումը ԼՂՀ Գերագույն խորհրդին պարտադրում է ընդունել «Ռազմական դրության մասին» օրենք, որին հաջորդում է Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանը 6 Պաշտպանական շրջան (ՊՇ) ստեղծելու մասին: ՊՇ-ներն իրենց գործողություններով շատ մեծ էին պատմական Արցախի սղնախներին, որոնք անհրաժեշտության դեպքում կարող էին վարել ինքնուրույն պաշտպանական մարտեր՝ մինչ օգնական ուժերի հասնելը:

**Ստեղծված պաշտպանական շրջաններն էին՝**

1. Ստեփանակերտի ՊՇ՝ հրամանատար Մամվել Կարապետյան,
2. Ասկերանի ՊՇ՝ հրամանատար Վիտայի Բալասանյան,

3. Մարտունու ՊՇ՝ հրամանատար Արտյոշա Հարությունյան,
4. Շահումյանի ՊՇ՝ հրամանատար Շահեն Մեղրյան,
5. Մարտակերտի ՊՇ՝ հրամանատար Մոնթե Մելքոնյան,
6. Հաղորթի ՊՇ՝ հրամանատար Արթուր Աղաբեկյան:

Ստեղծվեց նաև ԼՂՀ նախագահին կից պաշտպանության պետական կոմիտե, որի կազմում ընդգրկված էին Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Մամվել Բաբայանը, Քրիստափոր Իվանյանը և ուրիշներ: Արցախյան ազատամարտի բռնությունները նաև հայոց ազգային կանոնավոր բանակը: Ազգային բանակի կայացման գործում մեծ ներդրում ունեցան պետական, քաղաքական գործիչներ Վազգեն Սարգսյանը, Վազգեն Մանուկյանը, Արթուր Սյրտչյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, անվանի կադրային սպաներ գեներալ-գնդապետներ Գուրգեն Դալիբալթյանը, Միքայել Հարությունյանը, Սեյրան



*Վազգեն Սարգսյան*

Օհանյանը, գեներալ-լեյտենանտներ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Հրաչյա Անդրեասյանը, Մուրադ Սարգսյանը, Քրիստափոր Իվանյանը, Անատոլի Զինկիչը, գեներալ-մայորներ Արտյոշա Հարությունյանը, Արկաղի Տեր-Թադևոսյանը, գեներալ-լեյտենանտներ Արթուր Աղաբեկյանը, Մամվել Գրիգորյանը, ազատամարտի հրամանատարներ Շահեն Մեղրյանը, Նորայր Դանիելյանը, Պետրոս Ղևոնդյանը, Լեոնիդ Ազգալոյանը, Վլադիմիր Բաբայանը, Դուշման Վարդանը, Աշոտ Դուլյանը: Հայկական



*Արկաղի Տեր-Թադևոսյան*

զինված կազմավորումները՝ Արցախի ինքնապաշտպանական ուժերը և ՀՀ կամավորական ջոկատները, 1991 թ. դեկտեմբերին սկսեցին Ստեփանակերտի շրջափակման վերացումը: 1992 թ. հունվարի 19–20-ը վնասազերծվեց Կրկժամը:

1992 թվականի փետրվարի 26–29-ը Հրանտ Մարգարյանի հրամանատարությամբ գործող ջոկատները գիշերային պայմաններում հանկարծակի հուժկու հարձակմամբ ոչնչացրեցին ազերիական խոշոր կրակակետերից մեկը՝ Խոջալուն, առգրավելով մեծ քանակի ռազմավար, իսկ գիշերային մթության մեջ հայկական զինված ուժերի կողմից թողնված միջանց-



*Սեյրան Օհանյան*

քով նահանջող ազերի բնակչությանը ոչնչացրեց ադրբեջանական զինուժը:

ՀՀ-ի հետ ցամաքային կապը վերականգնելու, Արցախի մայրաքաղաքը հրետակոծումից փրկելու և թիկունքն ապահովելու համար ինքնապաշտպանական ուժերի գլխավոր շտաբի կողմից մշակված պլանով որոշվեց



*Լեռնիդ Ագալոյան*

ոչնչացնել երկրորդ խոշոր հրետակոծման օջախը և ազատագրել հայոց հինավուրց քաղաք Շուշին: Ստեղծվեց հրամանատարական շտաբ, որը կոորդինացնում էր Արկադի Տեր-Թադևոսյանը /Կոմանդոս/: Ինչպես նաև մշակվեց օպերացիա, որը անվանվեց «Հարսանիք լեռներում»: 1992 թվականի մայիս ամսին Շուշի քաղաքի շրջակայքում կենտրոնացնելով մոտ 3000 զինված մարտիկ և 30 անուն զինտեխնիկա՝ հայկական զինված ուժերը Վալերի Չիթչյանի, Արկադի Կարապետյանի, Սեյրան Օհանյանի, Սամվել Բաբայանի, Դուշման (Ստեփանյան) Վարդանի, Աշոտ

Ղուլյանի (Բեկոր), Ժիրայր Սեֆիլյանի, Ալբերտ Ալավերդյանի հրամանատարությամբ մայիսի 8-ին անցան հարձակման 4 ուղղությամբ: Մայիսի 9-ին արագ տեղաշարժերով հաղթահարելով արտաքինից անանցանելի թվացող տեղամասերը՝ Աշոտ Ղուլյանի հրամանատարությամբ գործող ջոկատին հաջողվեց բերդապարիսպի հյուսիս-արևելյան կողմից մտնել քաղաք և խուճապ առաջացնել թշնամու բանակում: Շուտով արևմտյան կողմից քաղաք մտավ նաև Վալերի Չիթչյանի ջոկատը, որի տանկերից մեկը մայրուղու վրա խփվեց հակառակորդի կողմից, անձնակազմից 2-ը զոհվեցին, իսկ հրամանատար Գագիկ Ավշարյանը վիրավորվեց: Հետագայում այդ տեղում կառուցվեց Հաղթական տանկի հուշարձանը:



*Արշավիր Կարանյան*

Շուշի-Լաչին ճանապարհի վերահսկողության համար մշակվեց Չառըսլու գյուղի հենակետում տեղակայված հակառակորդի ուժեղ խմբավորման ջախջախման և Լիսագորի գրավման պլան, որը



*Ժիրայր Սեֆիլյան*

հաջողությամբ իրականացրեցին Սամվել Բաբայանի ընդհանուր հրամանատարությամբ գործող Արշավիր Կարանյանի, Նվեր Չախոյանի կամավորական ջոկատները և Ժիրայր Սեֆիլյանի վաշտը:

Մայիսի 9-ի կեսօրին թշնամին Շուշուց մազապուրծ դիմեց փախուստի: Հակառակորդը տվեց մոտ 300 զոհ, 700 վիրավոր և կորցրեց մեծ քանակությամբ զենք ու զինտեխնիկա: Շուշիի ազատագրման գործում մեծ ներդրում ունեն գեներալներ Արկադի Տեր-Թադևոսյանը, Գուրգեն Դալիբալթայանը, Արթուր Փափազյանը, Զրիստափոր

Իվանյանը, Ֆելիքս Գգոդյանը, քաղաքական և պետական գործիչներ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Սամվել Բաբայանը, Գագիկ Սահակյանը, Պարզև սրբազան Մարտիրոսյանը և ուրիշներ:

1992 թվականի մայիսի 18-ին հայկական զինված ուժերն ազատագրեցին հայոց պատմական գավառներից մեկը՝ Քաշաթաղը, որը ազերի հրոսակներն անվանափոխել էին Լաչին: Այսպիսով, Արցախը ցամաքային կապով միացավ մայր Հայաստանին:

1992 թվականի հունիսին մինչև ատամները զինված ադրբեջանական բանակը անցավ լայնածավալ հարձակման: Մարտունու շրջանում հրամանատար Մոնթե



Աշոտ Վույան

Մելքոնյանի և Հաղորթում Արթուր Աղաբեկյանի գլխավորությամբ հայկական զինված ուժերին հաջողվեց մեծ դժվարությունների գնով կասեցնել թշնամու հարձակումը՝ մեծ կորուստներ պատճառելով նրան: Օգոստոսի 8-ին դաժան մարտերից հետո ընկավ Արծվաշեն գյուղը, որը ռազմավարական նշանակություն ուներ ՀՀ զինված ուժերի համար: Անհավասար մարտում ընկան նաև 12 քաջ հայրողիկներ: Երկրի համար այդ ծանր օրերին սպարապետ Վազգեն Սարգսյանը (այն ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար) կոչով դիմեց երիտասարդությանը՝ զինվորագրվել մահապարտների խմբին: Կոչին արձա-

գանքողները շատ-շատ էին, սակայն ընտրվեց շուրջ 500 քաջորդիներից բաղկացած մի խումբ, որը կոչվեց «Արծիվ» մահապարտների գունդ: Սպարապետ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ գունդը մարտի դաշտ մտավ և այդ օրհասական շրջանում վճռական բեկում մտցրեց պատերազմում: Օգոստոսի 28-ին Շահեն Մեղրյանին հաջողվեց ազատագրել Գյուլիստանը և շրջակա մի շարք բնակավայրեր: 1992 թվականի սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին ազերիական բանակն ուժասպառ լինելով՝ դադարեցրեց հարձակումը, և հայկական ուժերը անցան հակահարձակման, ազատագրեցին Քաշաթաղի, Կովսականի տարածքների զգալի մասը: Թշնամին տվեց ավելի քան 5000 զոհված, կորցրեց 180 անուն զրահատեխնիկա: Խփված զրահատեխնիկայի մեծ մասը հայկական զինված ուժերը վերանորոգում էին և կարճ ժամանակում մտցնում մարտի դաշտ:



Վաղինիկ Բաղասյան

1993 թվականի հունվար ամսին, ուժերը վերադասավորելուց հետո, հակառակորդն սկսեց նոր լայնամասշտաբ հարձակում՝ նպատակ ունենալով Մարտակերտի հյուսիսային և Աղդամի տարածքներից աքցանի մեջ վերցնել հայկական զինված ուժերն ու ոչնչացնել: Կիչան, Սրիսավենդ, Վաղուհաս, Մոխրաթաղ, Գե-

տավան, Ճարտար և մի քանի այլ բնակավայրերի մոտակայքում հայոց զինված ուժերին հաջողվեց կանգնեցնել թշնամու զորախմբերը և ստիպել նահանջել: Հայկական զինված ուժերին հաջողվեց նաև ազատագրել Մարսանգի ջրամբարը, Մարտակերտ-Քաշաթաղ ողջ մայրուղին, Հակոբ Կամարին, Ներքին Հոռաթաղը և այլ հայկական բնակավայրեր: Այս մարտերում ազերիները կորցրեցին 1500 զինվորական, 32 զինտեխնիկա և 4 ինքնաթիռ:

Թիկունքը ամրապնդելու, ռազմաճակատի գիծը կրճատելու, երկարաժամկետ պատերազմից խուսափելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ կապը ամրապնդելու և Քարվաճառի ռմբակոծիչ կրակակետերը ոչնչացնելու համար Պաշտպանության կոմիտեն մշակեց օպերացիայի պլան: Որոշվեց օպերացիան սկսել հյուսիսարևելյան շրջանից, թշնամու հարավային ուժերի համար ստեղծել շրջապատման վտանգ՝ ստիպելով նրան նահանջել: Այստեղ կենտրոնացվեցին գրոհային ուժեր. ստեղծվեց 4 հարվածային խումբ: Հայկական զինված ուժերը հրամանատարներ Մոնթե Մելքոնյանի, Նորայր Դանիելյանի, Լեոնիդ Ազգալոյանի, Հովսեփ Հովսեփյանի և այլ զորահրամանատարների ղեկավարությամբ սկսեցին հարձակումը: Ռազմիկ Պետրոսյանի ղեկավարած հատուկ նշանակության ջոկատը 2.5 մետր հաստությամբ ձյան տակով թունել փորելով՝ կարողացավ զորքը և տեխնիկան անցկացնել թշնամու թիկունքում գտնվող Յանշաղ գյուղը և թիկունքից անսպասելի հարված հասցնել նրան: Մարտի 31-ին Նորայր Դանիելյանի գնդի ստորաբաժանումներն ազատագրեցին միջնադարյան հուշակոթող Դադիվանքի համալիրը: Նույն օրը Հովսեփ Հովսեփյանի հրամանատարությամբ գործող ստորաբաժանումներն ազատագրեցին Քարվաճառ շրջկենտրոնը: Ապրիլի 2-ին հայկական զինված ուժերն ընդհուպ մոտեցան Օմարի լեռնանցքին և, մասամբ ազատագրելով այն, դիրքավորվեցին: Քարվաճառի ազատագրման ժամանակ իրենց զորավարական տաղանդով փայլեցին Նորատ Տեր-Գրիգորյանցը, Արցախի հերոսներ հմուտ հրետանավոր զեներալ-մայոր Ժորա Գասպարյանը, հմուտ մարտավար Քրիստափոր Իվանյանը, Մամվել Բաբայանը, Անկախության բանակի հրամանատար Լեոնիդ Ազգալոյանը, պետական-քաղաքական գործիչ Վազգեն Մանուկյանը: Թշնամին տվեց ավելի քան 150 սպանված և կորցրեց 20 անուն տարբեր զինտեխնիկա, մեծ քանակությամբ զենք և զինամթերք:

1993 թվականի հունիսի 27-ին Նորայր Դանիելյանի գունդը, Սերգեյ Չալյանի և Վարդան Ավետիսյանի հրամանատարությամբ գործող ջոկատները, Շուշիի առանձին գումարտակը համակցված հարվածներով հարավարևելյան ուղղությամբ գրոհով ազատագրեցին Մարտակերտ շրջկենտրոնը:

1993 թվականի հուլիսի 22-23-ին հայկական զինված ուժերը միաժամանակ երեք ուղղությամբ՝ հյուսիսարևմտյան, հարավարևմտյան և հարավային, հարձակման անցան Ադդամ քաղաքի վրա: Համակցված հարվածներով հայկական զին-

ված ուժերին հաջողվեց ազատագրել հայկական հիմավորց Տիգրանակերտ քաղաքը, որը ազերիները անվանակոչել էին Ադդամ:

1993 թվականի հուլիս–սեպտեմբեր ամիսներին սկսվեցին դաշտային Արցախի ազատագրման գործողությունները: Ստեղծվեցին գրոհային ստորաբաժանումներ, որոնք հիմնականում ղեկավարում էին Հաղորթի պաշտպանական շրջանի հրամանատար Արթուր Աղաբեկյանը և Էջմիածնի կամավորական ջոկատների ընդհանուր հրամանատար Մանվել Գրիգորյանը: Հայկական ազատագրական ուժերին հաջողվեց թևանցումներով և դիվերսիոն գործողություններով *օգոստոսի 22-ին* ազատագրել Ֆիզուլին՝ պատմական Հայաստանի Կոտակ գավառի կենտրոնը: *Օգոստոսի 23-ին* ազատագրվեց Ջաբրայիլ շրջկենտրոնը, *օգոստոսի 31-ին՝* Կուրաթլու շրջկենտրոնը: *Թուրքիայի Հանրապետությունը 1993 թվականի սեպտեմբեր ամսին, ցանկանալով օժանդակել ուժերը սպառած ազերիական պետությանը, Հայաստանի Հանրապետության ողջ սահմանով տեղաբաշխեց իր 3-րդ դաշտային բանակը, այն բերեց մարտական վիճակի՝ պահանջելով Հայաստանի Հանրապետությունից իր զորքերը դուրս բերել ազատագրված տարածքներից:*

1993 թվականի հոկտեմբերի 22-ին հայկական ուժերը Արթուր Աղաբեկյանի, Մանվել Գրիգորյանի և այլ զորահրամանատարների ղեկավարությամբ փայլուն ռազմերթով և թևանցումներով ազատագրեցին Հորադիզը: Հայկական զորքերին բաժին հասավ մեծածավալ ռազմասավար: Հորադիզի



*Քրիստափոր Իվանյան և Մանվել Բաբայան*

ազատագրումով թշնամու Չանգելանյան խմբավորումը հայտնվեց շրջափակման մեջ: Հուժկու հարվածներով և թևային հրետակոծություններով նոյեմբերի 1-ին հայկական զինված ուժերին հաջողվեց ազատագրել հայկական պատմական Կովսական գավառը, որը ազերիները անվանակոչել էին Չանգելան: Ազերիների մնացորդ ուժերը մազապուրծ անցան Արաքս գետը՝ փախչելով Իրանի Իսլամական Հանրապետություն:

Ադրբեջանի Հանրապետության ղեկավարությունը, ֆինանսական մեծ ներդրումներ կատարելով զինված ուժերում, ղեկտեմբերի 6-ից սկսեց լայնամասշտաբ հարձակողական օպերացիայի իրականացում: Կենտրոնացնելով 30–40 հազար զինվոր և վարձկան, 240 տանկ, ՀՄՄ-1, ՀՄՄ-2, ՋՓ, մի քանի հարյուր թնդանոթ և ականանետ, 40 մարտական ինքնաթիռ և ուղղաթիռ՝ բանակը բաժանեց 4 հարվածային զորախմբերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր մարտական խնդիրը: 1-ին

հարվածային զորախումբը հարձակվելով հյուսիսից՝ պետք է գրավեր Քարվաճառը և Քաշաթաղի շրջանները: 2-րդ զորախումբը պետք է գրավեր Մարտակերտի շրջանը՝ Մարտակերտ–Քարվաճառ մայրուղով: 3-րդ զորախումբը պետք է գրավեր Աղդամի շրջանը: 4-րդ զորախումբը, հարձակվելով հարավարևմտյան կողմից, պետք է գրավեր Հորադիզը, Ֆիզուլին և հարավային կողմից հարձակվեր Քաշաթաղի վրա: Դեկտեմբերի 11-ից 14-ը անել մարտեր տեղի ունեցան Քարվաճառի, Ֆիզուլու, Աղդամի, Մարտունու ռազմաճակատներում, որտեղ հայկական զորախմբերը, օգտագործելով խաբուսիկ տեղաշարժերի մարտավարությունը, անցան լայնածավալ հակահարձակման: Դեկտեմբերի 27-ից 31-ը հայկական զինված ուժերը վերջնականորեն հետ շարժեցին հակառակորդին դեպի ելման դիրքեր: Այդ մարտերում հակառակորդը կորցրեց ավելի քան 1000 զինվոր, 10 տանկ և 12 այլ զրահատեխնիկա:

Սակայն 1994 թվականի հունվար–փետրվար ամիսներին ադրբեջանական ղեկավարությունը համարելով իր բանակն անձնակազմով և ռազմական տեխնիկայով, ևս մեկ լայնածավալ հարձակումով փորձեց ռազմավարական նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը: Հատկապես խոշոր ճակատամարտեր տեղի ունեցան Հակոբ Կամարի, Մատաղիս բնակավայրերի մոտակայքում, Քարվաճառի ճակատում: Օմարի լեռնանցքի համար մարտերում աչքի ընկան հատուկ նշանակության «Թայֆուն» և Գազիկ Ստեփանյանի /հեթանոս Գազո/ ջոկատները:

Կատաղի մարտեր տեղի ունեցան նաև Աղդամի, Ֆիզուլու և Մարտակերտի ուղղությամբ: Աղդամի համար մղվող մարտերում հերոսի մահով ընկավ Վահագն Վարդևանյանը, որը վերջին պահին պայթեցնելով ձեռքի նռնակը՝ ոչնչացրեց թշնամու հրամանատարին: Հետմահու նրան շնորհվեց «Արցախի հերոս» կոչումը: Մայիսի սկզբին հայկական զինված ուժերը հաստատուն դիրքային մարտեր էին մղում հակառակորդի հետ բոլոր ճակատներով:



*Արցախյան ազատամարտի ինքնապաշտպանական ուժերի հաղթանակած հրամանատարներ*

*1994 թվականի մայիսի 12-ին* ուժի մեջ մտավ Միջին Ասիայի Բիշքեկ քաղաքում Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության, ԼՂՀ և Ադրբեջանի Հանրապետության միջև զինադադարի համաձայնագիրը (տե՛ս հավելված 2):

Հայկական զինված ուժերը ամուր մարտավարական դիրքեր գրավեցին: Այս



պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմը տվեց ավելի քան 25000 զոհ և կորցրեց 27 մարտական ինքնաթիռ, 23 մարտական ուղղաթիռ, 186 տանկ, 215 այլ տեսակի զրահամեքենա, 16 «Գ-րադ» կայանք և այլ զենք ու զինտեխնիկա:

Հաղթանակը ձեռք բերվեց վեց հազար ազատամարտիկների կյանքի գնով: Արցախյան պատերազմի բովում ծնվեց մեր նորանկախ պետության ազգային կանոնավոր բանակը:



## Հայկական բանակի կադրերի պատրաստման համակարգը

Բանակի սպայական կազմը վարչական-իրավական անձանց խումբ է, որն ունի զինվորական մասնագիտական պատրաստականություն և զինվորական կոչումներ:

Սպայական կազմը ցանկացած բանակի ողնաշարն է, ռազմական շինարարության խնդիրների գլխավոր կազմակերպիչն ու իրականացնողը, երկրի պաշտպանության և անվտանգության երաշխավորը:

Ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ ներկայումս սպայական կազմի մասնագիտական հմտության, արհեստավարժության, տոկունության, անձնագրիության և հայրենիքին ու ժողովրդին նվիրվածության վրա է հիմնված զինված ուժերի մարտական պատրաստականությունը:

Հայաստանի Առաջին Հանրապետության սպայական կազմը, ինչպես գիտենք, բաղկացած էր ցարական Ռուսաստանի բանակում ծառայած և ռուսական զինվորական ուսումնական հաստատություններ ավարտած սպաներից: Արժե մեկ անգամ ևս հիշատակել ցարական բանակում



Նորատ Տեր-Գրիգորյանց

ծառայած հայազգի սպայական կազմի այն ներկայացուցիչներից մի քանիսին, որոնց շնորհիվ կարճ ժամանակում ստեղծվեց Հայաստանի Առաջին Հանրապետության բանակը: Նրանք են՝ Հովհաննես Հախվերդյան, Թովմաս Նազարբեկյան, Քրիստափոր Արարատյան, Մովսես Միրիկյան, Արսեն Գոլովխանյան և շատ ու շատ ուրիշներ:

Հայաստանի Երրորդ Հանրապետությունը, որ ծնունդ առավ Խորհրդային Միության փլուզման նախօրյակին, քաղաքական ծանր իրադրության պայմաններում, իր գոյությունը, առավել ևս՝ անկախությունը պահպանելու համար պետք է հենց առաջին օրերից ունենար **կազմակերպված, կոռ բանակ: Եվ այն ստեղծվեց:**

Ահա Հայաստանի նորանկախ հանրապետության այն բարձրաստիճան սպաները, որոնք արձագանքելով մայր հայրենիքի կոչին, երկրի համար ամենաձանր

Արցախյան գոյամարտի օրերին Հայաստան ժամանեցին ու կանգնեցին հայկական բանակի կառուցման ակունքներում՝ Նորատ Տեր-Գրիգորյանց, Հրաչյա Անդրեասյան, Քրիստափոր Իվանյան, Գուրգեն Դալիբալբախյան, Արկաղի Տեր-Թադևոսյան, Սկրտիչ Աբրահամյան, Մուրազ Սարգսյան, Միքայել Հարությունյան, Սեյրան Օհանյան և ուրիշներ:



*Սերժ Սարգսյան*

Արցախի համար օրհասական ժամանակամիջոցում, երբ մահու և կենաց կռիվ էր մղվում թուրք-ազերիների բռնատիրական նկրտումների դեմ, պայքարի բովում ծնունդ առան քաղաքացիական մասնագիտություն ունեցող, սակայն ամբողջ էությամբ զինված պայքարին, զինվորական ծառայությանը նվիրված բազմաթիվ հայորդիներ, որոնցից շատերը հետագայում դարձան բարձրաստիճան գորահրամանատարներ, պետական ու քաղաքական գործիչներ (Վազգեն Սարգսյան, Սերժ Սարգսյան, Վազգեն Մանուկյան, Սամվել Բաբայան, Մանվել Գրիգորյան, Արթուր Աղաբեկյան և ուրիշներ): Սակայն նախկին Խորհրդային Միության սպայական կադրերից և մի բուռ երիտասարդ հայրենասերներից բաղկացած կազմը արդի պայմաններում ծավալվող բանակի պահանջներին համապատասխան, թերևս, ի գործու չլինելը ամբողջովին լուծել զինված ուժերի առջև ծառայած խնդիրները, եթե Հայաստանի Հանրապետությունը միջոցներ չձեռնարկեր նոր զինվորական կադրեր պատրաստելու և գործերում սպայական կադրերի մասնագիտական-մարտավարական պատրաստականությունը բարձրացնելու համար: Եվ հանրապետությունը լուծեց սպայական նոր կադրեր պատրաստելու խնդիրը. կարճ ժամանակում ստեղծվեցին զինվորական ուսումնական հաստատություններ, իսկ գործերում սպայական կադրերի մասնագիտական-մարտավարական պատրաստության բարձրացման համար մշակվեցին և ներդրվեցին հրամանատարական պատրաստության ծրագրեր: Ջորջերում սպայական կազմի մասնագիտական-մարտավարական պատրաստականության մակարդակի բարձրացման գործընթացում դժվար է գերազնահատել այն ներդրումը, որ ունեցան պաշտպանության նախարարներ Վազգեն Սարգսյանը (1991–1992 թթ., 1995–1999 թթ.), Վազգեն Մանուկյանը (1992–1993 թթ.), Սերժ Սարգսյանը (1993–1995 թթ., 2000–2008 թթ.), գլխավոր շտաբի պետ Միքայել Հարությունյանը, փոխնախարարներ Սկրտիչ Աբրահամյանը,



*Վազգեն Մանուկյան*

Անատոլի Ջինևիչը, Քրիստափոր Իվանյանը, մարտական պատրաստության վարչության պետ Մուրազ Սարգսյանը, հրետանու վարչության պետ Վլադիմիր Հայրապետյանը, ինժեներական զորքերի պետ Աշոտ Մարդանյանը, հակաօդային պաշտպանության զորքերի պետ Սերգեյ Գուրոբյանը:



Միքայել Հարությունյան



Սկրսիչ Աբրահամյան



Անատոլի Ջինևիչ



Քրիստափոր Իվանյան

Սպայական կադրեր պատրաստելու համար այժմ Հայաստանի Հանրապետությունում **գործում են՝**

- Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը. ստեղծվել է ՀՀ կառավարության 1994 թ. հունվարի 24-ի որոշմամբ, նախ որպես բազմաբնույթ հրամանատարական ուսումնարան: Հետագայում վերակազմավորվել է որպես ռազմական ինստիտուտ (ինստիտուտի առաջին պետ գեներալ-մայոր Սերգեյ Մարտիրոսյան): Ուսուցման տևողությունը 4 տարի է, պատրաստում է **մտտեհրաձգային և հրետանային** սպայական կադրեր:
- Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտը. ստեղծվել է ՀՀ կառավարության 1994 թ. սեպտեմբերի 20-ի որոշմամբ, որպես թռիչքատեխնիկական ուսումնարան: 2001-ին վերակազմավորվել է որպես ռազմական ավիացիոն ինստիտուտ (ինստիտուտի պետ գնդապետ Դանիել Բալայան): Ուսուցման տևողությունը՝ 4 տարի, պատրաստում է թռչող սպարապետների թռիչքային շահագործման, թռչող սպարապետների և շարժիչների տեխնիկական շահագործման, կապի միջոցների շահագործման և ՀՕՊ-ի միջոցների շահագործման սպայական կադրեր:
- Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Ուսուցման տևողությունը 5 տարի է: Պատրաստում է զինվորական դիրիժորներ:

Հայաստանի զինված ուժերի համար սպայական (հրամանատարական) կադրեր են պատրաստվում նաև օտարերկրյա ռազմական ուսումնական հաստատություններում.

1. Միխայլովի ռազմական հրետանային ակադեմիա (ք. Սանկտ–Պետերբուրգ):
2. Օդատիեզերական պաշտպանության ռազմական ակադեմիա (ք. Տվեր):



Մուրազ Մարգարյան

Վլադիմիր Հայրապետյան

Աշոտ Մարդանյան

Մերգեյ Գորգորյան

3. Մոսկվայի բարձրագույն ռազմական հրամանատարական ուսումնարան (զորային հետախուզություն):
4. Ռ-յազանի բարձրագույն օդադեսանտային հրամանատարական ուսումնարան:
5. Չերեպովեցի ռադիոէլեկտրոնիկայի ռազմական ինժեներական ինստիտուտ:
6. Ն.Նովգորոդի բարձրագույն ռազմաինժեներական հրամանատարական ուսումնարան:
7. Կոստրոմայի Ռ-ԶԿՊ ռազմական ակադեմիա:
8. Վորոնեժի բարձրագույն ռազմավիագիտն ինժեներական համալսարան:
9. Պենզայի հրետանային ինժեներական ինստիտուտ:
10. Տուլայի հրետանային ինժեներական ինստիտուտ:
11. Ռ-յազանի ռազմական ավտոմոբիլային ինստիտուտ:
12. Օմսկի տանկային ինժեներական ինստիտուտ:
13. Ռազմական ավիացիոն ինժեներային ակադեմիա (ք. Մոսկվա):
14. Վոլսկի թիկունքի բարձրագույն ռազմական ուսումնարան:
15. Ռազմական բժշկական ակադեմիա (ք. Սանկտ–Պետերբուրգ):
16. Հունաստանի Հանրապետության ցամաքային զորքերի ռազմական ակադեմիա:

**Ուսուցման ժամկետը՝ 5 տարի:**

Բոլոր դիմորդները, բացի տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված ընդունելության քննություններից, անցնում են նաև խորացված բժշկական զննության և հանձնում ֆիզիկական պատրաստության քննություն: Ֆիզիկական պատրաստության ընդունելության քննության վարժություններն ու գնահատականները տրված են **հավելված 3-ում:**

# ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ



## Օղային հարձակման միջոցների դեմ պայքարի ձևերը

Մարտի դաշտում ջոկի հիմնական խնդիրներից մեկը հակառակորդի ցածր թռչող ինքնաթիռների և ուղղաթիռների դեմ պայքարն է: Փորձը ցույց է տալիս, որ մոտոհրաձգային ստորաբաժանումներն ընդունակ են իրենց հաստիքային զենքի կրակով ոչնչացնել հակառակորդի ցածր թռչող ինքնաթիռներն ու ուղղաթիռները: Հակառակորդի ինքնաթիռների և ուղղաթիռների դեմ պայքարելու համար պետք է լավ իմանալ դրանց մարտական բնութագրերը, տարբերիչ նշանները (տարբերանշանները), ինչպես նաև օղային նշանակետերի վրա հրաձգության կանոնները: Ինքնաթիռների և ուղղաթիռների պետական պատկանելիությունը որոշում են տարբերիչ նշաններով: Այդ նշանները գծապատկերվում են ինքնաթիռների և ուղղաթիռների թևերին, կողերին, ուղղահայաց պոչաթևին:

Մարտական ուղղաթիռները նշանակետերին մոտենում են փոքր բարձրություններից և, օգտագործելով տեղանքի անհարթությունները, զրոհում են ցածր բարձ-



Հայաստան



Ռուսաստան



Ֆրանսիա



Իրան



Վրաստան



Մեծ Բրիտանիա



Ադրբեջան



Թուրքիա

րությունից, հարված հասցնում և հեռանում: Ուղղաթիռի գործողությանը բնորոշ է հանկարծակիությունը, որը զգալիորեն մեծացնում է հարձակման արդյունավետությունը:

Հակառակորդի օդային նշանակետերի վրա հրաձգությունը կատարվում է երկու եղանակով՝ *ուղեկցող* կրակով կամ *արգելափակիչ կրակով*:

**Ուղեկցող** կրակը կիրառելի է փոքր արագությամբ թռչող նշանակետերի վրա (տրանսպորտային ինքնաթիռներ, ուղղաթիռներ, ճախրաթիռներ):

Ուղեկցող կրակի էությունն այն է, որ ավտոմատն անընդմեջ հարկավոր է պահել նշանակետի թռիչքի ուղղությամբ, *առաջանշանառմամբ* և ժամանակ առ ժամանակ արձակել կրակահերթ զենքի առավել ճշգրիտ նշանառության պահին: Փողի առանցքը հարկավոր է ուղղել ոչ թե նշանակետի վրա, այլ նշանակետից առաջ (առաջանշանառում), ուր տեղափոխվում է նշանակետը գնդակի թռիչքի ընթացքում:

Նշանառությունը դրվում է «3»-ի կամ «II»-ի վրա: Եթե հրաձգության ժամանակ լավ երևում են գնդակների հետագծերը, սպա

չդադարեցնելով կրակը՝ զենքը հարկավոր է տեղաշարժել դեպի նշանակետը՝ մինչև գնդակները դիպչեն նշանակետին: Ջուրը կրակ է բացում հրամանատարի հրամանով՝ երկար կրակահերթով:

Առաջանշանառումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝  $U = V_p \cdot t_q$ , որտեղ  $U$ -ն առաջանշանառումն է,  $V_p$ -ն՝ թիրախի արագությունը (*մ/վրկ*),  $t_q$ -ն գնդակի թռիչքի ժամանակը (*վրկ*): Առաջանշանառման մոտավոր հաշվարկը տրված է աղյուսակում:

Նշանառությունը դրվում է «3»-ի կամ «II»-ի վրա: Եթե հրաձգության ժամանակ լավ երևում են գնդակների հետագծերը, սպա

չդադարեցնելով կրակը՝ զենքը հարկավոր է տեղաշարժել դեպի նշանակետը՝ մինչև գնդակները դիպչեն նշանակետին: Ջուրը կրակ է բացում հրամանատարի հրամանով՝ երկար կրակահերթով:

Առաջանշանառումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝  $U = V_p \cdot t_q$ , որտեղ  $U$ -ն առաջանշանառումն է,  $V_p$ -ն՝ թիրախի արագությունը (*մ/վրկ*),  $t_q$ -ն գնդակի թռիչքի ժամանակը (*վրկ*): Առաջանշանառման մոտավոր հաշվարկը տրված է աղյուսակում:

Առաջանշանառումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝  $U = V_p \cdot t_q$ , որտեղ  $U$ -ն առաջանշանառումն է,  $V_p$ -ն՝ թիրախի արագությունը (*մ/վրկ*),  $t_q$ -ն գնդակի թռիչքի ժամանակը (*վրկ*): Առաջանշանառման մոտավոր հաշվարկը տրված է աղյուսակում:

Նշանակետը և նրա արագությունը	Հրաձգության հեռավորությունը					
	100մ		300մ		500մ	
	Առաջանշանառումը					
	Մետրերով	Նշանակետի իրանով	Մետրերով	Նշանակետի իրանով	Մետրերով	Նշանակետի իրանով
Ուղղաթիռ 50 մ/վրկ	10	1	30	3	50	5
Տրանսպորտ. ինքնաթիռ 100 մ/վրկ	25	1	75	3	125	5

Նշանակետի **ուղեկցումով** հրաձգության եղանակը կիրառելի չէ մեծ արագությամբ (150 մ/վրկ) թռչող ինքնաթիռների համար:

Նշանակետերի վրա ստորաբաժանումը կենտրոնացված կրակ է բացում ինքնաթիռի թռիչքի ուղղությունից առաջ այն հաշվով, որ գնդակների հետագծի խորձը հատվի նշանակետի հետ: Հրաձգության այդ ձևը կոչվում է **արգելափակիչ կրակ**:

Ինքնաթիռների, ուղղաթիռների վրա կրակ է բացվում գրահահար-հրկիզող և լուսաժրող գնդակներով, դրանց բացակայության դեպքում՝ սովորական գնդակներով: Հարկավոր է հիշել, որ հրաձգության բոլոր դեպքերում հրաման տալու և հրաձգությանը պատրաստ լինելու համար պահանջվում է 3–4 վայրկյան, որի ընթացքում ինքնաթիռը կանցնի 400–600 մ: Ուստի, ինքնաթիռը պետք է հայտնաբերել դիրքերից 2000–2500 մ հեռավորության վրա, որպեսզի դիրքերից 800–900 մ հեռավորության վրա ստեղծվի կրակի գոտի:



*Ծնկած և կանգնած կրակելու դիրքերը*

Օդային նշանակետերի վրա հրաձգություն կատարվում է տարբեր դիրքերից՝ պառկած, ծնկած, կանգնած, խրամատից՝ խրամատի պատին մեջքով հենված:



## ՀԻՇԻՐ

Օդային նշանակետերի վրա արգելափակիչ կրակ բացելու համար պետք է դրանք հայտնաբերել դիրքերից 2000–2500 մ և կրակը բացել դիրքերից 800–900 մ հեռավորության վրա:

## ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվե՛ք ինքնաթիռների և ուղղաթիռների մարտական բնութագրերը:
2. Ինքնաթիռների և ուղղաթիռների վրա կրակ բացելու եղանակները:
3. Ի՞նչ է առաջանշանառումը:
4. Ցուցապաստառի վրա ցո՛ւյց տվեք տարբեր պետություններին պատկանող ինքնաթիռների և ուղղաթիռների տարբերանշանները:
5. Դաշտային պայմաններում ցուցադրե՛ք օդային նշանակետի վրա կրակելու դիրքերը:



## Ձինվորի գործողությունները ժամանակակից համագորային մարտում



### Ձինվորի պարտականությունները մարտի դաշտում

Ժամանակակից մարտում անշեղորեն բարձրանում է զինվորի դերը:  
Ձինվորը **պարտավոր է՝**

- իմանալ դասակի, ջոկի և իր մարտական առաջադրանքը,
- ուսումնասիրել զենքի մարտական հնարավորությունները, վարպետորեն տիրապետել դրանք, իմանալ մարտական մեքենաների մարտավարական-տեխնիկական բնութագրերը, դրանց խոցելի տեղերը,
- մարտի բոլոր տեսակներում մշտապես կատարել դիտարկում, ժամանակին հայտնաբերել հակառակորդին, բացահայտել նրա գործողությունը և այդ մասին զեկուցել իր հրամանատարին,
- իմանալ ամրաշինական կառույցների սարքավորման հաջորդականությունը, կարողանալ ըստ ժամկետների սարքավորել խրամատները և թաքստոցները,
- հմտորեն օգտագործել տեղանքը և տեղական առարկաները մարտական գործողություններ վարելու համար, կատարել քողարկում,
- հայտնաբերել, նշել և զեկուցել հրամանատարին ականների և պայթուցիկ նյութերի մասին,
- մարտի ընթացքում ցուցաբերել քաջություն, նախաձեռնություն, վճռականություն և հմարամտություն, կարողանալ ցույց տալ առաջին բուժօգնություն,
- իմանալ հակառակորդի ինքնաթիռների, ուղղաթիռների և այլ օդային նշանակետերի տարբերանշանները և կարողանալ հրաձգային զենքից կրակ բացել ցածրաթռչիչ այդ նշանակետերի վրա,
- մարտի ընթացքում պաշտպանել հրամանատարին, նրա վիրավորվելու կամ զոհվելու դեպքում համարձակորեն ստանձնել ստորաբաժանման հրամանատարությունը,
- առանց հրամանատարի թույլտվության չլքել իր տեղը մարտի դաշտում, վիրավորվելու դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ինքնօգնության և փոխօգնության համար և շարունակել առաջադրանքի կատարումը. եթե հրամայվի գնալ բուժկետ, իր հետ վերցնել զենքը, բուժկետ գնալ չկարողանալու դեպքում զենքով սողալ դեպի թաքստոց և սպասել բուժակներին,
- կարողանալ արագ և ճարպկորեն լիցքավորել պահեստատուփերը, ժապավենները, հետևել զինամթերքի ծախսին և մարտական մեքենայի լցավորման



նը, ժամանակին զեկուցել հրամանատարին զինամթերքի ու վառելիքի 50 և 75 տոկոսը ծախսելու մասին, տեխնիկայի և սպառազինության խափանման դեպքում արագ ձեռնարկել դրանք նորոգելու միջոցներ:

**Ջինվորի տեղաշարժը մարտում:** Ժամանակակից մարտում զինվորը, գտնվելով ռազմերթում, պաշտպանությունում, հարձակման մեջ, հետախուզությունում, կարող է գործել հետիոտն և մարտական տեխնիկայով:

Պատահական և անվճռական տեղաշարժը բերում է մեծ կորուստների և առաջադրված խնդրի խափանման: Մարտում տեղաշարժման յուրաքանչյուր մետրը իր ներդրումը պետք է ունենա մարտական խնդիրը հաջող կատարելու համար: Մարտի դաշտում զինվորը տեղաշարժվում է գիտակցաբար, ճիշտ տեղաշարժվելով նա ոչ միայն խուսափում է խոցվելու հնարավորությունից, այլև ցուցաբերում է հնարամտություն, մոլորության մեջ գցում հակառակորդին, կանխում նրան: Ջինվորը դիրքից դիրք տեղաշարժվելիս հրաձգային զենքի դիպուկ կրակից խուսափելու նպատակով 3–5 վայրկյանից ավելի չպետք է բաց լինի հակառակորդի համար: Ընդ որում, նա երբեք ուղղաձիգ դիրքով և ուղիղ գծով չպետք է շարժվի իր թաքստոցից: Հակառակորդի հրաձիգները, սովորաբար, նշանառության տակ են պահում բացահայտ ծածուկ տեղերը, առանձնապես եթե հայտնի է, որ այնտեղ գտնվում են մարդիկ: Տեղաշարժվելուց առաջ զինվորն ըստ հրամանի կամ ինքնուրույն զենքը դնում է ապահովիչին:



*Ջինվորի տեղաշարժը մարտում՝ վազելազք*

Հետիոտն գործողությունների ժամանակ, կախված տեղանքի բնույթից և հակառակորդի կրակի ազդեցությունից, զինվորը կարող է տեղաշարժվել **արագ քայլով կամ վազքով, վազելազքով և սողանցելով:**

**Արագ քայլով կամ վազքով** հաղթահարվում են տեղանքի այն հատվածները, որոնք դուրս են հակառակորդի դիտարկումից և կրակից: Արագ քայլի ժամանակ կատարվում է 130–140 քայլ մեկ րոպեում, իսկ վազքի ժամանակ՝ 180–190 քայլ: Քայլերի մեծությունը՝ 80–90 սմ:

**Վազելազքն** իրականացվում է հակառակորդին արագ մոտենալու համար: Ջինվորը կարող է տեղաշարժվել ամբողջ հասակով կամ կռացած: Վազելազքի երկարությունը կարող է լինել 20–40 քայլ, որը պայմանավորված է տեղանքով և հակառակորդի կրակով: Նախնական հրամանով զինվորը նշում է տեղաշարժման

ուղղությունը և կանգառի ծածուկ տեղերը, իսկ կատարողական հրամանով՝ արագորեն ելնում տեղից և սրընթաց վազում նշված ուղղությամբ: Վազելազքն ավարտելուց հետո զինվորը կտրուկ պառկում է գետնին և աննկատ սողում աջ կամ ձախ՝ դեպի նշված տեղը, գրավում հարմար դիրք դիտարկման, կրակ վարելու և մյուս զինվորների վազելազքն ապահովելու համար: Պետք է հիշել՝ *ինչքան մոտ է հակառակորդը, և ինչքան ուժգին է նրա կրակը, այնքան կարճ պետք է լինի վազելազքը*: Ջենքի դիրքը վազելազքի ժամանակ լինում է ըստ զինվորի հայեցողության: Ջուրը կարող է կատարել վազելազք մեկ-մեկ, խմբերով կամ միաժամանակ՝ ամբողջ կազմով:

**Սողանցումը** կիրառվում է մարտական իրավիճակում՝ հակառակորդի ուժեղ կրակի ներքո աննկատ նրան մոտենալու կամ տեղանքի անհարթ ռելիեֆը և հակառակորդի կողմից դիտարկվող հատվածները գաղտնի հաղթահարելու համար, ինչպես նաև հետախուզության ժամանակ հակառակորդի ժամապահի կամ դիտորդի վրա հանկարծակի հարձակվելու և գերելու համար: Սողանցումը, կախված տեղանքի պայմաններից, իրականացվում է *սողեսող, կիսաչորեքթաթ և կողքի վրա*: Սողանցման, ինչպես և վազելազքի ժամանակ տրվում են նույն հրամանները: Ըստ նախնական հրամանի զինվորը նշում է շարժման ուղղությունը, դադարի և կրակ բացելու ծածուկ տեղերը, իսկ կատարողական հրամանով սողանցում է այդ ձևերից որևէ մեկով: Անկախ սողանցման ձևերից՝ զինվորը պետք է անընդմեջ կատարի հակառակորդի դիտարկում, հրամանատարին անհապաղ զեկուցի հայտնաբերած նշանակետերի կամ հակառակորդի գործողությունների մասին և մշտապես գտնվի կրակ վարելուն պատրաստ վիճակում:



*Սողեսող առաջընթաց*



*Սողանցումը կիսաչորեքթաթ*

Սողեսող անցնելու համար կիպ պառկել գետնին, աջ ձեռքով բռնել գենքի փոկի վերին քիվից և դնել աջ ձեռքի նախաբազկին (կարելի է նաև զենքը պահել իրանին ուղղահայաց, փողն ուղղված դեպի ձախ): Չգել աջ (ձախ) ոտքը և միաժամանակ ձախ (աջ) ձեռքը մեկնել առաջ որքան

հնարավոր է, ծավաճ ոտքով հրվելով առաջ, իրանը տեղաշարժել առաջ, ձգել մյուս ոտքը, մեկնել մյուս ձեռքը և շարունակել շարժումը նույն կարգով: Սողանցման ժամանակ գլուխը (ոտնաթաթերի կրունկները) չբարձրացնել :

Կիսաչորեքթաթ սողալու համար ելնել ծնկի վրա և հենվել նախաբազկին կամ ձեռքի դաստակին: Չգել ծալված աջ (ձախ) ոտքը կրծքի տակ, միաժամանակ ձախ (աջ) ձեռքը մեկնելով առաջ՝ իրանը շարժել առաջ մինչև աջ (ձախ) ոտքի ուղղվելը, առաջ բերել կրծքի տակ մյուս ծալված ոտքը և մեկնելով մյուս ձեռքը՝ շարունակել շարժումը նույն կարգով: Ձեռքը դնել նախաբազկի վրա, ինչպես սողանցման ժամանակ: Ձեռքը կարելի է վերցնել նաև իրանին ուղղահայաց:

Կողքի վրա սողանցման համար պառկել ձախ կողքի վրա, առաջ մեկնել ծալված ձախ ոտքը, հենվել ձախ ձեռքի նախաբազկին, աջ ոտքի կրունկով հենվել գետնին (որքան հնարավոր է իրանին մոտ), աջ ոտքը ուղղելով իրանը հրել առաջ՝ չփոխելով ձախ ոտքի դիրքը, որից հետո շարունակել շարժումը նույն կարգով: Ձեռքը բռնել աջ ձեռքով՝ ձախ ոտքի ազդրին մոտ:

Ընտրելով կրակային դիրքը՝ անհրաժեշտ է դիրքավորվել այնպես, որ հնարավոր լինի դիտարկել հակառակորդի գործողությունները, բայց մնալ աննկատ (օգտագործել տեղի առարկաների ստվերոտ կողմը):

**Ձինվորը պաշտպանությունում:** Պաշտպանությունում զինվորը գործում է ջոկի կազմում: Հնտորեն օգտագործելով իր զենքը, ինժեներային սարքավորումները, տեղանքի պայմանները՝ նա կարող է զգալի կորուստ պատճառել մի քանի անգամ գերազանցող հակառակորդին:

Ստանալով ջոկի հրամանատարի մարտական առաջադրանքը՝ զինվորը **պարզում է՝**

- կողմնորոշիչները,
- հակառակորդի կազմը, դիրքերը և գործողությունների բնույթը,
- դասակի, ջոկի և իր խնդիրը, կրակագիծը և գնդակոծման լրացուցիչ հատվածը, ցամաքային և օդային նշանակետերի դիտարկման և դրանց վրա կրակ վարելու կարգը, դասակի կենտրոնացված կրակի տեղամասի այն հատվածները, որոնց վրա պետք է ուղղվի ջոկի կրակը,
- հարևանների խնդիրները,
- ազդարարման, կառավարման, փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը,
- պաշտպանությանը պատրաստ լինելու ժամանակը:

Առաջադրանքը ստանալուց հետո զինվորը ձեռնամուխ է լինում տեսադաշտի և գնդակոծման գոտու մաքրմանը, ինչպես նաև խրամատի սարքավորմանը:

Ձինվորը հակառակորդի վրա կրակ է բացում, երբ վերջինս մոտենում է ջոկի *ներգործուն կրակի* հեռավորությանը: Պաշտպանության առջևի եզրին հակառակորդի մոտենալուն պես հրաձգային զենքից կրակը հասցվում է առավելագույն լարվածության: Կրակն ավելի արդյունավետ է դառնում, երբ հակառակորդն սկսում է հաղթահարել արգելափակոցները:

Տանկերի գրոհը հետ մղելիս պետք է հետևակը կտրել տանկերից և ոչնչացնել:

Ջրահամեքենաների դիտանցքերի վրա կարելի է կրակ բացել 200 մետրից: Ջոկի դիրքին հակառակորդի տանկի անմիջական մոտենալու դեպքում՝ դիրքից 25–30 մ հեռավորությունից տանկին մոտ գտնվող զինվորը նետում է ձեռքի հակատանկային նռնակը: Եթե տանկը չի խոցվում, զինվորը խրամատում վազում է մի կողմ կամ պառկում խրամատի հատակին, և երբ տանկը հաղթահարում է խրամատը, զինվորն արագ ելնում է տեղից և հակատանկային նռնակ նետում տանկի վրա: Երբ հակառակորդը գտնվում է դիրքից 30–40 մ հեռավորության վրա, ջոկի հրամանատարի հրամանով /կամ ինքնուրույնաբար/ զինվորը նրա վրա նետում է նռնակներ,



*Մարտի նետվելը*

իսկ երբ ներխուժում է դիրք, նրան ոչնչացնում է դիմահար կրակով, նռնակներով, ձեռնամարտում: Հակառակորդի գրոհը հետ մղելուց հետո զինվորն անմիջապես կարգի է բերում իր զենքը, լրացնում զինամթերքը և պատրաստվում է հետ մղելու հաջորդ գրոհը:

**Հիշի՛ր,** պաշտպանությունում մեծ նշանակություն ունի առավել կարևոր նշանակետերն ինքնուրույն ընտրելու և դրանց վրա կործանիչ կրակ բացելու ունակությունը, ինչ-

պես նաև կրակի ճշգրտումը:

**Ջինվորը հարձակման ժամանակ:** Հարձակվելիս զինվորը գործում է ջոկի կազմում: Ստանալով մարտական առաջադրանք՝ զինվորը **պարզում է՝**

- կողմնորոշիչները,
- հակառակորդի կազմը և գործողության բնույթը, կրակային միջոցների տեղաբաշխումը,
- դասակի, ջոկի և իր խնդիրը, իր տեղը շղթայում,
- ոչնչացման ենթակա նշանակետերը և կրակ վարելու կարգը,
- այն տանկի համարը և տարբերանշանը, որին հետևելու է ջոկը, ինչպես նաև հրետանու և այլ կրակային միջոցներ օգտագործելու կարգը,
- ՀՄՄ /ՁՓ/-ից իջնելու տեղը, արգելքներ հաղթահարելու կարգը,
- ազդարարման, կառավարման և փոխգործողության ազդանշանները, դրանցով գործելու կարգը,
- հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը:

Հետիոտն հարձակվելիս զինվորը ստուգում է զենքը, զինամթերքը (անհրաժեշտության դեպքում համալրում է այն), խրամատից արագ դուրս գալու համար պատրաստում է աստիճանաձև հարմարանք կամ փոստրակ խրամուղու առաջնա-

յին թեքության վրա: Գիշերային պայմաններում հարձակվելիս զինվորն ուսումնասիրում է շարժման ուղղության տեղանքը, գիշերային կողմնորոշիչները, պահեստատու վրը լրացնում լուսածրող գնդակների փամփուշտներով:

Տանկը ելման դիրքին մոտենալուն պես ջոկի հրամանատարի հրամանով՝ «Ջո՛կ, պատրաստվի՛ր գրոհի», զինվորը լիցքավորում է զենքը, նախապատրաստում նռնակները, ավտոմատին միացնում սվին-դանակը, նշանառությունը դնում «1»-ի կամ «3»-ի վրա, ուղղում հանդերձանքը, որպեսզի չխանգարի խրամուղուց դուրս գալուն և տեղաշարժմանը: Ապա զբաղեցնում է իր տեղը շղթայում և տանկի կամ ՀՄՄ (ՁՓ)-ի հետևից շարժվում առաջ:

Հետիոտն գրոհելու համար, երբ ՀՄՄ /ՁՓ/-ը դուրս է գալիս սահմանված բնագիծ, զինվորներն արագ դուրս են գալիս մեքենաներից (հետիոտացվում են), գրավում իրենց տեղը ջոկի մարտակարգում՝ պահպանելով սահմանված տարածությունը, ընթացքից ուժեղ կրակ բացելով՝ շարունակում են գրոհել տանկի հետևից: Տեղանքն արդյունավետ օգտագործելու և ճիշտ կրակ վարելու



Տանկով ուժեղացված մոտոհրաձգային դասակը հարձակվելիս

նպատակով զինվորները շղթայով կարող են մի փոքր առաջ կամ մի կողմ շարժվել՝ չխախտելով շղթայի հարձակման ճակատի ընդհանուր ուղղությունը և չխանգարելով հարևանների գործողություններին: Եթե ջոկը փոխում է հարձակման ուղղությունը, զինվորին խստիվ արգելվում է փոխել իր տեղը ջոկի մարտակարգում: Հարձակման ժամանակ զինվորը պետք է հետևի աջ և ձախ հարևան զինվորներին, ինչպես նաև հրամանատարների ազդանշաններին և հստակորեն կատարի դրանք:

Հակառակորդի պաշտպանության առջևի գծից առաջ ականապայթուցիկ արգելափակոցները զինվորը հաղթահարում է տանկի հետևից, անցումով, ջոկի կազմում՝ միաշարասյուն կամ երկշարասյուն վազքով: Որից հետո զբաղեցնում է իր տեղը շղթայում և ուժգին կրակ բացելով՝ սրընթաց գրոհում է հակառակորդի վրա (դանդաղ շարժվող զինվորը հարմար թիրախ է հակառակորդի համար): Ընթացքից գրոհելիս նռնակ նետելու համար զինվորն ավտոմատը վերցնում է ձախ ձեռքը, իսկ աջով պայտուսակից հանում նռնակը՝ ձգանի լծակը պինդ սեղմելով նռնակի կմախքին: Ավտոմատը պահելով ձախ ձեռքում՝ ուղղում է նռնակի պահպանակի ծայրերը, ցուցամատով կամ միջմամատով բռնում օղակից և այն հանում բռնկիչից

ու անմիջապես նետում է նռնակը, ներխուժում հակառակորդի պաշտպանության առջևի զիծը, դիմահար ոչնչացնում հակառակորդին և առանց կանգ առնելու շարունակում գրոհը հրամանատարի կողմից նախօրոք նշված ուղղությամբ:

Գիշերով հարձակվելիս բացի սովորական հարցերից **նշվում են՝**

- խավար ժամանակ երևացող կողմնորոշիչները,
- հարձակման ուղղությունը (ազիմուտը),
- տանկի, ՀՄՄ (ՁՓ)-ի անցման տեղը և տարբերիչ նշանները,
- ականադաշտում, արգելափակոցում անցումի տեղը,
- տեղանքի լուսարձակման կարգը:

Գիշերային հարձակմանը նախապատրաստվում են ցերեկային ժամերին:

Պահեստատուփերը լրացվում են լուսածրող գնդակներով: Գիշերային հարձակումը կարող է լինել նաև ցերեկային հարձակման շարունակությունը:

**Հիշի՛ր**, գրոհի ժամանակ թեկուզ մեկ զինվորի առաջխաղացմանը պետք է անմիջապես աջակցեն մյուս զինվորները: Հայտնաբերելով հակառակորդի նահանջը՝ ջոկը պետք է անդադար հետապնդի նրան և ոչնչացնի կրակով:

**Զինվորը դետքում:** Գլխավոր ուժերից կտրված ստորաբաժանումները հետախուզություն կամ մարտական առաջադրանք կատարելիս հակառակորդին ժամանակին հայտնաբերելու և տեղանքը հետախուզելու համար ուղարկում են դետքային ջոկ՝ տեսողական և կրակային աջակցության հեռավորության վրա:

Դետքային ջոկի հրամանատարը, ստանալով առաջադրանքը, ընտրում է շարժման ուղղությունը կամ դուրս գալու վայրը, որոշում է գործողությունների կարգը, տալիս մարտական հրաման և հայտնում անցաբառը: Զինվորը, ստանալով որպես դետքային գործելու առաջադրանք, **պարզում է՝**

- տեղեկությունները հակառակորդի մասին,
- ջոկի և իր խնդիրը, շարժման ուղղությունն ու արագությունը, դիտարկման հատվածը,
- գործողությունների կարգը հակառակորդին հանդիպելիս,
- դիտարկման արդյունքների զեկուցման կարգը,
- ազդարարման, կառավարման, գործակցության ազդանշանները և դրանցով գործելու կարգը,
- հետախուզությունն սկսելու ժամանակը:

Զինվորի գործողությունների հաջողությունը կախված է մարտական խնդիրը կատարելու նրա պատրաստվածությունից:

Դետքայինները գործում են զույգերով, նրանցից մեկը նշանակվում է ավագ: Ավագը, սովորաբար, գնում է դետքի հետևից 20–30 մ հեռավորությամբ՝ պատրաստ նրան կրակով աջակցելու: Դետքայինները մանրակրկիտ գնում են տեղանքի առարկաները, հատկապես այնտեղ, որտեղ հնարավոր է հակառակորդի գաղտնի տեղակայումը: Նրանք գործում են գաղտնի և արագ՝ ուշադրություն դարձնելով հա-

կառավարողի ապաքողարկիչ նշաններին, այն է՝ մեքենաների և գրահատելանիկայի թրթուրների հետքերին, կոտորված ճյուղերին, տրորված խոտին, սննդի մնացորդներին, ճանապարհներին փոշեսյան առկայությանը, որոնք մնացել են հակառակորդի անցնելուց հետո: Տեղի առարկաներն սկզբում զննում են հեռվից և, երբ համոզվում են, որ հակառակորդ չկա, մոտենում են օբյեկտին: Նկատած ամեն ինչի մասին ավագը հաղորդում է հրամանատարին սահմանված ազդանշանով, օրինակ՝ «Տեսնում եմ հակառակորդին», «Ճանապարհն ազատ է», ու շարունակում առաջադրանքի կատարումը: Հակառակորդին հանկարծակի հանդիպելու դեպքում դետքային ջոկը կրակ է բացում, շրջանցում նրան և շարունակում առաջադրանքի կատարումը :

*Բնակավայրերի զննումն* սկսվում է հեռվից, ծայրամասից: Մեքենայով գործելիս ջոկի հրամանատարը մեքենան կանգնեցնում է թաքստոցում, հեռվից դիտարկում բնակավայրը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն տեղերին, որտեղ կարող է հակառակորդը տեղակայել իր պահակախումբը ու կատարել դիտարկում: Եթե հակառակորդ չի հայտնաբերված, ջոկը մոտենում է բնակավայրին, հարցուփորձ անում տեղաբնակներին, զննում մերձակա շինությունները՝ պատրաստ լինելով անմիջապես կրակ բացելուն:

Հետիոտն գործելիս բնակավայրի ծայրամաս են դուրս գալիս այգիների, բանջարանոցների և ոչ բնակելի շինությունների կողմից: Շինությունը զննում են մըշտապես զենքը պատրաստ վիճակում պահած, նայում են պատուհաններից, դռներից ներս, կատարում են գաղտնալսում: Ներս մտնելով՝ զննում են հատկապես նկուղը, վերնահարկը: Ավարտելով զննումը՝ անցնում են առաջ փողոցի եզրով, բակերով, այգիներով և այլ փակ տեղերով:

*Անտառի զննումը* կատարվում է անտառեզրից: Նախ բարձրադիր վայրից դիտարկում են բացատները, հետախուզական հայտանիշերով որոշում հակառակորդի առկայությունն անտառում: Եթե նա չի հայտնաբերված, շարժվում են առաջ՝ անցնելով արահետներով, կածաններով, ճանապարհներով: Հատուկ ուշադրություն է դարձվում ծառերի կատարներին, թավուտներին, ձորակների մուտքերին, հովիտներին և դրանց ելքերին, այն տեղերին, ուր հնարավոր է հակառակորդի դարանակալումը: Դուրս գալով անտառի հակառակ կողմը՝ դետքայինները ստուգում են առջևում փոված տեղանքը: Չհայտնաբերելով հակառակորդի՝ շարունակում են հետախուզությունը նշված ուղղությամբ:

*Գետի զննումն* սկսվում է գետեզրից: Ուշադրություն է դարձվում ինչպես ելման, այնպես էլ դիմացի ափերի մերձակա թփուտներին, խորխորատներին: Գետի մոտակայքում չհայտնաբերելով հակառակորդի՝ ջոկն սկսում է դիտարկել ջրային խոչընդոտները, որոշում է ափերի բնույթը, գետի լայնությունը, ջրի հոսքի արագությունը: Ծանձադուտ հայտնաբերելիս որոշում է նրա խորությունը, հատակի բնույթը և նշում գետանցի ուղղությունը:

Բարձունքի զննումը կատարվում է՝ շարժվելով նրա լանջերով կամ կողքից այն շրջանցելով: Բարձունքի գագաթին հասնելու հարկ չկա:

Վերևից չերևացող ձորակը զննելու համար դետքայինն իջնում է ձորակ և շարժվում հունով, իսկ ավազը՝ հետևելով դետքայինին, շարժվում է ձորակի լանջով՝ պատրաստ ցանկացած պահի նրան կրակով աջակցելու:

Գիշերը և սահմանափակ տեսանելիության պայմաններում դիտարկման համար պետք է կիրառվեն գիշերային տեսասարքեր: Բացի այդ, դետքային ջոկը, դետքայինները ժամանակ առ ժամանակ պետք է կանգ առնեն, որպեսզի ականջ դնելով որոշեն հակառակորդի առկայությունը, դրանից հետո միայն շարժվեն առաջ:



## ՅԻՇԻՐ

1. Ինչքան մոտ է հակառակորդը, և ինչքան ուժգին է նրա կրակը, այնքան **կարճ պետք է լինի զինվորի վազելագրը**:
2. Եթե ջոկը փոխում է հարձակման ուղղությունը, զինվորին **խստիվ արգելվում է** փոխել իր տեղը ջոկի մարտակարգում:
3. Դանդաղ շարժվող զինվորը հարմար թիրախ է հակառակորդի համար:
4. Գրոհի ժամանակ թեկուզ մեկ զինվորի առաջխաղացմանը պետք է անմիջապես աջակցեն մյուս զինվորները:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվե՛ք մարտի դաշտում հետիոտն գործելիս տեղաշարժման եղանակները:
2. Ի՞նչ է պարզում զինվորը պաշտպանությունում մարտական առաջադրանք ստանալիս:
3. Պատմե՛ք հակառակորդի վրա կրակ բացելու կարգը:
4. Պատմե՛ք խրամատ ներխուժած հակառակորդի ոչնչացման կարգը:
5. Պատմե՛ք զինվորի գործողության մասին հարձակման անցնելու մարտական առաջադրանք ստանալիս:
6. Ինչպե՞ս է կատարում զինվորը «Ջո՛կ, պատրաստվե՛լ գրոհի» և «Ջո՛կ, գրոհի՛–Առաջ» հրամանները:
7. Ինչպե՞ս է զինվորը հաղթահարում արգելափակոցը:
8. Ի՞նչ է պարզում զինվորը՝ ստանալով դետքային ջոկի կազմում գործելու մարտական առաջադրանք:
9. Պատմե՛ք դետքայինների տեղաշարժման կարգը, տեղանքն ու տեղի առարկաները դիտարկելու գործողությունները:
10. Դիտորդն ինչպե՞ս է դիտարկում բնակավայրը, անտառը, գետը:



# ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ


## Չեռքի բեկորային նռնակներ

### Չեռքի բեկորային նռնակների տեսակները, մարտական բնութագրերը

Չեռքի բեկորային նռնակները նախատեսված են հակառակորդի կենդանի ուժը նռնակի բեկորներով խոցելու համար:

Ըստ բեկորների ցրման հեռավորության նռնակները լինում են՝ **հարձակողական և պաշտպանողական:**

ՀՀ ՁՈՒ սպառազինությունում գտնվում են հարձակողական՝ Ռ-Գ-5, Ռ-Գ-42, Ձ-1 և պաշտպանողական՝ Ֆ-1 նռնակները:



Ռ-Գ-5

Ռ-Գ-42

Ֆ-1

Բեկորային նռնակները բաղկացած են պատյանից, պայթուցիկ լիցքից ու բռնկիչից: Պայթուցիկ լիցքը լցված է պատյանի մեջ և նախատեսված է նռնակը պայթեցնելու և բեկորներ առաջացնելու համար: Նռնակի բռնկիչը նախատեսված է պայթուցիկ լիցքի պայթեցման համար: Բռնկիչները միշտ գտնվում են մարտական վիճակում: Այդ պատճառով կտրականապես արգելվում

է քանդել բռնկիչը և ստուգել հարվածային մեխանիզմի աշխատանքը:

Բռնկիչի հրապատիճը բոցավառվում է նռնակի նետման պահին, իսկ պայթյունը տեղի է ունենում նետումից 3.2–4.2 վրկ հետո:

Ռ-Գ-5, Ռ-Գ-42, Ֆ-1 և Ձ-1 նռնակները անխափան պայթյուն են ցեխի, ձյան, ջրի մեջ, ինչպես նաև այլ տեղերում ընկնելիս:

Բեկորների խոցող ուժը պահպանվում է՝ հարձակողական նռնակներինը մինչև 25 մ հեռավորության վրա (Ձ-1՝ մինչև 7 մ), իսկ պաշտպանողականներինը՝ մինչև

200 մ: Նոնակի համեմատաբար ոչ մեծ զանգվածը (հարձակողականները՝ 310–400 գրամ, իսկ Ֆ-1՝ 600 գրամ) վարժված զինվորին թույլ է տալիս այն նետել մինչև 40–50 մետր հեռավորության վրա:

## Ձեռքի բեկորային նոնակների լիցքավորումը, նետելու եղանակներն ու կանոնները

Նոնակի նետումը ներառում է հետևյալ գործողությունները՝ նետելուն պատրաստվելը (լիցքավորումն ու հարմար դիրք ընդունելը) և նետելը: Նոնակ նետելու գործնական պարասպորտների ժամանակ հազում են պողպատյա սաղավարտ: Նոնակի լիցքավորումը կատարվում է «Նոնակները պատրաստել» հրամանով, իսկ մարտում՝ նաև ինքնուրույնաբար:



*Բռնկիչի ներպատումը*



*Ապահովիչ պահպանակի դուրս քաշելը*

Լիցքավորման համար անհրաժեշտ է պայուսակից ձախ ձեռքով հանել նոնակը, իսկ աջով պատյանից հանել խցանը: Հետո նոնակը պահելով ձախ ձեռքում՝ աջ ձեռքով բռնկիչը հանել պայուսակից: Բռնկիչը դնել կենտրոնական փողակի մեջ ու ներպատել մինչև վերջ: Նոնակը պատրաստ է նետման:

Ձեռքի բեկորային նոնակները նետում են տարբեր դիրքերից՝ *կանգնած, ծնկած, պառկած*, ինչպես նաև մարտական մեքենայից (զրահամեքենայից) կամ հետիոտն գործողությունների ժամանակ (միայն հարձակողական նոնակը):

Նոնակը նետելու համար ընտրում են այնպիսի տեղ և ընդունում այնպիսի դիրք, որ կարելի լինի նետել առանց արգելքների դիպչելու: Նոնակի ճանապարհին չպետք է լինեն ծառերի ճյուղեր, բարձր թփուտներ, լարեր և այլ խոչընդոտներ:

Նոնակը նետում են «Նոնակով-կրա՛կ» հրամանից հետո, իսկ մարտում՝ նաև ինքնուրույնաբար: Նոնակը նետելու համար այն վերցնել աջ ձեռքով, իջուցիկ լծակը մատներով ամուր սեղմել նոնակի պատյանին: Շարունակելով ամուր սեղմել իջուցիկ լծակը՝ մյուս ձեռքով ուղղել ապահովիչ պահպանակի (ճուլկիի) ծայրերը: Լծակը պահելով սեղմված վիճակում՝ օղակով քաշել ապահովիչ պահպանակը, ձեռքը թափով բարձրացնել և նոնակը նետել նշանակետի վրա: Պաշտպանողա-

կան նոնակի նետումից հետո անհրաժեշտ է անմիջապես պատասպարվել:

*Քայլելիս կամ վազելիս նոնակ նետելու համար անհրաժեշտ է այն պահել աջ*



*Նոնակի նետումը խրամատից*

կիսածավված ձեռքում, իսկ զենքը՝ ձախ ձեռքում, հանել ապահովիչ պահպանակը: Չեռքը նոնակով տանել առաջ ու ներքև, ապա շարունակել շարժել աղեղով դեպի հետ, միաժամանակ մարմինը թեքել դեպի աջ: Չախ ոտնաթափը դնելով թիրախի ուղղությամբ ու ծալելով աջ ծունկը՝ ավարտել մարմնի թեքումը և ձեռքը թափով հետ տանել: Օգտագործելով շարժման արագությունն ու նետման մեջ հաջորդաբար ներդնելով ոտքերի, մարմնի ու ձեռքի ուժը՝ նոնակը թափով անցկացնել ուսի վրայից ու նետել:

Նոնակը խրամատից նետելու համար անհրաժեշտ է զենքը դնել հողապատնեշի վրա, նոնակը վերցնել աջ ձեռքը, հանել ապահովիչ պահպանակը, աջ ոտքը դնել հնարավորին չափ հետ: Կռանալով գոտկատեղում ու փոքր-ինչ ծալելով ոտքերը՝ աջ ձեռքը նոնակով տանել հետ մինչև վերջ և, հենվելով ձախ ձեռքի վրա, կտրուկ ուղղվել ու նետել նոնակը, որից հետո պատասպարվել խրամատում:



*Նոնակի նետումը պատկած դիրքից*

Հակառակորդի խրամատում գտնվող կենդանի ուժի ոչնչացման համար նոնակն անհրաժեշտ է նետել հորիզոնի նկատմամբ մոտ 34-45 աստիճանի անկյան տակ, որպեսզի այն կախովի հետագծով ընկնի խրամատ ու որքան հնարավոր է՝ քիչ գլորվի:

## Նոնակների օգտագործման անվտանգության կանոնները

Նոնակները տեղափոխում են պայուսակով: Բռնկիչները տեղափոխում են նրոնակներից առանձին, ընդ որում՝ յուրաքանչյուր բռնկիչ փաթաթվում է թղթով կամ հնոսիով:

Պայուսակի մեջ դնելուց ու լիցքավորելուց առաջ նոնակներն ու բռնկիչները անհրաժեշտ է ստուգել:

Նոնակի իրանի վրա չպետք է լինեն խորը քերծվածքներ, խորը թափանցած ժանգ: Բռնկիչի փորակն ու բռնկիչը պետք է լինեն մաքուր, առանց ճմլվածքների ու ժանգի: Ապահովիչի պահպանակի ծայրերը միմյանցից պետք է զատված լինեն տարբեր կողմերի վրա, ճաքեր չպետք է լինեն: Ճաքած, կանաչ փառով ծածկված բռնկիչներն օգտագործել չի՛ կարելի: Տեղափոխելիս անհրաժեշտ է նոնակները պահպանել բախումներից, հարվածներից, կրակից, կեղտից ու խոնավությունից: Թրջված, կեղտոտ նոնակները և բռնկիչներն անհրաժեշտ է սրբել ու չորացնել հրամանատարի հսկողության ներքո: *Կրակի մոտ դրանք չորացնել չի՛ կարելի:*

Նոնակներն ու բռնկիչները պարբերաբար ստուգվում են: Նոնակը լիցքավորել (բռնկիչը դնել) թույլատրվում է միայն նետելուց առաջ:

Արգելվում է քանդել մարտական նոնակները, վերացնել անսարքությունները, փոխադրել առանց պայուսակների, ինչպես նաև ձեռք տալ չպայթած նոնակներին:



## ՅԻՇԻՐ

1. Պաշտպանողական նոնակը նետելուց հետո պետք է անմիջապես պատսպարվել՝ բեկորների խոցումից պաշտպանվելու համար:
2. Չի՛ կարելի օգտագործել կանաչ փառով պատած, ճաքած բռնկիչներ:
3. Կտրականապես **արգելվում է** քանդել նոնակի բռնկիչը և ստուգել հարվածային մեխանիզմի աշխատանքը:
4. Թրջված, կեղտոտ նոնակներն ու բռնկիչները կրակի մոտ չորացնել չի՛ կարելի:

## ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ տիպի նոնակներ գիտեք:
2. Համառոտակի թվե՛ք Ռ-Գ-Դ-5 և Ֆ-1 նոնակների մարտական հատկանիշները:
3. Ի՞նչ մասերից են բաղկացած Ռ-Գ-Դ-5 և Ֆ-1 նոնակները:
4. Ի՞նչ գործողություններ պետք է կատարել նոնակը նետելուց առաջ:
5. Ինչպե՞ս նետել նոնակը քայլելիս կամ վազքի ընթացքում:
6. Թվե՛ք նոնակի նետման անվտանգության կանոնները:
7. Դաշտային պայմաններում մարզումների միջոցով կատարելագործե՛ք ձեր հմտությունները՝ նոնակը նետելով տարբեր դիրքերից:



# Հրաձգային զենքի փամփուշտների տեսակները և կառուցվածքը

Հրաձգության խնդիրներից ելնելով՝ հրամանատարները որոշում են կրակ վարելու համար անհրաժեշտ փամփուշտների տեսակը և քանակը:

Փամփուշտներն ըստ նշանակության լինում են **մարտական, օժանդակ և լուսամանական:**

**Մարտական** փամփուշտները բաժանվում են ըստ հրաձգային զենքի տեսակների (ատրճանակային, ավտոմատների, հրացանների, խոշոր տրամաչափի գնդացիների):

**Օժանդակ** փամփուշտները նախատեսված են ոչ մարտական խնդիրների լուծման համար:

Մարտական փամփուշտը բաղկացած է *գնդակից, պարկուճից, վառողի լիցքից, հրապատիճից:* Գնդակներն ըստ խոցող հատկությունների **լինում են՝**


- սովորական,
- զրահահար-հրկիզող,
- լուսածրող:

**Սովորական** գնդակը բաղկացած է պատյանից, պողպատյա միջուկից ու արճիճե շապիկից, **լուսածրողը՝** պատյանից, արճիճե միջուկից, բաժակից ու լուսածրող նյութից, **զրահահար-հրկիզողը՝** պատյանից, ծայրապանակից, պողպատյա միջուկից, արճիճե շապիկից ու հրկիզող նյութից:

Սովորական գնդակն օգտագործվում է հակառակորդի բաց կամ գնդակներից խոցելի ծածկույթների հետևում գտնվող կենդանի ուժի ոչնչացման համար:

Լուսածրող գնդակն օգտագործվում է հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման, ինչպես նաև կրակի ուղղության ճշգրտման և նշանացուցման համար:

Ջրահահար-հրկիզող գնդակն օգտագործվում է վառվող հեղուկների հրկիզման ու թեթև զրահածածկույթների հետևում գտնվող (մինչև 300 մ հեռավորության վրա) կենդանի ուժի ոչնչացման համար:



**7.62 մմ փամփուշտի կառուցվածքը**

1 – գնդակ, 2 – պարկուճ, 3 – վառողի լիցք, 4 – հրապատիճ  
**Գնդակի տեսակները՝**

ա. սովորական պողպատյա միջուկով, բ. լուսածրող, գ. զրահահար-հրկիզող, դ. հրկիզող

Հրաձգությունից առաջ ստուգվում է փամփուշտների վիճակը՝ արդյոք պար-

կուճների վրա չկա՞ն ժանգ, ճմլվածքներ, արդյոք չի՞ շարժվում գնդակը պարկուճում: Հրապատիճի վրա չպետք է լինի կանաչ փառ, հրապատիճը դուրս չպետք է գա պարկուճի հարթությունից:

Մարտական փամփուշտների հետ չպետք է լինեն ուսումնական փամփուշտներ: Անհրաժեշտության դեպքում փամփուշտները մաքրվում են չոր հնոտիով: Արգելվում է դրանք սրբել յուղոտ հնոտիով, ինչպես նաև լցնել շատ յուղոտ պահեստատուփեր, ինչը հրաձգության ժամանակ կարող է խափանումների պատճառ դառնալ:

Փամփուշտները հրաձգարանում պետք է պահվեն չոր տեղում և հնարավորության սահմաններում պահպանված լինեն արևի ճառագայթներից:



## Ավտոմատով կրակելը

### Հրաձգության կանոնները

Մենք 9-րդ և 10-րդ դասարաններում ծանոթացել ենք ավտոմատով կրակ վարելու հիմնական դիրքերին, հրաձգության կատարմանը անշարժ թիրախների վրա, անվտանգության կանոններին հրաձգության ժամանակ:



*Կանգնած կրակելու դիրքը*

Գիտենք, որ ավտոմատով կրակում են կանգնած, ծնկած և պառկած դիրքերից, որ ամենահարմար դիրքը պառկած կրակելն է, որ նշանառության համար հարկավոր է վերցնել ուղիղ նշանահատիկ, որ նշանոցը և նշանառման կետը ընտրում են՝ մինչև 300մ հեռավորության վրա «3» կամ «II» նշանոցով նշան բռնելով նշանակետի ներքևի եզրին, իսկ եթե նշանակետը բարձր է (վազող մարդ)՝ մեջտեղին: Եթե նշանակետի հեռավորությունը 300 մ-ից ավելի է, ապա նշանոցը դրվում է նշանակետի հեռավորությանը համապատասխան, ընդ որում այն կլորացվում է մինչև 100 մ և նշանառման կետ է վերցվում թիրախի մեջտեղը:

Բայց մենք չպետք է մոռանանք, որ մեր հայրենիքը լեռնային երկիր է, որ միջին բարձրությունը

շատ տեղերում 2000 մ բարձր է:

Հետևապես, մենք պետք է իմանանք և ճիշտ կիրառենք հրաձգության կանոնները լեռնային պայմաններում:

Շուվի մակերևույթից տեղանքի բարձրության ու թիրախի տեղի անկյան ճշգրտ-

տումները մտցվում են նշանոցի մեջ միայն լեռներում՝ 400 մ ավելի հեռավորության վրա կրակելիս:

Լեռնային շրջաններում հրաձգային զենքից 7.62 մմ և 5.45 մմ փամփուշտներով



*Պառկած կրակելու դիրքը*

400 մ ավելի հեռավորության վրա կրակ վարելիս, եթե տեղանքի բարձրությունը ծովի մակերևույթից 2000 մ և ավելի բարձր է, նշանակետի հեռավորությանը համապատասխանող նշանոցը

հարկավոր է փոքրացնել մեկ միավորով: Եթե տեղանքի բարձրությունը ծովի մակերևույթից 2000 մ-ից ցածր է, նշանոցը պետք է համապատասխանի հեռավորությանը, իսկ նշանառման կետն ընտրվում է նշանակետի ամենացածր մասում:

Լեռնային տեղանքում ներքևից վերև կամ վերևից ներքև 7.62 մմ կամ 5.45 մմ փամփուշտներով 400 մ ավելի հեռավորությունից կրակելիս **անհրաժեշտ է՝**

1. նշանակետի տեղի անկյան 30<sup>0</sup>-ից ցածր լինելու դեպքում որպես նշանառման կետ վերցնել նշանակետի ներքևի եզրը,
2. եթե նշանակետի տեղի անկյունը բարձր է 30<sup>0</sup>-ից, նշանոցը տեղադրել նշանակետի հեռավորության համապատասխան մեկ միավորի իջեցմամբ:

Գիշերն ավտոմատով կրակելու ժամանակ, ինչպես նաև մառախլապատ և ծխապատ վայրերում, երբ նշանահատիկի ապահովիչն ու նշանոցի կատարը չեն երևում, զենքը դեպի նշանակետն է ուղղվում փողի միջոցով:

Լեռներում քամիներն ունեն զգալի արագություն և ուժգնություն, հետևապես կողային քամին կարող է թողնել իր ազդեցությունը գնդակի թռիչքի վրա՝ շեղելով այս կամ այն կողմ: Կողային քամու ազդեցությունը հաշվի է առնվում առաջանշանառմամբ (մետրերով, թիրախի չափսերով կամ ուղղակի անկյուններով): Ընդ որում նշանառման կետի առաջ բերելը հաշվարկվում է թիրախի մեջտեղից դեպի այն կողմը, որտեղից փչում է քամին:



*Ծնկած կրակելու դիրքը*

Լեռներում քամիներն ունեն զգալի արագություն և ուժգնություն, հետևապես կողային քամին կարող է թողնել իր ազդեցությունը գնդակի թռիչքի վրա՝ շեղելով այս կամ այն կողմ: Կողային քամու ազդեցությունը հաշվի է առնվում առաջանշանառմամբ (մետրերով, թիրախի չափսերով կամ ուղղակի անկյուններով): Ընդ որում նշանառման կետի առաջ բերելը հաշվարկվում է թիրախի մեջտեղից դեպի այն կողմը, որտեղից փչում է քամին:

Այսպես, եթե Կալաշնիկովի 7.62 մմ ավտոմատով կրակում են կրծքային թիրախի վրա՝ 400 մ հեռավորությունից, ձախ կողմից փչող չափավոր քանու դեպքում, ապա քանու ճշգրտումը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

**ՃՇքանու = Ն<sub>2</sub> - 2**, որտեղ Ն<sub>2</sub>-ն հեռավորության հարյուրյակների թիվն է (400 մ համապատասխանում է 4-ին): Ճշգրտումը կլինի՝

$$\text{ՃՇքանու} = 4 - 2 = 2$$

Առաջանշանառումը 2 թիրախի մեծությամբ ձախ:

Իսկ 5.45 մմ փամփուշտներով Կալաշնիկովի ավտոմատով կրակելիս ճշգրտումը կլինի

$$\text{ՃՇքանու} = \frac{\text{Ն}_2 - 2}{2} = \frac{4 - 2}{2} = 1$$

Այսինքն՝ առաջանշանառումը 1 թիրախի մեծություն՝ դեպի ձախ:



## Հրաձգության հնարավոր խափանումները և դրանց վերացման միջոցները

Ավտոմատի պարզ կառուցվածքն ապահովում է նրա հուսալի աշխատանքը: Սակայն ավտոմատի մեխանիզմների կեղտոտվելը, մասերի մաշվելը, ավտոմատի հետ անխնա վարվելը կարող են հանգեցնել խափանումների:

Հրաձգության ժամանակ առաջացած խափանումները պետք է վերացնել նախ վերալիցքավորման միջոցով: Դրա համար անհրաժեշտ է փակադակի շրջանակը մինչև վերջ հետ քաշել ու բաց թողնել, ապա շարունակել հրաձգությունը: Խափանումը կրկնվելու դեպքում պետք է պարզել պատճառը և վերացնել այն:

Թե ինչպես գործել տարբեր խափանումների ժամանակ, տրված է *աղյուսակում*:

Խափանումը և դրա բնութագիրը	Խափանման պատճառը	Խափանման վերացման միջոցը
<b>Փամփուշտը չի տրվում.</b> Փակադակը առջևի դիրքում է, սակայն կրակոց չի եղել, փամփուշտանոցում փամփուշտ չկա	Պահեստատուփը կեղտոտ կամ անսարք է: Անսարք է պահեստատուփի մղակը:	Վերալիցքավորել ավտոմատը և շարունակել կրակը: Փոխել պահեստատուփը, մղակի անսարքության դեպքում ավտոմատն ուղարկել վերանորոգման:



<p><b>Փամփուշտը դեմ է առել.</b> Փամփուշտը գնդակով դեմ է առել փողի հետնամասի կտրրվածքին, շարժական մասերը կանգնել են միջին մասում:</p>	<p>Պահեստատուփի կողապատերի ծալվածքները ծռված են:</p>	<p>Պահելով փակադակի շրջանակի բռնակը՝ հանել դեմ առած փամփուշտը և շարունակել կրակել: Խափանումը կրկնվելու դեպքում փոխել պահեստատուփը:</p>
<p><b>Չի կրակել.</b> Փակադակն առջևի դիրքում է, փամփուշտը՝ փամփշտանոցում, ձգանը քաշվել է, սակայն կրակոց չի եղել:</p>	<p>Փամփուշտն անսարք է: Անսարք է զարկանաձգանային մեխանիզմը: Յուղը կեղտոտ է կամ սառել է:</p>	<p>Վերալիցքավորել ավտոմատն ու կրակը շարունակել: Խափանումը կրկնվելու դեպքում ստուգել ու մաքրել զարկանը, զարկանաձգանային մեխանիզմը: Եթե դրանք ջարդվել են կամ մաշվել, ապա ավտոմատն ուղարկել վերանորոգման:</p>
<p><b>Պարկուճը դուրս չի եկել.</b> Հերթական փամփուշտը գնդակով դեմ է առել փամփշտանոցում մնացած պարկուճին, շարժական մասերը կանգնել են միջին մասում:</p>	<p>Կեղտոտ է փամփուշտը կամ փամփշտանոցը:</p> <p>Կեղտոտ կամ անսարք է նետիչը (թուլացել է զսպանակը):</p>	<p>Փակադակի շրջանակի բռնակը տանել հետ, պահելով այդ դիրքում՝ անջատել պահեստատուփն ու հանել փամփուշտը: Փակադակով կամ շամփուրով փամփշտանոցից հանել պարկուճը և շարունակել կրակը: Խափանումը կրկնվելու դեպքում մաքրել փամփշտանոցն ու փամփուշտները:</p> <p>Ստուգել և կեղտից մաքրել նետիչն ու շարունակել կրակը: Եթե անսարք է նետիչը, պետք է ավտոմատն ուղարկել վերանորոգման:</p>
<p><b>Պարկուճը բռնվել է կամ չի արտանդվել.</b> Պարկուճը դուրս չի գցվել փողատուփից, այլ մնացել է դրանում, փակադակի առջևում կամ փակադակով նորից տարվել է փամփշտանոց:</p>	<p>Կեղտոտվել են շփվող մասերը, գազուղիները կամ փամփշտանոցը:</p> <p>Կեղտոտ կամ անսարք է նետիչը:</p>	<p>Փակադակի շրջանակի բռնակը հետ տանել, դուրս գցել պարկուճը և շարունակել կրակը: Խափանումը կրկնվելու դեպքում մաքրել գազուղիները, շփվող մասերը, փամփշտանոցը: Շփվող մասերը յուղել:</p> <p>Եթե անսարք է նետիչը, ապա անհրաժեշտ է ավտոմատն ուղարկել վերանորոգման:</p>



## ՀԻՇԻՐ

1. Մարտական փամփուշտները պետք է պահել ուսումնական փամփուշտներից առանձնացված:
2. **Արգելվում է** փամփուշտները սրբել յուղոտ հնոտիով կամ պահել յուղոտ պահեստատուփերում:
3. Փամփուշտները պետք է պահվեն չոր տեղում և պահպանված լինեն արևի ճառագայթներից:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս է ստուգվում փամփուշտների վիճակը հրաձգությունից առաջ:
2. Ցո՛ւյց տվեք պառկած կրակելու դիրքը:
3. Ինչպե՞ս է կատարվում նշանառությունը մինչև 300 մ և 300 մ ավելի հեռավորության վրա:
4. Ինչպե՞ս է պետք քաշել հրահանը:
5. Ինչպիսի՞ խափանումներ կարող են լինել հրաձգության ժամանակ, ինչպե՞ս են դրանք վերացվում:
6. Ուսումնական զենքի վրա ցուցադրե՛ք խափանման վերացումը:

## ՀՀ ՁՈՒ ՀԱՄԱԶՈՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



### Ժամապահի պարտականությունները: Նրա անձեռնմխելիությունը

Պետական, ռազմական և զանազան այլ բնույթի օբյեկտների պահպանության համար դրվում են պահակետեր (պահակակետեր): Պահպանությունն իրականացնելու նպատակով առանձնացվում են ժամապահներ:

*Ժամապահ է կոչվում զինված պահակայինը, որը կատարում է իրեն հանձնարարված պահակետը (պահակակետը) պահպանելու և պաշտպանելու մարտական առաջադրանք:*

#### Ժամապահն անձեռնմխելի անձ է:

Նրա իրավունքներն ու անձնական արժանապատվությունը պահպանված են օրենքով և ՀՀ ՁՈՒ կայազորային ու պահակային ծառայությունների կանոնադրքի դրույթներով: Ժամապահը զինվում է հրազենով և սահմանված քանակի փամփուշտներով:

Նա ենթարկվում է խիստ որոշակի անձանց՝ պահակապետին, պահակապետի օգնականին և իր պահակադիրին: Ծառայությունից բխող նրա պահանջների կատարումը պարտադիր է բոլորի համար:

Պահակետում ծառայության կատարման ընթացքում ժամապահն իրավունք ունի առանց նախազգուշացման զենք կիրառել միայն այն դեպքում, երբ իր վրա կամ պահպանվող պահակետի վրա բացահայտ հարձակում է կատարվում:

#### Ժամապահը պարտավոր է՝

- լինել ուշադիր, աչալրջորեն պահպանել և պաշտպանել իր պահակետը, նույնիսկ կյանքին վտանգ սպառնալու դեպքում չլքել այն: Պահակետի ինքնակամ լքումը համարվում է հանցագործություն,
- զենքը ձեռքից բաց չթողնել և չտալ որևէ մեկին, անգամ նրանց, ում ինքը ենթակա է,
- գիտենալ պահակախմբի փոխադրամիջոցների շարժման երթուղիներն ու ժամանակացույցը, դրանց տարբերիչ նշաններն ու ազդանշանները,
- ծառայության ընթացքում զննել պահակետի մատույցները և ցանկապատերը,

սահմանված ժամերին կապի միջոցներով իրադրության մասին զեկուցել պահակապետին,

- ոչ ոքի թույլ չտալ մոտենալ պահակետին, բացի պահակապետից, նրա օգնականից, իր պահակադիրից և նրանց հետ եկած անձանցից,
- պահակետին կամ արգելված գոտուն մոտեցողներին նախազգուշացնել՝ «Կանգնի՛ր, կկրակեմ» և անհապաղ կանչել պահակապետին կամ իր պահակադիրին,
- հրդեհ ծագելու դեպքում անհապաղ հայտնել պահակատուն, միաժամանակ օգտվել հրդեհամարման միջոցներից՝ չդադարեցնելով պահակետի հսկողությունը:



Ժամապահին **արգելվում է** ծառայության ընթացքում քնել, նստել, հենվել որևէ առարկայի, գրել, կարդալ, երգել, ծխել, որևէ մեկին որևէ բան տալ կամ վերցնել նրանից, հոգալ բնական կարիքները, ինչպես նաև առանց անհրաժեշտության փամփուշտը ներմղել փամփշտանոց:

Ժամապահի պահպանությանն ու պաշտպանությանը հանձնված պահակետերն ըստ տեղաբաշխման լինում են *ներքին* և *արտաքին*:

Պահակետերը, որպես կանոն, ունեն ներքին և արտաքին ցանկապատ: Պահակետի շատ կարևոր օբյեկտները, որտեղ գտնվում են պայթուցիկ նյութեր, զենք, զինամթերք, վառելանյութ և այլն, նույնպես պետք է ունենան ցանկապատեր:

Ժամապահի դիտարկման հարմարավետությունն ապահովելու համար ցանկապատերի միջակա տարածքում՝ արտաքին պարսպի (ցանկապատի) մոտ, սարքավորում են դիտաշտարակներ՝ համապատասխան կապի միջոցներով, ազդանշանային համակարգով և լուսարձակներով:

Կան նաև պահակետեր, որոնք ցանկապատ չեն ունենում: Այդպիսի պահակետերի սահմանների վրա դրվում են «**Անցումն արգելվում է**» մակագրությամբ ցուցանակներ, որոնք պետք է լավ տեսանելի լինեն թե՛ ցերեկը, թե՛ գիշերը: Սլաքով ցույց է տրվում շրջանցման ուղղությունը: Ջորամասի տարածքից դուրս տեղադրված պահակետերի շուրջը, կողմնակի մարդկանց մուտքն արգելելու նպատակով, սահմանվում է արգելված գոտի, որի սահմանների վրա դրվում է «**Արգելված գոտի**» մակագրությամբ ցուցանակ: Պահակետերում, անմիջականորեն պահպանվող օբյեկտների մոտ, անպայման տեղադրվում են հրդեհամարման միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով լցված արկղեր, ջրով լցված տակառներ, դույլեր, բահեր, կացիններ, լինգեր, կարթածողեր (կարասիկներ):

Ժամապահների հագուստի համար արտաքին պահակետերում պետք է սարքավորվեն սնկաձև ծածկոց-խցեր, իսկ ներքին պահակետերում՝ կախիչ: Սնկաձև ծածկոց-խցիկը, սովորաբար, ներկվում է պահպանվող օբյեկտի կամ տեղանքի գույնով:


## Ժամապահի պարտականությունները պահակետի ընդունման-հանձնման ժամանակ

Պահակախմբերի հերթափոխը և պահակետերի ընդունում-հանձնումը կատարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի պահանջների խստիվ պահպանմամբ:

Հերթափոխի մոտենալուն պես ժամապահը, առանց հրամանի սպասելու, ինքնուրույնաբար ավտոմատը վերցնում է «Փոկին-Ա՛Ռ» դրոթյան և կանգնում է դեմքով դեպի հերթափոխը: Պահակադիրը մոտենում է ժամապահին և հրամայում՝ «Ձգա՛ստ», այնուհետև հրաման է տալիս՝ «Շարքային Մամյան, դեպի պահակետ քայլով-ՍՄ՛ՐՇ»: Ժամապահը, ընդունելով շարային կեցվածք, շարժվում է մի քայլ դեպի աջ, պահակայինը մոտենում և կանգնում է նրա տեղը՝ դեմքով դեպի հակառակ կողմը:

Պահակադիրի՝ «Ժամապահ, հանձնե՛լ պահակետը» հրամանով ժամապահը և պահակայինը գլուխները շրջում են միմյանց կողմը, ժամապահը բանավոր հայտնում է պահակետի համարը, թվարկում է այն ամենը, ինչ ենթակա է պահպանության, ինչպես նաև տեղյակ է պահում իր դիտարկման արդյունքների մասին:

Այնուհետև, պահակադիրի՝ «Պահակային, ընդունե՛լ պահակետը» հրամանով պահակայինը պարտավոր է ժամապահի և պահակադիրի ներկայությամբ շրջել պահպանվող օբյեկտում, ստուգել ցանկապատերի, դռների, պատուհանների, պատերի սարքինությունը, մարտական մեքենաների և այլ տեխնիկայի վիճակը, կապի և հրդեհամարման միջոցների առկայությունը:



Եթե պահակետի ընդունման ժամանակ հայտնաբերվում են վնասվածքներ, անսարքություն կամ կնիքը չի համընկնում պատճենի հետ, ապա պահակադիրը դադարեցնում է հանձնում-ընդունումը և կանչում է պահակապետին:

Պահակետի հանձնում-ընդունումն ավարտելուց հետո ժամապահը և պահա-

կայինը կանգնում են դեմքով դեպի պահակադիրը, մեջքով՝ պահպանվող օբյեկտի կողմը և հերթով զեկուցում են՝ «Պարո՛ն սերժանտ, շարքային Պապյանը հանձնեց թիվ 2 պահակետը», «Պարո՛ն սերժանտ, շարքային Մամյանն ընդունեց թիվ 2 պահակետը»:

Պահակայինի ժամապահ դառնալը (ժամապահի պահակային դառնալը) հաստատվում է պահակետի ընդունման-հանձնման վերաբերյալ զեկույցով:

## **Ձեռքի լիցքավորման և լիցքաթափման կարգը: Ժամապահի զենքի դիրքը պահակետում**

Ձեռքի լիցքավորումը և լիցքաթափումը կատարվում է պահակետ մեկնելուց առաջ, պահակատան առջև գնդակորսիչ հարմարանք ունեցող տեղում, պահակապետի կամ նրա օգնականի (պահակադիրի) անմիջական հրամանով և հսկողությամբ: Եթե պահակատան մոտակայքում կան ծառայողական շենքեր, ապա զենքը լիցքավորվում և լիցքաթափվում է պահակատանը, որտեղ նույնպես պետք է սարքավորված լինի գնդակորսիչ հարմարանք: Լիցքավորման և լիցքաթափման ժամանակ շրջապատի անվտանգությունն ապահովելու նպատակով զենքի փողը պահվում է 45–60 աստիճան անկյան տակ դեպի վեր:

Ձեռքի լիցքավորման համար պահակապետը, նրա օգնականը կամ պահակադիրը հրամայում են՝ «*Հերթափո՛խ, աջից հերթով-ԼԻՑՔԱՎՈՐԻ՛Ր*»: Այս հրամանով պահակախմբի անձնակազմն ավտոմատը պահում է կանգնած վիճակում կրակելու դիրքով, փակադակի շրջանակը տարվում է հետ, ստուգվում է և դրվում ապահովիչին, ապա միացվում է պահեստատուփը: Պահեստատուփը միացնելուց հետո փակադակի շրջանակը հետ չի տարվում:

Ձեռքի լիցքաթափումը կատարվում է պահակետից վերադառնալուց հետո՝ «*Աջից հերթով-ԼԻՑՔԱԹՎՓԻ՛Ր*» հրամանով: Պահակայինները հերթով մի քայլ առաջ են գալիս, ավտոմատը պահում են կանգնած վիճակում կրակելու դիրքով՝ փողը 45–60 աստիճան դեպի վեր: Այնուհետև անջատում են պահեստատուփը, դնում պայուսակի մեջ և զեկուցում են՝ «*Ձեռքը լիցքաթափված է*»: Ձեկույցից հետո պահակայինը զենքի փակադակը հետ է քաշում, ստուգման համար ցույց տալիս պահակադիրին: Ստուգումից հետո պահակայինը թողնում է փակադակը, սեղմում է ձգանը, զենքը դնում է ապահովիչին և վերցնում է «Փոկին-Ա՛Ռ» դրությամբ, մի քայլ հետ է գնում ու կանգնում է իր տեղում:

**Ժամապահի զենքի դիրքը պահակետում:** Պահակետում իր ծառայողական պարտականությունները կատարելիս ժամապահը պետք է զինված լինի սվին-դանակ ունեցող ավտոմատով (եթե ծալովի կոթով ավտոմատով է, ապա առանց սվին-դանակի. սվին-դանակն ամրացվում է գոտկատեղին):

Ցերեկային ժամերին ժամապահը պետք է կանգնած լինի ավտոմատը «Փոկին-Ա՛Ռ» դիրքով կամ կանգնած դիրքով կրակելուն պատրաստ:

Գիշերային ժամերին ժամապահը պետք է կանգնած լինի կրակելուն պատրաստ դիրքով:



*Ժամապահի զենքի դիրքը պահակետում*

Ներքին պահակետերում և մարտական դրոշի պահպանման պահակետերում ժամապահը փայտե կոթով ավտոմատը պահում է «Փոկին-Ա՛Ռ» դիրքով, ծալովի կոթով ավտոմատը՝ «Կրծքին-Ա՛Ռ» դիրքով: Պահեստատուների պայուսակի կափարիչը պետք է լինի փակված:

Հրդեհի մարման կամ տարերային այլ աղետների հետևանքների վերացման ժամանակ ժամապահին թույլատրվում է զենքը կրել «Մեջքին-Ա՛Ռ» դրությամբ:

Ժամապահին օբյեկտի պահպանությունն իրականացնում է ցանկապատերի միջակա տարածքի պարեկությամբ, իսկ մեկ ցանկապատի առկայության դեպքում՝ շրջանցումով կամ դիտաշտարակից դիտարկելով: Օբյեկտի շուրջը պտտվելիս ժամապահի շարժման արագությունը պետք է հուսալի պահպանության հնարավորություն ընձեռի: Այդ նպատակով նա կարճատև կանգառներով դիտարկում է տարածքը և ցանկապատը, կապի միջոցներով պահակապետին զեկուցում ծառայության կատարման ընթացքի մասին:



## ՀԻՇԻՐ

1. Ժամապահն անձեռնմխելի անձ է:
2. Ժամապահը պարտավոր է չլքել պահակետը նույնիսկ կյանքին վտանգ սպառնալու դեպքում:
3. Պահակետը ինքնակամ (ինքնագլուխ) լքելը համարվում է **հանցագործություն**:
4. Եթե պահակատան մոտակայքում կան ծառայողական շենքեր, ապա զենքը լիցքավորվում և լիցքաթափվում է պահակատանը՝ գնդակորսիչ հարմարանքի առկայության պայմաններում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է ժամապահը, ի՞նչ է պահակայինը:
2. Ցուցադրե՛ք զենքի դիրքը պահակետի ընդունման-հանձնման ժամանակ:
3. Ինչպե՞ս և որտե՞ղ է լիցքավորվում զենքը:
4. Ինչպե՞ս է լիցքաթափվում զենքը:
5. Կատարե՛ք պահակետի ընդունման-հանձնման վարժություններ՝ հերթով հանդես գալով որպես պահակադիր, պահակային և ժամապահ:



# ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

## Ջոկի շարքերը

### Ջոկի ծավալուն և երթային շարքերը

Ջոկը գործում է ծավալուն (միատողան կամ երկտողան) և երթային (միաշարայուն կամ երկշարայուն) շարքերով:

Ջոկի շարունը միատողան (երկտողան) կատարվում է՝ «Ջո՛կ, միատողան (երկտողան)-ՇԱՐՎԻ՛Ր» հրամանով:

Այդ հրամանով զինծառայողները շարվում են հրամանատարից դեպի ձախ՝ կանոնադրությամբ սահմանված տարածությամբ և հեռավորությամբ: Յուրաքանչ-

յուր տողանում ոտնաթաթերի ծայրերը դրվում են մեկ ուղիղ գծի վրա:

Ջոկը տեղում միաշարայուն (երկշարայուն) շարելու համար տրվում է «Ջո՛կ, միաշարայուն (երկշարայուն)-ՇԱՐՎԻ՛Ր» հրամանը:

Ջոկի շարժումը սկսվում է՝ «Ջո՛կ, քայլով (շարային քայլով, վազքով) - ՍԱ՛ՐՇ» հրամանով:


Հրամանի կատարողական մասով բոլոր զինծառայողները միաժամանակ ձախ ոտքով սկսում են շարժումը՝ ընթացքում պահպանելով ուղղությունը, տարածությունն ու հեռավորությունը:

Ջոկի շարժումը դադարեցվում է՝ «Ջո՛կ, կանգ-Ա՛Ռ» հրամանով:

«Ջո՛կ-ՑՐՎԵ՛Լ» հրամանով զինծառայողները դուրս են գալիս շարքից:

### Ջոկի շարքի նոսրացումը և խտացումը


Տեղում շարքի նոսրացումը կատարվում է՝ «Ջո՛կ, աջ (ձախ, կենտրոնից) այս-



Երկտողան շարք

**քան քայլով-ՆՈՍՐԱՑԻՐ (վազքով-ՆՈՍՐԱՑԻՐ)»** հրամանով: Հրամանի կատարողական մասով բոլոր զինծառայողները, բացի նրանից, որից կատարվում է նուրացումը, շրջվում են նշված ուղղությամբ, ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը շրջում դեպի շարքի ճակատի կողմը, որից հետո արագացված կիսաքայլերով (վազքով) շարժվում են՝ նայելով հետևից եկող զինծառայողներին, չկտրվելով նրանցից: Հետևից գնացողի կանգնելուց հետո ամեն մեկը կատարում է մեկ քայլ կամ որքան պահանջվում է հրամանով, և շրջվում դեպի շարքի ճակատի կողմը:

Կենտրոնից նուրացման դեպքում նշվում է այդ տեղում կանգնած զինծառայողի ազգանունը: Ձինծառայողը, լսելով իր ազգանունը, պատասխանում է՝ «Ե՛ս եմ», ձախ ձեռքը մեկնում առաջ, իսկ հետո թողնում այն: Ձուկի հավասարման դեպքում տարածությունը պահպանվում է:



*Միաշարայուն շարք*

Տեղում ջուկի խտացումը կատարվում է **«Ձո՛կ, աջ (ձախ, դեպի կենտրոն)-ԽՏԱՑԻՐ (վազքով-ԽՏԱՑԻՐ)»** հրամանով: Հրամանի կատարողական մասով բոլոր զինծառայողները, բացի նրանից, ում կողմը նշված է խտանալ, շրջվում են դեպի խտացման կողմը, որից հետո արագացված քայլով (վազքով) խտանում են մինչև սահմանված տարածություն և ինքնուրույն կանգնում ու շրջվում են դեպի շարքի ճակատը:

## **Ձուկի վերադասավորումը**

Ձուկի վերադասավորումը միատողան շարքից երկտողան շարքի կատարվում է **«Ձո՛կ, մեկից երկու-ՀԱՇՎԻՐ»** հրամանով: Հաշվարկը սկսվում է աջ թևից: Այդ դեպքում յուրաքանչյուր զինծառայող արագորեն գլուխը շրջում է դեպի իրենից ձախ կանգնած զինծառայողը, ասում է իր համարը և արագ գլուխն ուղղում: Ձախթևայինը գլուխը չի շրջում:

Ձուկի ընդհանուր հաշվարկը կատարվում է՝ **«Ձո՛կ, հերթով-ՀԱՇՎԻՐ»** հրամանով՝ նույն կանոններով: Երկտողան շարքում երկրորդ տողանի ձախթևայինը հաշվարկի ավարտից հետո զեկուցում է՝ **«Ոչ լրիվ»** կամ **«Լրիվ»**:

Ձուկի վերադասավորումը տեղում միատողան շարքից երկտողան շարքի կատարվում է **«Ձո՛կ, երկտողան-ՇԱՐՎԻՐ»** հրամանով: Հրամանի կատարողական մասով զինծառայողների երկրորդ համարները «մեկ» հաշվով ձախ ոտքով

կատարում են մի քայլ հետ, «երկու» հաշվով՝ աջ ոտքը տանում հետ և մի քայլ աջ, «երեք» հաշվով ձախ ոտքը միացնում են աջին:

Տեղում ջոկի վերադասավորումը խտացված երկտողան շարքից միատողան շարքի կատարվում է հետևյալ կերպ. ջոկը նախօրոք բացազատվում է մի քայլ, որից հետո «Ձո՛կ, միատողան-ՇԱՐՎԻ՛Ր» հրամանով երկրորդ համարները դուրս են գալիս առաջին տողանի գիծ՝ «մեկ» հաշվով ձախ ոտքով կատարելով մեկ քայլ ձախ, «երկու» հաշվով աջ ոտքով մի քայլ առաջ, «երեք» հաշվով ձախ ոտքը միացնում են աջին:

Ջոկի վերադասավորումը ծավալուն շարքից շարասյան կատարվում է ջոկի աջ-դարձումով՝ «Ձո՛կ, աջ-ԴԱ՛ՐՉ» հրամանով:

Ջոկի վերադասավորումը միաշարասյուն շարքից երկշարասյուն շարքի կատարվում է՝ «Ձո՛կ, երկշարասյուն քայլով-ՄԱ՛ՐՇ» (ընթացքում՝ ՄԱ՛ՐՇ) հրամանով: Հրամանի կատարողական մասով ուղղապահն անցնում է կես քայլի, երկրորդ համարները դուրս են գալիս դեպի աջ, քայլի տակտով զբաղեցնում են իրենց տեղերը շարասյունում: Ջոկը շարժվում է կես քայլով մինչև «Ուղի՛ղ» կամ «Ձո՛կ, կանգ-Ա՛Ռ» հրամանը:

Ջոկի վերադասավորումը երկշարասյունից միաշարասյան կատարվում է՝ «Ձո՛կ, միաշարասյուն քայլով-ՄԱ՛ՐՇ» (ընթացքում՝ ՄԱ՛ՐՇ) հրամանով: Հրամանի կատարողական մասով ուղղապահը գնում է լրիվ քայլով, իսկ մյուսները՝ կես քայլով: Տեղերը բացվելուց հետո երկրորդ համարները զբաղեցնում են դրանք և լրիվ քայլով շարունակում շարժումը:

Շարասյան շարժման ուղղությունը փոփոխելու համար տրվում է՝ «Ձո՛կ, աջ (ձախ) ուսն առաջ-ՄԱ՛ՐՇ» հրամանը: Ուղղապահը թեքվում է աջ (ձախ) մինչև «Ուղի՛ղ» հրամանը, մյուսները հետևում են նրան:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր շարքն է կոչվում ծավալուն, ո՞րը՝ երթային:
2. Ի՞նչ հրամաններ են տրվում ջոկը միատողան կամ միաշարասյուն դարձնելու համար:
3. Կատարե՞ք վարժություններ՝ ինքնուրույն հրամաններ տալով կազմե՛ք նոսր և խիտ շարքեր:
4. Ինչպե՞ս վերադասավորել ջոկը միատողան շարքից երկտողանի և ընդհակառակը:
5. Վարժությունների հաճախակի կրկնությամբ կատարելագործե՛ք աշակերտների հմտությունը շարային պատրաստությունից:

# ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Տեղագրական քարտեզների կոորդինատային և կիլոմետրային ցանց

Ձորամասերի և ստորաբաժանումների հրամանատարները մարտական գործողությունները կազմակերպելիս գնահատում են իրավիճակը, որոշում ընդունում, կատարում տեղագնում, արձակում են մարտական հրաման:


Մարտական հրամանում հրամանատարը **նշում է՝**

- հակառակորդի և նրա կրակային միջոցների բաշխման տեղերը,
- ստորաբաժանումների խնդիրները, խոցվող օբյեկտները և կրակակետերը, բնագծերը:

Այդ խնդիրները առաջադրելիս հրամանատարը պետք է ճշտորեն նշի բոլոր նշանակետերի և բնագծերի տեղերը, այսինքն՝ ենթականերին հաղորդի դրանց կոորդինատները: Տեղադրելով այդ կոորդինատները քարտեզի վրա՝ ենթակաները գտնում են այն նշանակետերը, որոնք ենթակա են խոցման, կամ առաջադրանքների կատարումն առնչվում է այդ նշանակետերի հետ:

Իսկ ի՞նչ են կոորդինատները: **Կոորդինատներ** են կոչվում անկյունային կամ գծային այն մեծությունները, որոնք որոշում են կետի դիրքը որևէ մակերևույթի վրա կամ տարածության մեջ: Տեղանքի կետերի (նշանակետերի) կոորդինատները քարտեզի միջոցով որոշելու համար լայնորեն կիրառվում են հարթ ուղղանկյուն կոորդինատները: Հարթ ուղղանկյուն կոորդինատները գծային մեծություններ են, որոնք որոշում են կետերի դիրքը հարթության վրա՝ կոորդինատների պայմանական սկզբնակետի նկատմամբ:

Ընդհանուր առմամբ որպես կոորդինատների սկզբնակետ է ընդունվում երկու




Հարթ ուղղանկյուն կոորդինատներ

իրար փոխադրահայաց գծերի (կոորդինատների առանցքներ) հատման կետը:

Ուղղահայաց առանցքը կոչվում է իբրև առանցք (X), իսկ *հորիզոնականը*՝ իզրեկ առանցք (Y): Ա կետի դիրքը որոշվում է առանցքների **օս** և **օք** հատվածներով կամ, որ նույնն է, կարճ հատվածներով (ուղղահայացներով)՝ որոշվող կետից մինչև կոորդինատների համապատասխան առանցքները (X<sub>ս</sub> և Y<sub>ս</sub>): Մեր օրինակում Ա կետի կոորդինատներն են՝  $x = 4,5$  և  $y = 6,5$ :

Տեղագրական քարտեզների վրա հարթ ուղղանկյուն կոորդինատների համակարգը տրվում է իրար փոխադարձաբար ուղղահայաց գծերի ցանցի ձևով. վերջիններս տարվում են մեկը մյուսից հավասար հեռավորության վրա և ձևավորում են քառակուսիների ցանց, որը կոչվում է **կոորդինատային կամ կիլոմետրային ցանց**: Կիլոմետրային ցանց է կոչվում, քանի որ քառակուսիների կողմերը, համաձայն քարտեզի մասշտաբի, հավասար են կիլոմետրերի ամբողջական թվերին: Տեղանքի որևէ առարկայի (նշանակետի) տեղը ցույց տալու համար բավական է նշել ցանցի քառակուսին, որում այն գտնվում է: Քառակուսին միշտ նշվում է կիլոմետրային ցանցի այն թվերով, որոնց հատումով առաջանում է նրա ստորին ձախ անկյունը:

Քառակուսին նշելու համար անհրաժեշտ է անպայման ղեկավարվել հետևյալ կանոններով՝ սկզբում անվանել հորիզոնական գծի վրա գրված երկու թվերը, իսկ հետո՝ ուղղահայաց գծի վրա գրված երկու թվերը: Ընդ որում, թվերը գրվում են և



արտասանվում միասին, օրինակ՝ «Ջրո ինը վաթսուն չորս» (0964), «Ջրո յոթ վաթսուն երեք» (0763):

Քարտեզի վրա նշանակետերի, կողմնորոշիչների կամ այլ օբյեկտների նշումը


հայտնի կոորդինատներով տրվում է հետևյալ հերթականությամբ: Ենթադրենք, որ նշանակետը (ՀՄՄ) տեղանքում գտնվում է մի կետում, որը նշված չէ քարտեզի վրա, սակայն հայտնի են նրա կոորդինատները.  $X=09125$ ,  $Y=64250$ :

Քարտեզի վրա այդ նշանակետը նշելու համար անհրաժեշտ է որոշել քառակուսին, որում գտնվում է նշանակետը:  $X$  և  $Y$  կոորդինատների առաջին երկու թվերը (կլիմներերի տասնավորները և միավորները) ցույց են տալիս, որ նշանակետը գտնվում է 0964 քառակուսում. 09-ը՝ հորիզոնական գիծ, 64-ը՝ ուղղահայաց գիծ: 0964 քառակուսում ցանցի ուղղահայաց գծերով տեղադրում ենք 125 մ, ստացված կետերը միացնում ենք ուղիղ գծով: Այդ ուղիղ գծի վրա ինչ-որ տեղում գտնվում է նշանակետը: 64 գրություն ունեցող ցանցի ուղղահայաց գծից աջ տեղադրում ենք 250 մ հատվածը և նշում ենք կետը: Ստացված կետն էլ կլիմի նշանակետի դիրքը քարտեզի վրա (մեր օրինակում՝ ՀՄՄ):

## Դիրեկցիոն անկյուն

Քարտեզների կլիմներային ցանցը կարելի է օգտագործել ոչ միայն նշանակետերի կոորդինատները որոշելու կամ նշանակետերն ըստ տրված կոորդինատների քարտեզում գծանշելու, այլև որևիցե առարկայի ուղղությունը նշելու համար:

Քարտեզով ուղղությունը նշելու համար օգտագործվում է կլիմներային ցանցի ուղղահայաց գծի հյուսիսային ուղղության և դեպի առարկան ուղղված գծով կազմված անկյունը: Այդ անկյունը կոչվում է **դիրեկցիոն անկյուն**:



- $\alpha$  - դիրեկցիոն անկյուն
- Մ<sub>իր</sub> - իրական ազիմուտ
- Մ<sub>մ</sub> - մագնիսական ազիմուտ
- ՈՒՎ - ուղղությունների ճշգրտում

Իսկ ինչո՞վ է տարբերվում դիրեկցիոն անկյունն ազիմուտից:

Մենք 9-րդ դասարանից գիտենք, որ առարկայի մագնիսական ազիմուտը՝ մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ դեպի առարկան ուղղված գծով կազմված անկյունն է:

Նկատի ունենալով, որ կողմնացույցի սլաքը միշտ ուղղված է մագնիսական միջօրեականի ուղղությամբ, և այդ ուղղությունը չի համընկնում իրական միջօրեականի ուղղության հետ, իրական միջօրեականի և մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղությունների միջև կազմվում է անկյուն,

որը կոչվում է **մագնիսական սլաքի խտորման անկյուն**, և նշվում է հունական  $\delta$  (դելտա) տառով: Խտորումը համարվում է արևելյան (+ նշանով), եթե սլաքի հյու-

սիսային ծայրը շեղված է իրական միջօրեականից արևելք, և արևմտյան (– նշանով), եթե շեղված է դեպի արևմուտք:

Կլիմատրային ցանցի ուղղագիծ գծի և մագնիսական միջօրեականի միջև նույնպես առաջանում է անկյուն, որը կոչվում է **մագնիսական սլաքի շեղում** կամ ուղղությունների ճշգրտում (ՈՒՃ): Եթե մագնիսական սլաքի հյուսիսային ծայրը կլիմատրային ցանցի հյուսիսային ուղղությունից շեղվում է դեպի արևելք, անկյունը համարվում է դրական (+ նշանով), դեպի արևմուտք՝ բացասական (– նշանով): Ուղղությունների ճշգրտման և մագնիսական խոտորման մասին եղած տվյալները գետեղվում են քարտեզի շրջանակի ներքևի ձախ կողմում: Այդ տվյալներն անհրաժեշտ են քարտեզը կողմնորոշելու, ինչպես նաև դիրեկցիոն անկյուններից մագնիսական ազիմուտներին անցնելու համար և ընդհակառակը:

## Տեղանքի գնահատումը

Տեղագրական քարտեզը տեղանքի մասին տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրներից մեկն է: Քարտեզով համեմատաբար արագ կարելի է ուսումնասիրել և գնահատել մարտական գործողությունների շրջանի տեղանքի մարտավարական և պաշտպանական հատկությունները, անկախ այն փաստից, թե ինչ հեռավորության վրա է այն գտնվում:

Քարտեզը հնարավորություն է տալիս ստանալ քանակական և որակական տեղեկություններ տեղական շատ առարկաների մասին, տեղանքի ռելիեֆի մասին, ինչը շատ կարևոր է ստորաբաժանումների հրամանատարների համար մարտի կազմակերպման ընթացքում:

Ուսումնասիրելով տեղանքը քարտեզով՝ պետք է նկատի ունենալ, որ քարտեզը տպագրելու ժամանակից հետո տեղանքում հնարավոր են շատ փոփոխություններ, որոնք չկան քարտեզի վրա:

Տեղանքի ուսումնասիրման հերթականությունը և խորության աստիճանը որոշվում է մարտական իրավիճակի պայմաններով, ստորաբաժանումների մարտական խնդիրների բովանդակությամբ, եղանակային պայմաններով և մարտական տեխնիկայի բնութագրով:

Տեղանքի ուսումնասիրումը, որպես կանոն, սկսվում է նրա ընդհանուր բնույթի որոշմամբ, իսկ հետո մանրակրկիտ ուսումնասիրվում են տեղական առանձին առարկաները, ռելիեֆի ձևը և մանրամասնությունները, դրանց ազդեցությունը դիտարկման պայմանների, քողարկման, անցանելիության, պաշտպանական պայմանների, հրաձգության անցկացման և կողմնորոշման վրա:

Տեղանքի մանրամասն ուսումնասիրումը նպատակ ունի որոշել տեղական առարկաների, ստորաբաժանման գործելու կամ շարժման երթուղու սահմաններում տեղանքի ձևի ու մանրամասների որակական բնութագիրը և դրանց ազդեցու-

թյունը քողարկման, դիտարկման, կողմնորոշման և կրակ վարելու վրա:

Ուսումնասիրվում են բնակավայրերը, ճանապարհները, գետերը, կամուրջները, ծանծաղուտները, բուսական ծածկույթը, ճահիճները, բարձունքների թեքությունը և այլն:

Տեղանքի ճիշտ գնահատումից կախված է մարտական առաջադրանքի լիարժեք և ժամանակին կատարումը:

## **Տեղագրական քարտեզը որպես մարտի կառավարման միջոց**

Տեղագրական քարտեզները հրամանատարների, շտաբների կողմից օգտագործվում են բազմաբնույթ նպատակներով: Տեղագրական քարտեզի միջոցով կատարվում է տեղանքի ուսումնասիրում և գնահատում, կողմնորոշում տեղանքում, որոշվում են նշանակետը, դիրքը, կատարվում ինժեներատեխնիկական հաշվարկներ: Հրամանատարի աշխատանքային քարտեզը տեղագրական քարտեզ է, որտեղ հրամանատարը (կամ շտաբի սպան) պայմանական նշանների օգնությամբ ցույց է տալիս մարտավարական կամ հատուկ իրավիճակը և դրա փոփոխությունը մարտի ընթացքում: Աշխատանքային քարտեզի միջոցով հրամանատարն ուսումնասիրում և գնահատում է իրավիճակը, որոշում է ընդունում, ենթականերին տալիս է առաջադրանք, փոխօգնություն է կազմակերպում, տալիս է ցուցումներ, զեկուցում է մարտական գործողությունների ընթացքի մասին:

Ստորաբաժանումների հրամանատարներն աշխատում են 1:50000 կամ 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզներով: Իսկ հատուկ առաջադրանքների համար (ջրային տարածքների հաղթահարման, խոշոր բնակավայրերում մարտի համար) օգտագործում են ավելի խոշոր մասշտաբի 1:10000 կամ 1:25000 տեղագրական քարտեզներ: Տեղագրական քարտեզները տրվում են ստորաբաժանումներին՝ շտաբների կողմից միջոցառման նախապատրաստման ընթացքում:

## **ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ի՞նչ են կոորդինատները: Տո՛ւր սահմանումը:
2. Ո՞ր քառակուսում է գտնվում լիճը, ճիշտ անվանի՞ր այն:
3. Գրատախտակի վրա նկարի՞ր դիրեկցիոն անկյուն: Ո՞ր ուղղությունների միջև է գտնվում այդ անկյունը:
4. Ի՞նչ հերթականությամբ է ուսումնասիրվում տեղանքը:



# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ



## Պատերազմ վարելու մեթոդներն ու միջոցները

Չինված ընդհարումների իրավունքի հիմնական աղբյուրն է ցամաքային պատերազմ վարելու կանոնների մասին 1907 թ. Հաագայի Կոնվենցիան: Հետագայում՝ 1949 թ. ընդունվեցին Ժնևի չորս Կոնվենցիաներ պատերազմի զոհերի մասին, իսկ 1977 թ.՝ դրանց կից երկու լրացուցիչ արձանագրություններ:

Այդ և մյուս միջազգային իրավունքի ակտերում ձևակերպվել և ամրագրվել են զինված պայքարի նորմերն ու սկզբունքները: Չինված պայքարի միջոցների և մեթոդների սահմանափակման սկզբունքի համաձայն դրանք պայմանականորեն բաժանվում են՝ **քույրատրված** և **արգելված** նորմերի և միջոցների:

Հակամարտող կողմերը կարող են միայն օգտագործել պատերազմ վարելու իրավական նորմերով չարգելված մեթոդներ և միջոցներ: Սակայն զինված ընդհարումների իրավունքը չի նախատեսում միջուկային զենքի օգտագործումն արգելող նորմեր: Միևնույն ժամանակ մի շարք միջազգային պայմանագրերում կան միջուկային պատերազմը կանխելու դրույթներ:




## Պատերազմ վարելու մեթոդները

Միջազգային մարդասիրական իրավունքով սահմանված է **ծովի վրա պատերազմ** վարելու կարգը: Կարգավորման է ենթակա ծովային շրջափակումը, ակամային պատերազմը, ռազմածովային ուժերով ռմբակոծումը: Հաագայի IX Կոնվենցիան արգելում է ծովային պատերազմում բաց և չպաշտպանված նավահանգիստների, քաղաքների, բնակավայրերի ռմբակոծումը: Հաագայի VIII Կոնվենցիան որոշակի սահմանափակումներ է պարտադրում ստորջրյա և հալումից ավտոմատ պայթող ականների տեղադրման վրա:

Չինված ընդհարումների իրավունքը չի սահմանում **օդային պատերազմ** վարելու կանոնները: Չնայած այդպիսի կանոններ մշակվել էին 1923 թ. Հաագայում, բայց չէին վավերացվել: Բայց և այնպես, այդ կանոնների դրույթները դարձել են սովորական իրավունքի նորմեր և նկատի են առնում կոմող կողմերը:

Օդային պատերազմում գլխավոր հարցը ռմբակոծումների կարգավորումն է: Դրանք կլինեն օրինական, եթե ուղղված լինեն միայն ռազմական, այլ ոչ թե քաղաքացիական օբյեկտների դեմ: **Արգելվում է** չպաշտպանված քաղաքների, շենքերի ու շինությունների և այլ բնակելի վայրերի ռմբակոծությունը: Միջազգային մարդասիրական իրավունքը ռազմական գործողություններին մասնակցողների վրա պարտավորություն է դնում՝ միջոցներ ձեռնարկել, որպեսզի հնարավորինս չվնասվեն այն շենքերը և շինությունները, որոնք օգտագործվում են գիտության, արվեստի, բարեգործական գործունեության և բժշկական նպատակով՝ ներառյալ զինվորական հոսպիտալները, պայմանով, որ այդ օբյեկտները չեն օգտագործվում ռազմական նպատակներով:

Նշված սահմանափակումները հավասարապես տարածվում են ռմբակոծությունների բոլոր տեսակների վրա՝ ցամաքային, ծովային և օդային: Այդ առումով առավել վտանգավոր են օդային ռմբակոծությունները, քանի որ վերջիններս նվա-



զեցնում են ռազմական օբյեկտները ոչ ռազմականից տարբերելու հնարավորությունը: Չնայած նրան, որ վերջին տասնամյակների ընթացքում հրթիռային տեխնիկայի զարգացումը թույլ է տալիս կիրառել այսպես կոչված «խելոք ռումբեր», այդուհանդերձ դրանք ևս հաճախ շեղվում են նշանակետերից՝ հարվածելով քաղաքացիական օբյեկտներին:

Գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ՝ ռմբակոծությունների խնդիրներն է՛լ ավելի արդիական են դարձել՝ կապված ահռելի վտանգ պարունակող կառույցների ու կայանքների ռմբակոծության հետ: Միջազգային մարդասիրական իրավունքն ուղղակի ամրագրել է, որ վտանգավոր ուժեր պարունակող կառույց-

ներն ու կայանքները, ինչպիսիք են պատնեշները, ամբարտակները և ատոմային էլեկտրակայանները, չպետք է դառնան հարձակման թիրախ անգամ այն դեպքում, եթե դրանք հանդիսանում են ռազմական օբյեկտներ և այդպիսի հարձակումը կարող է հանգեցնել վտանգավոր ուժերի ազատման և հետագա ծանր կորուստների՝ քաղաքացիական բնակչության շրջանում: Արգելված է համարվում նաև քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտների ռմբակոծությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքը սահմանում է պատերազմ վարելու մի շարք մեթոդներ, մասնավորապես արգելվում են պատերազմ վարելու հետևյալ **մեթոդները՝**

- ուխտադրություն, հակառակորդի դավաճանական սպանություն, զինծառայողի կամ խաղաղ բնակչի վիրավորում,
- ոչ մեկին կենդանի չթողնելու հրամանի արձակում, դրանով սպառնալ կամ այդ հիմնավորմամբ մարտական գործողություններ վարել,
- զենքը վայր դրածի սպանություն կամ վիրավորում,
- ազգային և միջազգային ազդանշանների, դրոշների և տարբերանշանների ոչ նպատակային օգտագործում,
- ստիպել հակառակորդին մասնակցելու իր երկրի դեմ ռազմական գործողություններին,
- չպաշտպանված քաղաքների վրա գրոհ,
- հուշարձանների և այլ մշակութային արժեքների ոչնչացում և այլն:

## **Պատերազմ վարելու միջոցները**


Ջենևի այս կամ այն տեսակն արգելվածների թվին դասելու համար մշտապես անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները, մասնավորապես տարբերակում անցկացնելու և հավելյալ տառապանքներ չպատճառելու սկզբունքները: Ժամանակակից հանրությանը հաջողվել է ստեղծել միջազգային պայմանագրերի ընդարձակ համակարգ, պայմանագրեր, որոնք օրենքից դուրս են հայտարարել զենքի որոշ տեսակներ:

Այդպիսի **զինատեսակներից են՝**

- հեղձուցիչ, թունավոր և դրանց նման այլ գազերն ու հեղուկները,
- կենսաբանական և քիմիական զենքը, ինչպես նաև ոչ ընտրողական գործողության զենքը,
- պայթուցիկ, մարդու մարմնում պտտվող, նաև այլ խոցող միջոցներ, որոնք վիրավոր մարդկանց պատճառում են մեծ տառապանք,
- բնությանը վնաս պատճառելու նպատակով օգտագործվող մարտական միջոցները,

- հակահետևանքային ականները, ական-ծուղակները, ական-խաղալիքները և դրանց նման այլ ականներ,
- զենք, որի բեկորները մարդու մարմնում չեն հայտնաբերվում ռենտգենի միջոցով,
- ծավալային (վակուումային), կասետային ռումբերը,
- հրկիզող զենքը:

1972 թ. ընդունվեց մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր զենքի մշակումը, արտադրությունը և կուտակումն արգելելու, դրանք ոչնչացնելու մասին Կոնվենցիան: Դա միջազգային հանրությանը նոր հնարավորություն տվեց արդյունավետ պայքար մղելու մանրէաբանական և թունավոր զենքի կիրառման դեմ:



#### *Ական-ծուղակներ*

1980 թ. ընդունվեց Կոնվենցիային կից Առաջին արձանագրությունը չափազանց մեծ վնասվածքներ պատճառող կամ ոչ ընտրողական կիրառություն ունեցող զենքի որոշ տեսակների գործարկումն արգելելու կամ սահմանափակելու մասին: Այն արգելեց մարդու մարմնի մեջ ռենտգենյան ճառագայթների միջոցով չհայտնաբերվող բեկորներով վնաս պատճառող ցանկացած տեսակի զենքի կիրառումը: Այս արգելքը, մասնավորապես, վերաբերում է պլաստմասսայե ականների օգտագործմանը, որոնք հնարավոր չէ հայտնաբերել մետաղորսիչներով և այլ սարքերով և որոնք դիտվում են որպես չափազանց մեծ վնաս պատճառող:

Արգելվում է նաև, այսպես կոչված, խաղալիք-ականների, ական-ծողակների կամ մնանօրինակ այլ սարքերի օգտագործումը: Խաղալիք-ականները երևի թե



*Հետևակային հրթիռային հրանետ*

ժամանակակից պատերազմական գործողությունների ժամանակ օգտագործվող ամենաանբարոյական զինատեսակ են: Դրանց կիրառումը միաժամանակ պետք է դիտել և՛ որպես ուխտադրություն դրսևորում, և՛ որպես չափազանց մեծ տատապանքներ պատճառող միջոց:

Խաղալիք-ականները հիմնականում ուղղված են պատերազմի առավել խոցելի գոտիների՝ երեխաների դեմ: Դրանք նպատակամիտված են մանկական հետաքրքրությունը նենգաբար օգտագործելու միջոցով ռազմական առավելության հասնելուն: Ական-խաղալիքները հանդիսանում են ական-ծողակների մի տարատեսակ, որոնք ևս, ելնելով նույն նկատառումներից, դիտվում են արգելված:

Նույն 1980 թ. ընդունվեց Կոնվենցիային կից Երրորդ արձանագրությունը, որը վերաբերում էր չափազանց մեծ վնասվածքներ պատճառող կամ ոչ ընտրողական կիրառություն ունեցող զենքի որոշ տեսակների (հատկապես հրկիզող զենքի) գործարկումն արգելելուն կամ սահմանափակելուն:

Հրկիզող զենքը հիմնականում նպատակաուղղված է որոշակի օբյեկտներ հրկիզելուն կամ մարդկանց այրվածքներ պատճառելուն: Այն ոչ մի դեպքում չի կարող օգտագործվել քաղաքացիական բնակչության դեմ: Նույնիսկ օդային ռմբակոծությունների ժամանակ անհրաժեշտ է հստակեցնել հարձակման թիրախը, որպեսզի ապահովվի հարակից օբյեկտների անվտանգությունը:



*Ծանր հրթիռային հրանետ*

Արգելվում է հրկիզող զենքի կիրառումն անտառների և այլ բուսականության դեմ, բացառությամբ հակառակորդի կողմից ռազմական նպատակներով դրանց ակտիվ օգտագործման դեպքերի, սակայն բոլոր դեպքերում հաշվի առնելով համաչափության և ռազմական անհրաժեշտության սկզբունքները:

1992 թ. զինաթափման համաժողովի ընթացքում ընդունվեց նաև քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման և օգտագործման արգելման և դրանց ոչնչացման մասին Կոնվենցիան: Այն արգելեց ոչ միայն քիմիական զենքի կիրառումը, այլ նաև դրա կիրառման նախապատրաստումը:

1997 թ. ընդունվեց հակահետևակային սկանների արտադրությունը, օգտագործումը, կուտակումը, տեղափոխումն արգելելու և դրանք ոչնչացնելու մասին Կոնվենցիան:

Միջազգային մարդասիրական իրավունքը հստակորեն ամրագրում է նաև պատերազմող կողմերի պարտականությունները՝ կապված սկանապատ դաշտերի ճիշտ հսկողության հետ: Վերջիններս, մասնավորապես, պետք է նշված և առանձնացված լինեն և մշտապես վերահսկվեն, ինչը, ցավոք, ոչ միշտ է հնարավոր լինում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. ՄՄԻ սկզբունքներով պատերազմ վարելու ինչպիսի՞ մեթոդներն են արգելվում:
2. Թվարկե՛ք այն զինատեսակները, որոնք ըստ միջազգային օրենքների հայտարարվել են օրենքից դուրս:
3. Ի՞նչ սահմանափակումներ մտցրեցին Հաագայի VII և IX Կոնվենցիաները:
4. Բացատրե՛ք Կոնվենցիային կից Առաջին արձանագրության ընդունած որոշումը խաղալիք-սկանների մասին:
5. Բացատրե՛ք Երրորդ Արձանագրության ընդունած որոշումը հրկիզող զենքի մասին:

# ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բնակչության պաշտպանությունն արտակարգ և պատերազմական իրավիճակներում

## Անհատական պաշտպանության միջոցներ

Անհատական պաշտպանության միջոցները /ԱՊՄ/ ծառայում են տեխնաձին և այլ բնույթի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության նպատակին:

Անհատական պաշտպանության միջոցները լինում են՝

- շնչառական օրգանների պաշտպանության՝ հակազագ, շնչադիմակ, փրկադիմակ, հակափոշային գործվածքե դիմակ, բամբակամառլայե վիրակապ,
- մաշկի պաշտպանության՝ համագորային պաշտպանական լրակազմ, թեթև պաշտպանական կոստյում, պաշտպանական զտող հագուստ, փրկարար ծածկոց,
- տեսողության օրգանների պաշտպանության՝ հակազագ, մուգ և ցանցավոր ակնոցներ,
- պաշտպանության բժշկական միջոցներ՝ անհատական դեղատուփ /ԱԴ-2/, անհատական հակաքիմիական փաթեթ /ԱՀՓ-8,10,11/:



Հակազագ ԳՊ-7

**Շնչառական օրգանների պաշտպանության միջոցները բաժանվում են ըստ՝**

- գործողության սկզբունքի՝ զտող, մեկուսացնող,
- ծառայության՝ համագորային, քաղաքացիական, արդյունաբերական,
- կառուցվածքի՝ տուփային, ոչ տուփային:

Չտող հակազագերում արտաքին վարակված օդը ներշնչման ժամանակ մըրտ-

նում է գտող-ներծծող տուփիկ, այնտեղ մաքրվում վնասակար խառնուրդներից, անցնում հակազագի դիմային մաս և շնչառական օրգան: Արտաշնչած օդը դիմային մասի տակից շրջանցելով տուփիկը՝ դուրս է գալիս:

Գոլորշիների և գազերի կլանումը հակազագերում կատարվում է փայտածուխի միջոցով: Այդ ծակոտկեն նյութն ունի ակտիվ մակերևույթ, որը լավ կլանում է քլոր, զարին, գոման, իպրիտ:

Ծխի և աերոզոլների գտումը կատարվում է թելիկավոր նյութերից պատրաստված հակաժխային գոխիչով: Այդ ծակոտկեն միջավայրով անցնելիս աերոզոլների մասնիկների մի մասը մնում է ծակոտիներում:

Ներկայումս առավել կատարելագործվածը ԳՊ-7 /ԳՊ-7Վ, ԳՊ-7ՎՄ/ մակնիշի քաղաքացիական հակազագն է, որը պաշտպանում է մի ամբողջ շարք թունավոր և ուժեղ ներգործող թունավոր նյութերից, ճառագայթակտիվ փոշուց և կենսաբանական նյութերից: Այն ունի խոսասարք, ինչպես նաև ջուր խմելու հնարավորություն: Հակազագն ընտրվում է ըստ գլխի համապատասխան չափսերի:

Ջտող տուփիկի միացման համար ԳՊ-7ՎՄ-ի դիմային մասն ունի 2 բնիկ՝ աջից և ձախից:

Հակազագի դիմային մասը ծառայում է շնչառական օրգանները, աչքերը և դեմքը վարակված օդի հետ շփումից մեկուսացնելու, մաքրված օդը շնչուղիներ հասցնելու և արտաշնչված օդը հեռացնելու համար (հակազագի օգտագործման կանոնները տրված են հավելված 2-ում):

**Արդյունաբերական հակազագերը** /ԱՀ/ ծառայում են առաջին հերթին վտանգավոր արտադրությունների աշխատողների կյանքը և առողջությունը պաշտպանելու համար ուժեղ ներգործող թունավոր նյութերի /ՈՒՆԹՆ/ արտահոսքի դեպքում: ԱՀ-ը մյուսներից տարբերվում են նրանով, որ շնչառական օրգանները, աչքերը և դեմքը պաշտպանում են միայն որոշակի վնասակար նյութերից:

**Մեկուսացնող հակազագերը** (ԻՊ-4, ԻՊ-5, ԻՊ-46Մ) օդում պարունակող բոլոր վնասակար խառնուրդներից շնչառական օրգանների, աչքերի, դեմքի մաշկի պաշտպանության հատուկ միջոց են: Դրանք օգտագործվում են այն դեպքում, երբ գտող հակազագերը չեն ապահովում այդպիսի պաշտպանություն, ինչպես նաև օդում թթվածնի անբավարարության դեպքում:

**Ջտող շնչադիմակները** մարդու շնչառական օրգանների պաշտպանության համար են, ունեն թեթև քաշ, պաշտպանում են վնասակար գազերից, գոլորշիներից, աերոզոլներից և փոշուց: Կան հակափոշային, հակազագային և գազափոշապաշտպանիչ շնչադիմակներ: Լինում են մեկանգամյա և բազմակի օգտագործման:



*Համագորային պաշտպանական յրակագ՝ որպես քիչնոց*



Սակայն շնչադիմակները բավարար արդյունավետ չեն, եթե օդում առկա են օրգանական ծագման լուծիչներ և դյուրավառ նյութեր:

**Մաշկի պաշտպանության միջոցներ:** Մաշկի պաշտպանության մեկուսացնող միջոցներից են հատուկ պաշտպանական հագուստը և համագորային պաշտպանական լրակազմը, որի մեջ մտնում են պաշտպանիչ քիկնոցը, պաշտպանիչ գուլպաները և պաշտպանիչ ձեռնոցները: Օգտագործվում է քիմիական հարձակման, կենսաբանական միջոցների կիրառման, ճառագայթակտիվ նյութերի առկայության, վարակված գոտու գազազերծման, ապակտիվացման և վարակազերծման աշխատանքներ կատարելու դեպքում: Պաշտպանական լրակազմը առավել վտանգավոր տեղերում օգտագործվում է կոմբինեզոնի տեսքով:



*Համագորային պաշտպանական լրակազմ՝ որպես կոմբինեզոն*

Հատուկ պաշտպանական հագուստը լինում է հետևյալ տեսակների՝ թեթև կոստյում, կոմբինեզոն, գոգնոց և կոստյում՝ կազմված բաճկոնից ու անդրավարտիքից: Նման հագուստ տրվում է այն անձանց, որոնք երկար ժամանակահատվածում աշխատանք են կատարում վարակված տեղանքում, ինչպես նաև թունավոր նյութերի հետ շփվելու դեպքում:

Պաշտպանական հագուստի տեսականին լայն է, ամենատարբեր պայմաններում աշխատելու համար (բարձր ջերմաստիճաններ /մինչև 1000°C/, էլեկտրական դաշտ, բաց կրակ և այլն):

Անհատական պաշտպանության բժշկական միջոցները նախատեսվում են ինքնօգնության, փոխօգնության, ճառագայթային, քիմիական և կենսաբանական միջոցներով հիվանդությունների կանխարգելման կամ հետևանքների նվազեցման համար: Այդ դեղամիջոցները զետեղված են ԱԳ-2 դեղատուփում, որի հրահանգում կան նաև դրանց օգտագործման եղանակները:

## **ՉԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ներկայացրե՛ք անհատական պաշտպանության միջոցների կիրառման ոլորտները և դասակարգումը:
2. Ինչո՞վ են տարբերվում պաշտպանության մեկուսացնող միջոցները գտողներից:
3. Ներկայացրե՛ք գտող շնչադիմակները:
4. Թվարկե՛ք մաշկի պաշտպանության միջոցները:
5. Ցույց տվե՛ք հակազազը հագնելու կարգը:

## Ճառագայթային, քիմիական հետախուզության և բաժնեչափական հսկողության սարքեր


Ժամանակակից հասարակությունում ավելի ու ավելի սրությամբ են դրվում տեխնաձին վնասակար գործոններից մարդու և շրջակա միջավայրի անվտանգության ապահովման հիմնահարցերը:

Արդյունաբերական արտադրությունն իր մեջ կենտրոնացնելով էներգիայի, վնասակար նյութերի տարբեր տեսակների հսկայական պաշարներ՝ դարձել է լուրջ տեխնաձին վտանգի և արտակարգ իրավիճակների ծագման մշտական աղբյուր: Այդ վտանգի մակարդակը գրեթե չի նվազեցնում նոր տեխնոլոգիաների ներդրումն արտադրությունում:

Հետևանքների ծավալներով տեխնաձին արտակարգ իրավիճակների ծագման առավել մեծ սպառնալիք են ներկայացնում ճառագայթային և քիմիական վտանգավոր օբյեկտները: Բնակչության և տարածքների արդյունավետ պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի ճառագայթակտիվ, քիմիական, կենսաբանական և այլ աղտոտումների ենթարկված տեղանքների հայտնաբերումը, ճշտումը և գրանցումը:

**Ճառագայթային հետախուզության** չափիչ սարքերը նախատեսված են իոնացնող ճառագայթների դիտման և գրանցման համար:

Ճառագայթային հետախուզության սարքերի մեծ մասն աշխատում է իոնացնող մեթոդի հիման վրա: Մեկուսացված ծավալում գազի էլեկտրական չեզոք ատոմները իոնացնող ճառագայթահարումների ազդեցության տակ բաժանվում են դրական և բացասական իոնների: Եթե այդ ծավալում տեղադրվեն երկու էլեկտրոդ, որոնց միացվել է մշտական էլեկտրական հոսանք, ապա էլեկտրոդների միջև իոնացված գազում ծագում է լիցքավորված իոնների ուղղորդված շարժում: Այսինքն, գազի միջով անցնում է էլեկտրական հոսանք, որն անվանվում է իոնացված հոսանք: Վերջինիս չափումով կարելի է դատել ճառագայթակտիվ ճառագայթահարումների ինտենսիվության մասին:



**Ճառագայթային հետախուզության սարք**

Իոնացնող մեթոդի հիման վրա աշխատող սարքերը գրեթե միանման են և ընդգրկում են հետևյալ սարքվածքները. ընդունող, չափիչ, սնուցման բլոկ, սնուցման աղբյուրներ:

Գամմա-ճառագայթման և տարբեր առարկաների ճառագայթային աղտոտման մակարդակների չափման համար օգտագործում են Դ-Պ-5Վ ճառագայթման բաժ-

նեչափի հզորության չափիչ /ռենտգենաչափիչ/ սարքը: Չամմա-ճառագայթման պահաժամային /էքսպոզիցիոն/ բաժնեչափի հզորությունը որոշվում է ժամում միլիռենտգենով /մ Ռ/ժ / կամ ռենտգենով /Ռ/ժ /: Սարքի լրակազմն ընդգրկում է՝ չափիչ վահանակ, հերմետիկ գլանաձև զննածող /զոնդ/, զննածողի ամրացման համար երկարացնող մետաղածող, չափիչ վահանակի ազդանշանների լսահրկման ականջակալներ, զննածողի և ականջակալների լարեր ու սնուցման բլոկ:

Ճառագայթային մակարդակի չափումը կատարվում է 1 մ բարձրության վրա, այսինքն՝ մարդու հիմնական կենսական կենտրոնների մակարդակի վրա: Ջննածողի էկրանը դրվում է «Գ» դիրքում, փոխարկիչը՝ «200» դիրքում, 15 վրկ անց կատարվում է չափում ըստ ստորին սանդղակի վրա գտնվող սլաքի դիրքի: Ստացված արդյունքը ցույց է տալիս գամմա-ճառագայթման մեծությունը:

Ավելի մեծ ճշգրտության համար զննածողը տարածության մեջ պետք է պահել այնպես, որ առանցքը գետնին զուգահեռ լինի: Բետա-ճառագայթման հայտնաբերման համար զննածողը տեղադրվում է «Բ» դիրքով:



*Ճառագայթային հետախուզում*

Բաժնեչափական հսկումը կատարվում է ճառագայթակտիվ աղտոտման գոտում բնակչության, հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների և փրկարարների ճառագայթահարման բաժնեչափերի մասին ժամանակին տվյալներ ստանալու և նրանց վրա իոնացնող ճառագայթումների ազդեցության արդյունքի քանակը գնահատելու համար: Բաժնեչափական հսկումը կատարվում է խմբային և անհատական եղանակներով: Խմբային հսկումը կատարվում է անձնակազմի ճառագայթահարման միջին բաժնեչափերի մասին տվյալներ ստանալու և վարակված գոտում այդ խմբի հետագա մնալու հարցի որոշման համար: Անհատական հսկումը կատարվում է յուրաքանչյուր մարդու ճառագայթահարման բաժնեչափերի մասին տվյալների ստացման և ճառագայթային խոցման աստիճանի առաջնային ախտորոշման համար:

Անհատական բաժնեչափիչներն են ԴՊ-22Վ-ն, որի լրակազմն ընդգրկում է 50 հատ ուղղակի ցուցադրող ԴԿՊ-50-Ս բաժնեչափիչներ և ՋԳ-5 լիցքավորող սարք: Ծառայում է գամմա-ճառագայթման անհատական բաժնեչափերի չափման համար: Յուրաքանչյուր բաժնեչափիչ ունի այլումինի համաձուլվածքից գրչի տեսք:

«Բելլա» կենցաղային բաժնեչափիչը դյուրակիր գրպանի սարք է: Այն աշխատում է 2 ռեժիմով՝ «ՈՐՈՆՈՒՄ» և ՄԷԳ: «ՈՐՈՆՈՒՄ» ռեժիմը ճառագայթային իրադրության կոպիտ գնահատման համար է՝ ձայնային ազդանշանների ընթացքի միջոցով: ՄԷԳ ռեժիմը ծառայում է համարժեքային բաժնեչափի չափ-

ման և թվային ցուցատախտակի վրա ցուցանշման համար: ՄԷԳ-ի չափումն իրականացվում է ավտոմատ, 40 վրկ միջակայքով:

**Քիմիական հետախուզությունը** կատարվում է օդում, տարածքի, տեխնիկայի վրա, արտադրական օբյեկտներում թունավոր նյութերի հայտնաբերման, վարակված գոտու մասշտաբների, խոցող գործոնների զարգացման դինամիկայի որոշման, իրադրության գնահատման համար: Այս խնդիրներն անհնար է լուծել առանց համապատասխան սարքերի և սարքավորման: Քիմիական հետախուզության և հսկողության համար հիմնականում օգտագործվում են քիմիական հետախուզության *գորային սարքերը*: Այս սարքերի օգնությամբ կարելի է բավականին արագ և բարձր աստիճանի հուսալիությամբ որոշել օդում, տեղանքում, ջրում և տեխնիկայի վրա աշխարհի առաջատար երկրների բանակների թունավորող նյութերը, ինչպես նաև այլ քիմիական թունավոր նյութեր /ԶԹՆ/:

Քիմիական հետախուզության ՎՊԽՌ գորային սարքը օդում, տեղանքում և տեխնիկայի վրա թունավոր նյութերի /ԹՆ/ հայտնաբերման համար է: Այն տեղակայված է կափարիչով պատյանի մեջ, որն ունի գոտի՝ տեղափոխման համար: Պատյանում կան ձեռքի պոմպ, պոմպի կցափող, ցուցանշման խողովակներով 3 թղթյա պարկուճ, պաշտպանիչ թասակներ, լապտեր, ջեռակ՝ իր փամփուշտներով: Արտաքին կողմից պատյանին ամրացված է բահ՝ նմուշ վերցնելու համար:

Օդում ԹՆ-ի որոշումը սկսվում է զարհնից, ապա՝ զոման, VХ, ֆոսգեն, կապտաթթու, քլորցիան, իպրիտ: Յուրաքանչյուրի համար օգտագործվում են պատյանում պարունակվող համապատասխան ցուցանշման խողովակները:

Օդում թունավոր և վթարային քիմիական վտանգավոր նյութերի /քլոր, ամոնիակ և այլն/ գոլորշիների հայտնաբերման համար է ԳՍԱ-3 գորային ավտոմատ գազազդանշանիչը: Այն աշխատում է օդի անընդհատ հսկման ռեժիմով, ազդարարման լուսային և ձայնային ազդանշաններ արձակելով օդի՝ առաջադրվածից բարձր խտություններ հայտնվելիս:

Օդում վտանգավոր թունավոր նյութերի խտությունը կարելի է չափել ցուցանշման խողովակների /ԻՏ/ օգնությամբ: Վերջիններիս **առավելություններից են՝**

- անմիջապես տեղում օդի նմուշ վերցնելու, անալիզի և արդյունքներն ստանալու արագությունը,
- սարքի և մեթոդի պարզությունը, որը թույլ է տալիս անալիզ կատարել նույնիսկ առանց հատուկ պատրաստություն ստացած անձանց,
- սարքի փոքր չափսերը, քաշը և ցածր արժեքը,
- բավարար զգայունությունը և անալիզի ճշգրտությունը:

Այս առավելությունները նպաստում են ԻՏ-ի լայն կիրառմանը տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում՝ օդում և գազային միջավայրում վնասակար նյութերի հսկողության համար:

ԻՏ-ի աշխատանքի հիմքում ընկած է էքսպրես-մեթոդը, որը հիմնված է ցու-

ցանձման խողովակի լցանյութի զանգվածի և գույնի փոփոխման ու արձագանքող շերտի երկարության չափման վրա:

Հողում և սորում նյութերում ԹՆ-ի որոշման համար հողի նմուշը վերցվում է ցուցանման խողովակի, պոմպի, բահի օգնությամբ:

Շրջակա միջավայրի քիմիական աղտոտումների արագ գնահատման համար է ծառայում «Մեղու-Ռ» մինի-էքսպրես-լաբորատորիան: Այդ սարքի օգնությամբ կատարում են աղտոտվածության **էքսպրես-անալիզ**՝

- օդինը՝ ցուցանման խողովակների օգնությամբ,
- ջրինը /խմելու, բնական, հոսող/՝ թեստերի օգնությամբ,
- հողի և սորում միջավայրերինը /փոշի, անհայտ ծագման աղեր, միներալներ և այլն/՝ դրանց ջրային մզվածքներով՝ թեստերի օգնությամբ,
- բանջարեղենների և մրգերի հյութերինը՝ միտրատ-թեստի օգնությամբ:

Տեղանքում, տեխնիկայի, հագուստի և այլ առարկաների վրա ԹՆ-ի որոշման համար առավել վարակված նշաններով տեղամասերում գլխադիրը հպում են մակերևույթին, խողովակով պոմպի օգնությամբ օդ են մղում: Ապա հանում են գլխադիրը, ցուցանման խողովակը և որոշում ԹՆ-ն:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկե՛ք ճառագայթային հետախուզության հիմնական սարքերը:
2. Ներկայացրե՛ք «Բելլա» կենցաղային բաժնեչափիչի աշխատանքային ռեժիմները:
3. Ո՞րն է իոնացնող ճառագայթումների չափման իոնացնող մեթոդի էությունը:
4. Տվե՛ք բաժնեչափական հսկողության սարքերի բնութագիրը:
5. Տվե՛ք քիմիական հետախուզության գորային սարքի բնութագիրը:
6. Թվարկե՛ք «Մեղու-Ռ» մինի-էքսպրես-լաբորատորիայի առավելությունները շրջակա միջավայրի քիմիական ախտոտումների արագ գնահատման համար:

## Բնակչության պաշտպանության հիմնական ճևերը

**Տարհանում:** Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրությունում բնակչության պաշտպանության հիմնական եղանակներից մեկը բնակչության ժամանակավոր տեղափոխումն է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ: Դա կոչվում է **տարհանում**:

Տարհանմանը նախորդում է բնակչության ազդարարումը: Տարհանման միջոցառումները կազմակերպում և ղեկավարում է տեղական ինքնակառավարման մարմինը:

Բնակչության տարիանումը՝ կախված պահանջներից, պայմաններից և հնավորություններից, կատարվում է հետիոտն շարասյուններով և փոխադրամիջոցներով:

Տարիանումը լինում է *ընդհանուր* և *մասնակի*:

Տարիանումն իրականացվում է նախապես մշակված պլանով: Տարիանման երթուղիները ճշգրտվում են տարիանման հավաքակալայաններում:

Նախքան տարիանումը բնակիչը **պարտավոր է՝**

- հավաքել փաստաթղթերը, դրամը,
- իր հետ վերցնել հագուստ, առաջին անհրաժեշտության պարագաներ, 3 օրվա սննդամթերք: Վերցրած իրերի քաշը չպետք է գերազանցի 50 կգ-ը՝ փոխադրամիջոցով տարիանվելու դեպքում: Իսկ հետիոտնի դեպքում այդ քաշը պետք է համապատասխանի անձի ֆիզիկական հնարավորությանը,
- հոսանքազրկել բնակարանը և անվտանգ տեղեր փոխադրել քիմիական վտանգավոր, հրդեհավտանգ և պայթյունավտանգ նյութերն ու իրերը:

Տարիանման հաջողությունն էապես պայմանավորված է կազմակերպվածությամբ և կարգապահությամբ:

Տարիանվածներին անվտանգ գոտում ընդունում, գրանցում և տեղաբաշխում է տարիանման ընդունման կետը:

Որոշակի աղետների, վթարների դեպքում /երկրաշարժ, հրդեհ և այլն/ անհրաժեշտ է քաղաքացիական շինություններից մարդկանց արագընթաց հեռանալը /դուրս գալը, լքելը/: Արագընթաց հեռանալ հասկացությունն էականորեն տարբերվում է վերը նկարագրված տարիանումից:

**Ո՞րն է այդ տարբերությունը՝**

- այստեղ որպես «վտանգավոր տարածք» պետք է հասկանալ հիմնականում շինությունն իր որոշակի հեռավորությամբ, մերձակայքով, իսկ «անվտանգ տարածք»՝ շինությունից որոշակի հեռավորությունից սկսվող մերձակայքը,
- շինությունից արագընթաց հեռանալուն տրվում է խիստ սահմանափակ ժամանակ՝ մի քանի րոպե, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ տասնյակ վայրկյաններ,
- շինությունից արագընթաց հեռանալը սահմանափակվում է սենյակ-միջանցք-աստիճանավանդակ-միջանցք-ելք-մերձակայք երթուղիով,
- շինությունից արագընթաց հեռանալու ժամանակ փաստաթղթեր, սնունդ, հագուստ և այլ պարագաներ վերցնելու ժամանակ և անհրաժեշտություն չկա:

Շինությունում գտնվող բոլոր մարդկանց արագընթաց հեռանալը նաև թիմային գործընթաց է, որի ապահովման համար անհրաժեշտ են նախապատրաստական, կազմակերպական աշխատանքներ:

Նախ, անհրաժեշտ է շենքի **հատակագծի ուսումնասիրությունը՝**

- սենյակները /չափսեր, բացվածք, մարդկանց քանակ/,
- միջանցքները /չափսեր/, աստիճանավանդակները /չափսեր, աստիճանների քանակ, շրջադարձեր/,
- ելքերը /հիմնական և պահեստային, չափսեր/:

Պետք է քննարկել նաև հնարավոր այլ ելքերը: Դրանք հիմնականում առաջին և երկրորդ հարկերի պատուհաններն են: Առաջին հարկում հիմնական խոչընդոտը պատուհանների վանդակաճաղերն են: Պետք է ապահովել այդ պատուհանների թողունակությունը: Երկրորդ հարկի պատուհանների օգտագործման հնարավորությունը պայմանավորված է գետնից դրանց բարձրությամբ, դուրս թռչողների ֆիզիկական տվյալներով և այլն: Անհրաժեշտ է որոշել նաև շենքից անվտանգ մերձակայքի հեռավորությունը: Այն 5 մ է և ավելի՝ կախված աղետի, վթարի տեսակից, շենքի բարձրությունից և այլն:

Կազմվում է յուրաքանչյուր սենյակից, հարկից արագընթաց շարժման պլանը, որոշվում են սենյակների, հարկերի պատասխանատուները: Կոլեկտիվի բոլոր անդամները մանրակրկիտ ծանոթանում են պլանին:

Ղեկավարի որոշումով համապատասխան ազդարարումից հետո շենքում բոլոր գտնվողները պետք է շարժվեն ըստ համապատասխան պլանի՝ միասնական, առանց խուճապի և, գլխավորը, արագ: Լավագույն արդյունք ստանալու համար շենքից արագընթաց հեռանալու գործընթացն անհրաժեշտ է պարբերաբար փորձարկել՝ նվազագույնի հասցնելով տևողությունը:

Ինչ վերաբերում է դպրոցական մասնաշենքերից արագընթաց հեռանալու հարցին, բնական է, որ այստեղ պլանները պետք է մշակվեն ավելի մանրակրկիտ. օրինակ, յուրաքանչյուր դասասենյակի համար լրացուցիչ պետք է հաշվի առնել միջշարքային հեռավորությունը, դասասեղանների քանակը, դասավորությունը: Պետք է ապահովվեն բոլոր դռների, համապատասխան պատուհանների արագ բացումը: Աշակերտների ուսուցումը, մարզումը պետք է կատարի դասղեկը, իսկ արտակարգ իրավիճակում՝ տվյալ պահին դասը վարող ուսուցիչը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է տարիանումը:
2. Քանի՞ տեսակի տարիանում գիտեք:
3. Տարիանվողի պարտականությունները տարիանումից առաջ:
4. Ինչո՞վ է տարբերվում արագընթաց հեռանալը սովորական տարիանումից:
5. Արագընթաց հեռանալու դեպքում ինչո՞ւ հետները չեն վերցնում փաստաթղթերը, սնունդ և այլ անհրաժեշտ պարագաներ:

## Վարակազերծում և սանիտարական մշակում

Ճառագայթային և քիմիական ուժեղ ներգործող նյութերի արտանետումներով վթարների հետևանքով տեղի է ունենում մարդկանց, կենդանիների, շրջակա միջավայրի, այդ թվում՝ շենքերի, կառուցվածքների, փոխադրամիջոցների և տեխնիկայի, ջրի, սննդամթերքի, պարենային հումքի խոցում: Վերջիններիս վնասակար



*Մեխանիկական զազագերծում*

հազուստը, պարենը, ջուրը: Ապակտիվացման աշխատանքներում օգտագործվում են մակերևութային ակտիվ լվացող նյութեր, կլանիչներ /սորբենտներ/, իոնափոխանակիչ նյութեր: Նյութերի ընտրումը, աշխատանքների կատարման կարգը պայմանավորված են տեղական պայմաններով, վարակման աստիճանով, ստեղծված իրադրությամբ:

**Գազագերծումը** ՈՒՆԹՆ-ի չեզոքացումն է կամ մակերևութից հեռացումը: Դրա համար կիրառվում են *մեխանիկական, քիմիական և ֆիզիկական* եղանակներ: Մեխանիկական եղանակների դեպքում ՈՒՆԹՆ-ը մակերևութի վրայից հեռացնում են քերելով, ջնջելով, լվանալով: Ֆիզիկականի դեպքում օգտագործվում են կրակ առաջացնող հարմարանքներ: Տարածված է մակերևութից ՈՒՆԹՆ-ի հեռացումը տարբեր օբյեկտացնող, քլորացնող քիմիական նյութերի օգտագործմամբ: Հագուստի, կոշիկի զազագերծում կատարվում է հիմնականում եռացնելով, լվանալով, օդափոխմամբ:

**Ախտահանումը** վարակիչ հիվանդությունների հարուցիչների ոչնչացումն է արտաքին միջավայրում:

**Ախտահանումը լինում է՝**

- կանխարգելիչ՝ բնակչության հիվանդացման մշտական սպառնալիքի դեպ-



քում մշտական միջոցառումներ /ձեռքերի, ամանեղենի լվացում, սենյակների խոնավ մաքրում/,

- ընթացիկ՝ վարակիչ հիվանդությունների դեպքում հակահամաճարակային պարտադիր միջոցառումների համալիր /սանիտարահիգիենիկ կանոններ, արտաքին միջավայրի օբյեկտների վարակազերծում և այլն/,
- եզրափակիչ՝ հիվանդի հոսպիտալացումից կամ մահից հետո միջոցառումներ: Հիվանդաբեր մանրէների ոչնչացումը կատարվում է տարբեր եղանակներով՝ ֆիզիկական /բարձր ջերմաստիճաններ գոլորշու, եռացման, լվացման, տաք ար-



*Անճնակազմի սանիտարական մշակում*

դուկի միջոցով/ քիմիական /վարակազերծող լուծույթներով/ և համալիր սանիտարական մշակում:

Վարակազերծումը /ապակտիվացում, գազազերծում, ախտահանում/ ավարտվում է սանիտարական մշակմամբ: Այն լինում է մասնակի և լրիվ:

*Մասնակի սանիտարական մշակումը* կատարվում է անմիջապես վարակման գոտում կամ անհապաղ այդտեղից դուրս գալուց

հետո: Վարակված անձն ինքնուրույն հեռացնում է մաշկի, կոշիկի, հագուստի վրա ընկած ռադիոակտիվ նյութերը, վարակազերծում թունավոր նյութերը, մանրէները:

Ռադիոակտիվ նյութերով վարակման դեպքում հագուստը թափ են տալիս, ավում, կոշիկները սրբում խոնավ շորով, մարմնի բաց տեղերը լվանում:

ՌԻՆԹՆ-ով վարակման դեպքում օգտագործում են անհատական հակաքիմիական փաթեթներ:

*Լրիվ սանիտարական մշակման* դեպքում մարմինը լվանում են տաք ջրով, օճառով: Իսկ հագուստը մշակում են ստացիոնար լվացման կետերում, ցնցուղներով կամ հոսող ջրամբարներում:

## **ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ի՞նչ է վարակազերծումը:
2. Ի՞նչ է գազազերծումը:
3. Ի՞նչ է ախտահանումը:
4. Ե՞րբ և ինչպե՞ս է կատարվում մասնակի սանիտարական մշակումը:
5. Ինչպե՞ս է կատարվում լրիվ սանիտարական մշակումը:

## Գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանությունը

Արտակարգ իրավիճակներում գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության միջոցառումները կատարվում են բնակչության համար բարձրորակ գյուղատնտեսական մթերքների ամխափան արտադրության, ագրոարդյունաբերական համալիրի մշտական աշխատանքի ապահովման, արտակարգ իրավիճակներից կորուստների նվազեցման համար:

Հայաստանի Հանրապետության տարածքը ենթակա է բնական աղետների ազդեցությանը՝ ջրհեղեղներ, սելավներ, երկրաշարժեր, բնական հրդեհներ, սողանքներ և այլն:

Աղետներից շատերը կարելի է կանխարգելել: Օրինակ, ջրհեղեղների դեմ պայքարի նպատակով կառուցում են գետերի ջրի հոսանքը կարգավորող ջրամբարներ, պաշտպանիչ ամբարտակներ, բարձրացվում և ամրացվում են գետերի ավերը, մաքրվում գետերի հունները և այլն: Իսկ ջրհեղեղի սպառնալիքի դեպքում տարհանվում են բնակչությունը, անասունները, պաշտպանական միջոցառումներ են իրականացվում գյուղատնտեսական հանդակների, արտադրանքի պահպանության համար և այլն: Նույնը կարելի է ասել նաև սելավների, սողանքների նկատմամբ: Իսկ երկրաշարժերը, իհարկե, կանխել հնարավոր չէ: Բայց ահա, գյուղատնտեսության խոցելիությունը կարելի է նվազեցնել, այսինքն՝ բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանվածությունը:

Գյուղատնտեսական օբյեկտների համար մեծ վտանգ են ներկայացնում բնական հրդեհները:

Վաղօրոք իրականացված հակահրդեհային միջոցառումները զգալիորեն նվազեցնում են հրդեհների ծագման հնարավորությունները և կորուստները: Առաջին հերթին անհրաժեշտ է հրդեհային անվտանգության կանոնների պահպանության ուղղությամբ լայն բացատրական աշխատանք տանել բնակչության, անտառային տնտեսության, գյուղատնտեսական օբյեկտների աշխատողների հետ:

Հրդեհների ծագման դեպքում առաջնահերթ խնդիր է դառնում մարդկանց և կենդանիների փրկությունը: Անասնապահական ֆերմայում հրդեհի վերացման հա-



*Անասունների կերակրում անասնապահական ֆերմայում*

մար ներգրավվում են կենդանիների պաշտպանության անձնախումբը, ձեռքի տակ եղած բոլոր միջոցները:

Գյուղատնտեսական օբյեկտներում արտադրական վթարների կանխարգելման միջոցառումներն իրենցից ներկայացնում են կազմակերպական, ճարտարագիտական-տեխնիկական աշխատանքների համալիր, որն ուղղված է վթարների ծագման հնարավորության առավելագույն նվազեցմանը, իսկ ծագելու դեպքում՝ կորուստների կրճատմանը:

Միջոցառումների համալիրն **ընդգրկում է՝**

- կենդանիների և բույսերի պաշտպանության անձնախմբի ստեղծումը,
- նորմերին համապատասխան անասնապահական շինությունների, կերի ամբարների, ֆերմաների էներգամատակարարման և ջրամատակարարման համակարգերի կառուցումը և շահագործման հանձնումը,
- հրդեհային անվտանգության կանոնների պահպանումը,
- անասնապահների ուսուցումը՝ այրվող շենքերից կենդանիների փրկության հմտություններ ձեռք բերելու համար,
- անասնակերի, հակաբիոտիկների, պատվաստանյութերի, հակաթույների պաշարների ստեղծումը:

Արտակարգ իրավիճակներում անասնապահական արտադրության կայունության ապահովման համար անասնապահական ֆերմաների և անասնակերային բակերի տարածքում անհրաժեշտ է ողջ անասնագլխի համար ստեղծել կերի պաշար՝ 30–45 օրվա համար:

Արտավայրային պայմաններում արտակարգ իրավիճակներից կենդանիների պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է տեղական նյութերից ստեղծել արտավայրային պարզագույն թաքստոցներ /ծածկեր, ոչխարանոցներ, ջերմանոցներ/:

Իսկ եթե կենդանիներին պատասպարելու հնարավորություն չկա, ապա տարհանում են: Այն իրականացվում է ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային տրանսպորտով կամ ուղղակի քշելով:

Արտակարգ իրավիճակների որոշակի պայմաններում օգտագործվում են կենդանիների համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցներ: Տնտեսությունները ձեռքի տակ եղած նյութերից պատրաստում են հակափոշային դիմակներ, որոնք ճառագայթակտիվ փոշուց պաշտպանում են կենդանիների շնչառական օրգանները և արգելակում վարակված կերի ուտելը:

Խոշոր կենդանիների վերջույթները պաշտպանելու համար օգտագործում են խիտ կտորից գուլպաներ կամ կավակրային մածուկ: Կենդանիներին, որոնց վերջույթները նախօրոք թրջված են, քշում են նշված մածուկով լցված խրամատով: Կենդանիների մաշկը պաշտպանելու համար օգտագործում են բրեզենտից, պարկագործվածքից, թաղանթից կամ այլ նյութերից թիկնոցներ:

Վարակումից անասնակերի, ջրի, անասնապահական արտադրանքի պաշտպանությունն առանձնապես բարդ է բերքահավաքից առաջ բաց երկնքի տակ կուտակված հացահատիկային և բանջարանոցային կուլտուրաների համար: Բերքահավաքի ժամանակ վարակման սպառնալիքի ծագման դեպքում առաջին հերթին, ըստ հնարավորին, դաշտային արտադրանքն անհրաժեշտ է տեղափոխել պահման տեղերը /էլևատորներ, պահեստներ, ամբարներ/: Նման պայմանների բացակայության դեպքում գյուղատնտեսական արտադրանքը հուսալիորեն ծածկում են: Այդ նպատակով ընտրում են հարթ ծածկ, որի շուրջն առվակ են փորում անձրևաջրերը հեռացնելու համար: Հարթակը լավ մաքրում են, տոփանում, ծածկում ծղոտի շերտով և ապա լցնում հացահատիկ: Վերջինս ծածկվում է ծղոտով և ապա՝ պոլիէթիլենային թաղանթով: Կարտոֆիլը, արմատապտուղները և բանջարեղենը հավաքում են կույտերով և ամրացնում են: Խոտի և ծղոտի դեզը ծածկում են թաղանթով, բրեզենտով, կանաչ ճյուղերով և հնարավոր քամուց պաշտպանելու համար ամրացնում ձողերով:

Բույսերի կանաչ զանգվածը հուսալիորեն պաշտպանվում է փակ խրամատում:

Պահեստներում և ամբարներում վարակի սպառնալիքի դեպքում նպատակահարմար է դռների և պատուհանային բացվածքների մեծ մասը փակել աղյուսով կամ սվաղել, շրջանակները կիպ սեղմել բացվածքներից, ապակիները հերմետիկացնել քսուքով, դռների վրա տեղադրել խտացնող միջադիրներ:

Պահեստի պատուհանների պաշտպանության համար ապակիները փոխարինում են ապակե բլոկներով կամ լուսամուտային բացվածքներում կիպ ամրացնում փակոցափեղկեր: Պահեստներում և ամբարներում օդափոխիչ հարմարանքները սարքավորում են հատուկ սողնակներով և մետաղյա թասակներով:

Պահեստների և էլևատորների ներսում օդի վարակազերծման համար տեղադրում են մանրէասպան լամպեր:

Անկախ պահեստային շինությունների պատրաստականության աստիճանից պարենի, սննդի, հումքի բոլոր պաշարներն անհրաժեշտ է ծածկել բրեզենտով, սինթետիկ թաղանթով կամ բազմաշերտ թղթյա պաստառներով:

Ջրամատակարարման աղբյուրների պաշտպանության հիմնական խնդիրն է դրանցում ճառագայթակտիվ տեղումների, կենսաբանական և վիրուսային աերոզոլների և կոյուղաջրերի թափանցման կանխումը: Այդ նպատակով արտեզյան հորերում, ջրաճնշիչ աշտարակներում կատարում են հերմետիկացում, տեղադրում գործվածքից կամ ձեռքի տակ եղած նյութերից գոխչներ և օդափոխիչ խողովակներ: Բաքերը պահում են ջրով լի, փակ վիճակում: Պաշտպանում են ջրհորների գլխամասը: Այն երեսապատում են օդանթափանց նյութով: Ջրի դուրս գալու տեղում 0.3–0.4 մ խորությամբ և 1 մ շառավղով փոս են փորում, որը երեսապատում են կավով և ավազով: Ջրհորը կիպ փակում են կափարիչով: Որպեսզի անձրևի և ձնհալքի ջրերը կողքերից ջրհոր չթափանցեն, եզրով առվակ են փորում:

Ջրադրյուրներում ջրի դուրս գալու տեղում փոքրում են փոսորակ, որի պատերն ամրացնում են աղյուսով, իսկ հատակը՝ կոպիճով: Վերևից փայտյա կտուր են սարքում, վրան՝ տուլ, տուպանած հողի 0.6 մ շերտ: Ջրադրյուրից ջուրը հեռացնում են խողովակով կամ բետոնե առվակով:

Բաց ջրամբարների /գետ, լիճ/ պաշտպանությունը գործնականում անհնար է: Դրանց վարակման դեպքում ջուրը չի կարելի օգտագործել մինչև անասնաբուժական և բժշկական ծառայությունների թույլտվությունը:



## ՀԻՇԻՐ

Բաց ջրամբարների վարակման դեպքում դրանցից պետք է օգտվել միայն բժշկական թույլտվությունից հետո:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արտակարգ իրավիճակներում գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության համար ի՞նչ միջոցառումներ են իրականացվում:
2. Ներկայացրե՛ք հրդեհներից գյուղատնտեսական օբյեկտների պաշտպանության միջոցառումները:
3. Ինչպե՞ս կազմակերպել գյուղատնտեսական արտադրանքի, անասնակերի և ջրի պաշտպանությունը վարակումից:
4. Ներկայացրե՛ք գյուղատնտեսությունում ջրերի և ջրամբարների պաշտպանության միջոցառումները:

## Փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ

Փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքները /ՓԱԱ/ կատարվում են ամենակարճ ժամկետներում՝ աղետի գոտում մարդկանց, նյութական ու մշակութային արժեքները փրկելու համար:

ՓԱԱ-ը բազմաբնույթ են, բազմազան և բազմատեսակ, բայց կազմում են մի ամբողջություն և տարվում են գրեթե միաժամանակ: Դրանց իրականացմանը մասնակցում են տարբեր մասնագիտությունների մարդիկ, հիմնականում՝ փրկարարական ուժեր, տարբեր ծառայություններ, կազմակերպություններ:

**Փրկարարական ուժերը** փրկարարական աշխատանքներ կատարելու համար նախատեսված, տեխնիկական հագեցվածությամբ, մասնագիտացված փրկարարներից բաղկացած կազմավորումներ են:

Փրկարարը փրկարարական աշխատանքներ կատարելու համար նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորված ֆիզիկական անձ է:

Հայաստանի Հանրապետությունում գործում են պետական փրկարարական, ինչպես նաև հասարակական, օբյեկտային և այլ ուժեր: Օբյեկտային փրկարարական ջոկատները գործում են քիմիական, ճառագայթային և այլ վտանգավորության խոշոր օբյեկտներում և մասնագիտացված են:

Հաճախ փրկարարական աշխատանքները /ՓԱ/ կատարվում են արտադրական, բնական բարդ պայմաններում, երբ ժամանակը սահմանափակ է, և աղետի կրկնության վտանգ կա, առավել ևս, որ անհրաժեշտ է տուժածներին փրկել ամենասեղմ ժամկետներում:

ՓԱ-ի հաջողությունը **պահանջում է՝**

- ուժերի և միջոցների արագ ծավալում՝ չսպասելով հետախուզության լրիվ արդյունքներին,



*Փրկարարական ջոկատի անդամները տուժածի տարահանումը*

- փրկարարների օգտագործումն ըստ մասնագիտության: Յուրաքանչյուր խմբում ունենալ տարբեր մասնագիտության մարդիկ, և ամեն մեկը կարողանա շահագործել գոնե մեկ մեքենա,
- անվտանգության կանոնների խիստ պահպանում,
- ՓԱ-ի կատարում լայն ճակատով, ողջ տարածքում,
- օգնության ցուցաբերում առաջին հերթին կյանքի նշաններ ցույց տված տուժածներին:

**Փրկարարական աշխատանքներ են՝**

- խոցման շրջան մեկնելու երթուղու ճարտարագիտական հետախուզությունը,
- փրկարարական ուժերի շարժման ճանապարհին հրդեհների տեղափակումը, շիջումը,
- տուժածների որոնումը և տեխնիկայի օգնությամբ նրանց դուրսբերումը փրկարարական, վնասված և այրվող շենքերից, փլվածքներից, ջրածածկված կառուցվածքներից և վարակված շինություններից,

- ՓԱ-ի կատարում ամենակարճ ժամկետներում: Օբյեկտ ժամանած փրկարարները պետք է անմիջապես աշխատանքի անցնեն լրիվ լարվածությամբ, գիշեր-ցերեկ 2-3 հերթափոխով: Անհրաժեշտ է առաջին 12-14 ժամվա ընթացքում բժշկական օգնություն ցուցաբերել տուժածների հիմնական զանգվածներին,

- առավելագույնս մեծացնել ՓԱ-ի մեքենայացումը,

- խեղդվողների որոնումը և փրկումը /ջրհեղեղի, ջրածածկման, սելավի ժամանակ/,
- փլված նկուղային և այլ շինությունների բացումը և նրանցում գտնվող մարդկանց փրկումը /ամենատարբեր բնույթի բնական և տեխնածին բնույթի աղետների ժամանակ/,
- առաջին օգնության ցուցաբերումը տուժածներին և նրանց տեղափոխումն անվտանգ վայր կամ հանձնումը բժշկական ծառայությանը,
- բնակչության տեղափոխումն անվտանգ վայրեր,
- տուժածների սանիտարական մշակումը և նրանց հագուստի վարակազերծումը:

**Այլ անհետաձգելի աշխատանքները** կատարվում են ՓԱ-ի ապահովման համար: Դրանք հիմնականում վթարավերականգնողական բնույթի են և կատարվում են ինչպես փրկարարական, այնպես էլ տարբեր ծառայությունների, օժանդակ ուժերի կողմից:



*Տուժածների որոնումը փրատակների մեջ*

Աղետի գոտում մնացած բնակչությանը ցուցաբերվում է տարբեր տեսակի օգնություն, **այն է՝**

- ջրով, սննդամթերքով, հագուստով, անկողնային պարագաներով ապահովումը,
- ժամանակավոր կացարաններում, վրաններում տեղավորումը,
- շտապ բուժօգնության կազմակերպումը:

ՓԱ-ի կատարման համար ստեղծվում է **ուժերի խմբավորում**: Այդ խմբավորման կազմը կախված է աղետի տեսակից, մասշտաբներից, պահանջվող աշխատանքների ծավալից, բնույթից և այլն: Ներգրավվում են տեղի ուժերը: Անհրաժեշտության դեպքում նրանց միանում են նաև ուժեր հարևան շրջաններից: Տարածքային և օբյեկտային ուժերը կազմում են խմբավորման առաջին շարքը:

ՓԱ-ի կատարման համար անհրաժեշտ է հետախուզություն, ինչպես նաև նյութատեխնիկական, ճարտարագիտական, քիմիական, բժշկական, հակահրդեհային, տրանսպորտային, բարոյահոգեբանական և այլ ապահովում:

Աղետի շրջանում **հետախուզությունը** տվյալներ է տալիս այդ շրջանում ստեղծված իրավիճակի և այնտեղ տանող երթուղիների մասին: Ժամանակին հայթայթված տվյալներն անհրաժեշտ են բնակչության պաշտպանության, ՓԱ-ի կատարման, աղետի կամ վթարի տեղափակման և այլնի մասին հիմնավորված որոշում կայացնելու համար: Հետախուզությունը որոշում է աղետի օջախի սահ-

մանները և տարածման ուղղությունը, վտանգի ենթակա օբյեկտները և բնակավայրերը, մարդկանց կուտակման տեղերը, աշխատանքային տեխնիկայի մոտեցման ուղիները, վնասված կառույցների վիճակը և դրանցում տուժածների առկայությունը, իրականացվելիք աշխատանքների ծավալը և կատարման պայմանները, մեքենաների օգտագործման հնարավորությունը:

Հետախուզությունը լինում է օդային, ցամաքային և ստորջրյա, ինչպես նաև՝ ընդհանուր /տեղազննություն/ և հատուկ /մասնագիտական/:

ՓԱԱ-ի *ճարտարագիտական ապահովումը* նյութատեխնիկական միջոցների մատակարարումն է, տեխնիկական աշխատանքային վիճակում պահելը, սննդամթերքով, ջրով, տարբեր նյութերով, գործիքներով ապահովելը:



*Փվածքի մաքրում*

Գիշերային պայմաններում ՓԱԱ-ի կատարման համար լուսավորումը կատարվում է լուսարձակների, փողոցային կանթեդների, հրշեջ մեքենաների վրա տեղադրված լամպաշարերի, խարույկների, ջահերի և այլնի օգնությամբ:

*Բժշկական ապահովումն* ուղղված է ՓԱԱ կատարողների առողջության և աշխատունակության պահպանմանը, տուժածներին բժշկական օգնության ցուցաբերմանը, վարակիչ հիվանդությունների ծագման և տարածման կանխարգելմանը:

Կարևոր նշանակություն ունի ՓԱԱ-ի *բարոյահոգեբանական ապահովումը*: Եթե մինչև աղետն այն իրականացնում են հիմնականում հոգեբան մասնագետները, ապա աղետի ծագման դեպքում բարոյահոգեբանական կարողություն պետք է ցուցաբերեն առաջին հերթին բնակչությունը, ՓԱԱ կատարողները:

## **ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ներկայացրե՛ք փրկարարական աշխատանքների նպատակը և կազմը:
2. Ներկայացրե՛ք այլ անհետաձգելի աշխատանքների նպատակը և կազմը:
3. Որո՞նք են փրկարարական աշխատանքների հաջողության պայմանները:
4. Ներկայացրե՛ք փրկարարական աշխատանքների բարոյահոգեբանական ապահովումը:



# ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

## Արտաքին ազդակների ներգործությունը օրգանիզմի վրա

### Այրվածքներ

Հյուսվածքների վնասվածքը, որն առաջանում է բարձր ջերմության (հեղուկ, գոլորշի), էլեկտրական հոսանքի, քիմիական նյութերի (թթուներ, հիմքեր) կամ ճառագայթների ազդեցության հետևանքով, կոչվում է **այրվածք**:

Համապատասխանաբար տարբերում ենք ջերմային, քիմիական և էլեկտրական այրվածքներ: Այրվածքի խորությունը, աստիճանը, տարածվածությունը պայմանավորված են ազդակի տեսակով և ազդման ժամանակամիջոցով:

Ըստ հյուսվածքների վնասման խորության տարբերում ենք այրվածքների չորս աստիճան:

Առաջին աստիճանի այրվածք: Առաջանում է արևից, տաք հեղուկներից, գոլորշուց: Վնասվում է վերնամաշկը, լինում է կարմրություն, թեթև



1-ին աստիճանի այրվածք



2-րդ աստիճանի այրվածք

այտուց, այրող ցավ, երբեմն՝ քոր: Ինֆեկցիայի վտանգ չկա:

Երկրորդ աստիճանի այրվածք: Առաջանում է արևից, տաք հեղուկներից, կրակից, քիմիական նյութերից: Վնասվում են վերնամաշկը և մաշկը: Վերնամաշկը շերտազատվում է մաշկից, և գոյանում են բշտեր, որոնք լինում են տարբեր չափսերի՝ գնդասեղի գլխիկից մինչև բունցքի չափ: Բշտերը, սովորաբար, առաջանում են այրվածքից անմիջապես հետո: Երկրորդ աստիճանի այրվածքների ժամանակ ցավն ավելի սաստիկ է:

Երրորդ և չորրորդ աստիճանի այրվածքներ: Առաջանում են հրդեհից, եռացրած հեղուկներից, էլեկտրական հոսանքից, շիկացած մետաղներից, քիմիա-

կան նյութերից: Վնասվում են մաշկը, ճարպային և մկանային հյուսվածքները, ընդհուպ մինչև ոսկրային հյուսվածքը: Վնասված հյուսվածքներն անխանում, մահանում են: Մեռած հյուսվածքներն ընդունում են մուգ-գորշավուն տեսք կամ ուղղակի սևանում են:


Այրվածքի ծանրության գնահատականը և աստիճանը որոշելու համար, բացի այրվածքի աստիճանից, հաշվի են առնվում նաև այրվածքի մակերեսը և տեղակայումը: *Այրվածքի մակերեսը* հաշվելու համար ամբողջ մարմնի մակերեսը բաժանում են առանձին մասերի և արտահայտում տոկոսային ցուցանիշով՝ որը կոչվում է «9»-երի եղանակ:

Մարմնի տարբեր մասերի այրվածքները «9»-երի եղանակով հաշվարկելիս **կստացվի՝**

- գլուխ և պարանոց՝ 9%,
- կրծքավանդակի առաջային մակերես՝ 18% (9+9),
- կրծքավանդակի հետին մակերես՝ 18% (9+9),
- վերին վերջույթներ՝ 18% (9+9),
- ստորին վերջույթներ՝ 36% (9+9+9+9):

**Առաջին օգնությունը:** Ջերմային այրվածքների ժամանակ անհրաժեշտ է կանխել ջերմային ազդակը (բոց, շիկացած մետաղ և այլն), մարմնի վնասված մասը ազատել հագուստից, այրված մակերեսին դնել սառը թրջոցներ: Տուժածին տալ խմելու հեղուկներ.

անհրաժեշտ է դիմել շտապ բուժօգնություն կամ տեղափոխել հիվանդանոց: *Այրված մակերեսին չի կարելի քսել բուսական, կենդանական յուղեր, այլ նյութեր:* Երկրորդ աստիճանի այրվածքների ժամանակ *չի կարելի կտրել կամ ծակել առաջացած բշտիկները:* Եթե այրվածքի մակերեսը փոքր է՝ դնել ստերիլ վիրակապ, իսկ եթե մեծ է՝ ծածկել մաքուր սավանով:



«9»-երի եղանակ



## ՉԻՇԻՐ

1. **Չի՝ կարելի** այրված մակերեսին քսել բուսական կամ կենդանական յուղեր, այլ նյութեր:
2. Երկրորդ աստիճանի այրվածքների ժամանակ **չի՝ կարելի** ծակել բշտիկները:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է այրվածքը:

2. Այրվածքների ի՞նչ տեսակներ գիտեք:
3. Առաջին օգնությունն այրվածքների ժամանակ:

## **Արևահարություն, մարմնի ընդհանուր սառեցում, ցրտահարություն**

**Արևահարության և ջերմահարության** ժամանակ օրգանիզմն ավելի շատ ջերմություն է ստանում, քան կորցնում: Երկու դեպքում էլ տեղի է ունենում օրգանիզմի ջերմահարում՝ առաջացնելով կենտրոնական նյարդային, ինչպես նաև սիրտ-անոթային ու շնչառական համակարգերի գործունեության փոփոխություններ:

Օրգանիզմի **ջերմահարությանը** կարող են նպաստել ծանր ֆիզիկական աշխատանքը, քիչ ջուր խմելը, շատ ուտելը, ակոհոլը, ճարպակալումը, ուղեկցող վնասվածքները և այլն:

**Թեթև** արտահայտված ջերմահարության ժամանակ հիվանդի վիճակը լինում է բավարար: Չգացվում է գլխացավ, թուլություն: Մաշկային ծածկույթը խոնավացած է, շնչառությունը, սրտի աշխատանքը՝ արագացած:

**Միջին** ծանրության ջերմահարության ժամանակ հիվանդները զգում են ուժեղ գլխացավ, սրտխառնոց, փսխում, մաշկը կարմրած է, խոնավ, շնչառությունը՝ մինչև 40 մեկ րոպեում, ջերմությունը՝ մինչև 39–40°C, արտահայտված սրտխփոց, հնարավոր է արյան ճնշման բարձրացում:

**Ծանր** աստիճանի ջերմահարության ժամանակ ջերմությունը 40°C է և ավելի, հիվանդները գրգռված են, շրջապատի հետ կապի մեջ մտնում են դժվարությամբ, կարող են առաջանալ ցնցումներ և գիտակցության կորուստ: Մաշկային ծածկույթը չոր է, կարմրած, շնչառությունը՝ մակերեսային և արագ, պուլսը հաճախացած է, արյան ճնշումը՝ ընկած:

**Առաջին բուժօգնություն:** Թեթև ջերմահարության ժամանակ բավական է տուժածին տեղափոխել ստվերոտ, սառը տեղ, խմացնել սառը ըմպելիքներ, սառը թրջոցներ դնել մարմնին, փաթաթել թաց սավանով: Ալկոհոլ չի կարելի, քանի որ վերջինս լրացուցիչ ընկճում է կենտրոնական նյարդային համակարգի գործունեությունը:

**Միջին** ծանրության ջերմահարության ժամանակ, բացի վերոհիշյալ միջոցներից, ավելացնել դեղորայքային ջերմ իջեցնողներ (անալգին, ամիդոպիրին, ասպիրին և այլն):

**Ծանր** աստիճանի ջերմահարության դեպքում վերոհիշյալ միջոցներից հետո հիվանդին տեղափոխել հիվանդանոց՝ հետագա բուժման համար:

**Ընդհանուր սառեցում:** Ընդհանուր սառեցման ժամանակ օրգանիզմի ջերմաստիճանը կարող է իջնել +35°C և ավելի ցածր, որի ժամանակ ընկճվում են օրգանիզ-

մի համար կարևոր կենսական պրոցեսները, առաջին հերթին՝ շնչառությունը և արյան շրջանառությունը: Շնչառությունը դանդաղում է, արյան ճնշումն ընկնում, պուլսը՝ դանդաղում:

Ընդհանուր սառեցման պատճառ կարող են դառնալ օդի խոնավությունը, շարժման արագությունը և սառը միջավայրի ազդեցության տևողությունը: Ընդհանուր սառեցման ավելի շատ ենթակա են ակոհով ընդունած մարդիկ: Ջրում ավելի շուտ են ընդհանուր սառեցման ենթարկվում, քան օդում: Օրինակ, սառցակալած ջրում ընդհանուր սառեցումից մարդ կարող է մահանալ 5–10 րոպեի ընթացքում:

Ընդհանուր սառեցման ծանրության աստիճանը կախված է օրգանիզմի ջերմաստիճանի իջեցման չափից:

*1-ին աստիճան* (օրգանիզմի ջերմաստիճանը՝  $+32$ -ից  $+30^{\circ}\text{C}$ ):

Տուժածը կաշկանդված է զգում, խոսակցականը՝ դժվարացած, շարժումները՝ սահմանափակ, նկատելի է մկանային դող: Մաշկը գունատ է, արյան ճնշումը կարող է բարձրանալ, պուլսը և շնչառությունը հակում ունեն դանդաղելու:

*2-րդ աստիճան* (օրգանիզմի ջերմաստիճանը՝  $+30$ -ից  $+27^{\circ}\text{C}$ ):

Գիտակցությունը մթազնում է կամ կարող է կորցնել: Ինքնական շարժումները բացակայում են, մաշկը գունատ է, մարմարի երանգի, արյան ճնշումն ընկած է, պուլսը՝ դանդաղ, շնչառությունը՝ մակերեսային և դանդաղ:

*3-րդ աստիճան* (ցնցումների շրջան, ջերմաստիճանը՝  $+26$ -ից  $+24^{\circ}\text{C}$ ):

Գիտակցությունը լրիվ բացակայում է, բիբերը նեղացած են, լույսի նկատմամբ ռեակցիան թուլացած կամ բացակայում է: Պուլսը շոշափվում է միայն խոշոր զարկերակների վրա, շնչառությունը՝ դանդաղած: Հետագա սառեցումը հանգեցնում է շնչառության և ապա՝ սրտի աշխատանքի դադարեցման:

**Առաջին բուժօգնությունը:** Գլխավոր նպատակն օրգանիզմի տաքացումն է:

1-ին աստիճանի ժամանակ դուրս բերել սառը միջավայրից՝ տեղափոխելով տաք տեղ: Եթե շորերը թրջված են, ապա անմիջապես փոխել, հիվանդին փաթաթել տաք վերմակով, սավանով, տալ տաք ըմպելիք: *Ալկոհոլը բացառել:*

2-րդ և 3-րդ աստիճանների ժամանակ, բացի վերոհիշյալ միջոցառումներից, անհրաժեշտ է տուժածին տեղափոխել մոտակա բուժօգնության:

Եթե առաջացել է սրտի կամ (և) շնչառական կանգ, ապա պետք է կատարել նաև սիրտ-թոքային վերակենդանացում (արհեստական շնչառություն, սրտի անուղղակի մերսում):

**Գրտահարությունը** օրգանիզմի վրա ցածր ջերմաստիճանի տեղային ազդեցությունն է: Հիմնականում ցրտահարվում են մարմնի բաց մասերը (քիթ, ականջ, մատ):

Կախված ցրտահարության աստիճանից՝ տուժում են վերնամաշկը, բուն մաշկը, ենթամաշկային հյուսվածքները, մկանները և նույնիսկ ոսկրերը: Դրանց ազդեցությամբ գոյացած քայքայման արգասիքները ներծծվում են արյան մեջ և

առաջացնում ընդհանուր երևույթներ՝ ջերմության բարձրացում, կարող են առաջ բերել երիկամային սուր անբավարարություն:


**1-ին աստիճանի** ցրտահարության ժամանակ մաշկը կարմրած է, այտուցված կամ կապտավուն երանգի:

**2-րդ աստիճանի** ժամանակ առաջանում են բշտեր արյան պարունակությամբ:

**3-րդ աստիճանի** դեպքում բշտերը բացվելուց նկատելի են մեռած հյուսվածքների մուգ դաշտեր:

**4-րդ աստիճանի** ժամանակ մեռուկանում են բոլոր հյուսվածքների շերտերը, այդ թվում և ոսկրերը՝ ստանալով սև գույն:

**Առաջին բուժօգնությունը:** Տուժածին բերել տաք միջավայր: Եթե ձեռքերը և ոտնաթաթերն են ցրտահարվել, ապա հանել ձեռնոցներն ու գուլպաները: Ցրտահարված վերջույթը շփել չոր գործվածքով, այնուհետև դնել  $+24^{\circ}\text{C}$  ջրով լրգարանի մեջ և 20 րոպեի ընթացքում աստիճանաբար ջրի ջերմաստիճանը բարձրացնել մինչև  $36-40^{\circ}\text{C}$ : Սկզբում տաքացնելուց ցավը ուժեղանում է, սակայն արագ անցնում, մատների այտուցը քչանում է կամ լրիվ անցնում, զգացողությունը վերականգնվում է: Այնուհետև վերջույթը չորացնել, շփել 33% սպիրտով և հազցնել սովորական գուլպա, իսկ վերջինիս վրայից՝ բրդյա գուլպա: Եթե ցավերը չեն անցնում, ապա պետք է ցավազրկել դեղամիջոցներով: Ծանր դեպքերում ցրտահարված շրջանը վիրակապել վարակազերծ վիրակապով և տեղափոխել հիվանդանոց:



**Ցրտահարություն**  
1. 2-րդ և 3-րդ աստիճան, մատները 4-րդ աստիճան, 2. բուք մատը 3-րդ աստիճան, 3. 4-րդ աստիճան, 4. 4-րդ աստիճան (չոր զանգրենայի փուլ)



## **Քիմիական այրվածքներ: Էլեկտրավնասվածք: Ջրահեղձում: Ճառագայթային ախտահարումներ**

**Քիմիական նյութերի ազդեցության** դեպքում այրվածքներ են առաջանում անմիջականորեն մաշկի կամ լորձաթաղանթի վրա: Քիմիական նյութերից այրվածքներ առաջացնում են թթուները, հիմքերը, ծանր մետաղների աղերը, կենցաղում օգտագործվող քիմիական նյութերը: Քիմիական նյութերի նկատմամբ շատ զգայուն են դեմքի մաշկը, քթի, բերանի և կերակրափողի լորձաթաղանթը, աչքերը:

**Առաջին օգնությունը:** Ընդհանրապես քիմիական այրվածքների ժամանակ

այրված մասը պետք է լվանալ հոսող ջրով: Լվանալուց հետո դնել չոր վիրակապ: Աչքերի քիմիական այրվածքների ժամանակ աչքերը լվանալ հոսող ջրով՝ ինչքան հնարավոր է երկար ժամանակ: *Չի կարելի* աչքերը մաքրել մառլայով կամ բամբակով, *արգելվում է* ձեռքերով տրորել աչքերը: Պետք է կանչել շտապ բուժօգնություն կամ տուժածին տեղափոխել հիվանդանոց:

**Էլեկտրահարություն** Էլեկտրական հոսանքի ազդեցությունն է օրգանիզմի վրա: Ուժեղ հոսանքը վնասում է կենտրոնական նյարդային համակարգը: Էլեկտրական հոսանքի ազդեցությունը կախված է նաև մաշկի դիմադրության մեծությունից. որքան դիմադրությունը բարձր է, այնքան այն պաշտպանիչ է օրգանիզմի համար: Օրինակ, խոնավ ձեռքերով հոսանքին դիպչելն ավելի վտանգավոր է, քան չոր ձեռքերով, քանի որ խոնավ մաշկի դիմադրությունն ընկնում է: Էլեկտրական հոսանքից առաջանում են նաև այրվածքներ, հյուսվածքների պատռվածքներ:

Էլեկտրահարության տարատեսակներից է կայծակնահարությունը: Կայծակների (ամպրոպների) հաճախականությամբ Կովկասում Հայաստանը գրավում է առաջին տեղը: Կայծակը (շանթը) բնական էլեկտրական երևույթ է՝ Էլեկտրական պարպում լիցքավորված ամպերի և երկրի միջև: Այն ուղեկցվում է փայլատակումով և որոտով: Կայծակի ժամանակ ջերմաստիճանը հասնում է 25000°C:

Մարդիկ կայծակնահարվում են այն դեպքում, երբ ամպրոպի ժամանակ տվյալ տեղանքում ամենաբարձր կետն են կամ մոտ են գտնվում միայնակ ծառերին, մետաղյա ցանկապատերին և իրերին: Կայծակնահարության ժամանակ առաջանում են տուժածի բոլոր մկանների կծկումներ (այդ թվում՝ սրտամկանի և շնչառական մկանների), որը հանգեցնում է շնչառության և սրտի կանգի: Կայծակնահարության ժամանակ մաշկի վրա կարող են առաջանալ նաև ծանր այրվածքներ:

**Առաջին օգնությունը:** Էլեկտրահարության դեպքում առաջին հերթին պետք է տուժածին անջատել հոսանքակիր առարկայից: Ցանկալի է աշխատել ռետինե ձեռնոցներով կամ կանգնել չոր ու լայն տախտակի, ֆաներայի վրա: Եթե հնարավոր չէ շտապ անջատել հոսանքը, ապա էլեկտրական լարերը կտրել փայտյա կամ սինթետիկ բռնակ ունեցող գործիքներով (կացին, ուրագ): Լարերը կտրել տարբեր մակարդակների վրա, որպեսզի ծայրերն իրար կաշեւուց կարճ միացում չտան: Եթե մարդը ենթարկվել է բարձր լարման հոսանքի ազդեցությանը, և լարը անցնում է նրա վրայով, ապա լարը հեռացնել երկար, չոր փայտի կամ մեկուսիչ ձողի միջոցով, այնուհետև տուժածին մոտենալ փոքր քայլերով կամ 2 ոտքով ցատկելով, որպեսզի չվնասվեն քայլային հոսանքից:

Եթե տուժածը ողջ է, ապա ահազանգել շտապ բուժօգնություն, իսկ եթե առկա է կլինիկական մահ, ապա կատարել սիրտ-թոքային վերակենդանացում, մինչև այն ժամանակ ահազանգել շտապ բուժօգնություն: Պետք է հիշել, որ էլեկտրահարու-

թյան դեպքում (ինչպես և կայծակնահարության) չի կարելի տուժածին որոշ ժամանակ թաղել հողում. դա ոչ միայն աղտոտում է վերքերը և այրվածքները, այլև ժամանակի անտեղի կորուստ է: Պետք է հիշել, որ գիտակցությունը վերականգնվելուց հետո տուժածներն անհանգիստ են, գրգռված, գանգատվում են ուժեղ ցավերից: Նրանց պետք է տալ տաք թեյ, մեծ քանակությամբ այլ հեղուկներ:

**Ջրահեղձումը** դժբախտ պատահար է, երբ տուժողները խեղդվում են լճում, լողավազանում, ջրավազանում, գետերում և ծովում (փոքր երեխաները խեղդվել են նույնիսկ մեծ ջրամանների մեջ):

**Առաջին օգնությունը:** Խեղդվածին դուրս բերել ջրից: Բերանի խոռոչը, վերին շնչուղիները մաքրել ավազից ու տիղմից, ազատել շնչուղիները ջրից: *Այդ նպատակով պետք է տուժածի գլուխը թեքել ցած, ձեռքով որովայնից բարձրացնել վեր:* Որպես օրենք՝ բոլոր խեղդվածներին պետք է համարել կարծեցյալ մահացածներ, և նման դեպքերում պետք է անմիջապես անցնել վերակենդանացման միջոցառումների՝ կատարել սրտի անուղղակի մերսում և արհեստական շնչառություն: Տուժածին ուշքի բերելուց հետո տալ տաք թեյ, ծածկել տաք ծածկոցով և տեղափոխել հիվանդանոց:

**Ճառագայթային ախտահարումներ:** Ռադիոակտիվությունը կամ ճառագայթումը մեր ամենօրյա կյանքում հաճախակի հանդիպող ֆիզիկական, բնական երևույթներից է:

Գոյություն ունեն տարբեր տեսակի ճառագայթումներ, օրինակ՝ *ոչ իոնացված* (ռադիոալիքներ, լույս, ուլտրամանուշակագույն ճառագայթում, մագնիսամիջուկային ճառագայթում և այլն): Այս դեպքում իոններ չեն գոյանում: Եվ այդ հատկանիշով են առանձնանում իոնացված և ոչ իոնացված ճառագայթումները:

**Իոնացված ճառագայթումն** առաջանում է միջուկի քայքայումից: Իոնացված ճառագայթման մասին անհրաժեշտ է իմանալ և հիշել հետևյալը.

*Ալֆա ճառագայթումն* իրենից ներկայացնում է ատոմի միջուկից դրական լիցքավորված մասնիկների ճառագայթում (պրոտոնների և նեյտրոնների հոսք): Ալֆան օրգանիզմ է թափանցում սննդի, հեղուկների կամ օդի միջոցով՝ մեծ վնաս պատճառելով օրգանիզմին և կենսական հյուսվածքներին: Դրանց թափանցումը լիովին կարող է կանխել սովորական թուղթը:

*Բետա ճառագայթումն* իրենից ներկայացնում է էլեկտրոնային հոսք: Բետան կարող է թափանցել ավելի խորը, քան ալֆան՝ 1–2 սմ ջրային միջավայրում: Բետա ճառագայթումը կարելի է կանխել՝ մաշկը կամ միջավայրը ծածկելով մինչև 1 սմ հաստության ալյումինի թիթեղով:

*Գամմա ճառագայթումը* էլեկտրամագնիսական ճառագայթում է, արագությունը հավասար է լույսի արագությանը: Այն թափանցում է ամբողջ մարմնի մեջ և հանդիսանում է մարդու ճառագայթվելու հիմնական աղբյուրը: Այն հնարավոր է թուլացնել կամ կանխել արճճի, բետոնի և ջրի շերտով:

Նեյտրոնները, լինելով չլիցքավորված մասնիկներ, չեն կարող անմիջապես առաջացնել իոնացված ճառագայթում, բայց համագործակցելով ատոմների հետ՝ կարող են առաջացնել ալֆա, բետա կամ գամմա ճառագայթում և հանգեցնել միջավայրի իոնացման: Նեյտրոններն ունեն բարձր թափանցելիության հատկություն: Թափանցելիությունը կանխվում է միայն մեծ քանակի ջրով, բետոնի և պարաֆինի շերտով:

Իոնացված ճառագայթումը մարդը չի զգում, չնայած այս դեպքում էներգիայի քանակը բավական է, որ օրգանիզմում առաջացնի անդամնալի փոփոխություններ:

Հետևապես, ճառագայթային վթարի մասին ահազանգ ստանալուց հետո պետք է հետևել ռադիոյով կամ հեռուստացույցով հաղորդվող հրահանգներին: Անհրաժեշտ է փակել դռները, պատուհանները, օդանցքները՝ ռադիոակտիվ մասնիկներից պաշտպանվելու համար: Օգտագործել հատուկ արտահագուստ, դիմակներ, գլխաշոր, ակնոց, ձեռնոցներ և կանխարգելիչ կամ բուժիչ նպատակով ձեռքի տակ ունեցած դեղամիջոցներ (կալիումի յոդիդ և այլն)::

Միաժամանակ անհրաժեշտ է խուճապի չմատնվել, քանի որ ճառագայթումը չի առաջացնում հանկարծամահություն, ակնթարթորեն չի առաջացնում այրվածքներ, վերքեր:

Ճառագայթային շոկ և մահ (շատ մեծ դոզաների, ինչպես նաև օջախներին մոտ գտնվելու դեպքում) կարող է առաջանալ միայն 35–48 ժամ անց: Սրտխառնոց և փսխում (2–3 ժամից 48 ժամ անց՝ կախված դոզայից) և այլ լուրջ հիվանդագին վիճակներ, այրվածքներ առաջանում են ավելի ուշ:

Համապատասխան պաշտպանական միջոցները ժամանակին կիրառելու և բուժումը սկսելու դեպքում կարող ենք նվազագույնի հասցնել հնարավոր բարդությունները:



## ՅԻՇԻՐ

1. Արևահարության և ընդհանուր սառեցման դեպքում **կտրակամապես արգելվում է** տուժածին ակոհոլ տալ:
2. Էլեկտրահարության դեպքում խիստ վտանգավոր է խոնավ ձեռքով հոսանքին դիպչելը:
3. **Չի կարելի** կայծակնահարված հիվանդին թաղել հողի մեջ:
4. Աչքերի քիմիական այրվածքների դեպքում **չի՛ կարելի** աչքերը մաքրել բամբակով կամ մառյալով, կտրակամապես **արգելվում է** ձեռքով տորթել աչքերը:



## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է արևահարությունը (ջերմահարությունը), դրանց տարբեր աստիճանները:
2. Որո՞նք են արևահարվածի առաջին բուժօգնության կանոնները:
3. Նշե՛ք ընդհանուր սառեցման դեպքում տուժածի օրգանիզմի ջերմաստիճանը, առաջին անհրաժեշտ բուժօգնությունը:
4. Նշե՛ք ցրտահարության տարբեր աստիճանները:
5. Ներկայացրե՛ք կայծակնահարված (էլեկտրահարված) հիվանդի հետ վարվելու կանոնները, առաջին բուժօգնությունը:
6. Ինչպե՞ս օգնել քիմիական այրվածքների ժամանակ:
7. Ի՞նչ է ճառագայթումը:
8. Ինչու՞ է վտանգավոր իոնացված ճառագայթումը:
9. Ի՞նչ ախտահարումներ կարող է առաջացնել իոնացված ճառագայթումը:
10. Ինչպե՞ս պետք է պաշտպանվել ալֆա, բետա և գամմա ճառագայթներից:
11. Ինչպիսի՞ քայլեր պետք է ձեռնարկել ճառագայթային աղետի ահազանգի ժամանակ:



## Թունավոր նյութեր, թունավորումներ

**Թունավոր նյութերը** կարող են լինել կենցաղային, դեղորայքային, արդյունաբերական, սննդային, ռազմական նշանակության (քիմիական զենք): Երբ թույնն ազդում է միայն մաշկի և լորձաթաղանթների վրա, առաջանում են քիմիական այրվածքներ, վնասվածքներ կամ վերքեր, իսկ երբ ազդում է մարսողական և շնչառական ուղիների վրա և թափանցում է օրգանիզմ, առաջանում է **թունավորում**:

Հաճախ ներթափանցած թունավոր նյութի ազդեցությունը պայմանավորված է ոչ միայն իրենով, այլ ավելի հաճախ օրգանիզմում նրա վերափոխման արգասիքներով: Շատ մեծ նշանակություն ունի թունավորման ժամանակ օրգանիզմի դիմադրողականությունը, տարիքը, սեռը, այս կամ այն օրգանի ֆունկցիոնալ վիճակը: Որոշակի թույներ ունեն համապատասխան հակաթույներ (անտիդոտներ):

Թունավորման ժամանակ նախաբժշկական **օգնության սկզբունքներն են՝**

- պահպանել օրգանիզմի կարևոր կենսական ֆունկցիաները՝ շնչուղիների, շնչառության, սիրտ-անոթային համակարգի նորմալ գործունեությունը: Եթե թունավոր նյութն ընկել է աչքի մեջ, անհրաժեշտ է 20 րոպե լվանալ սովորական ջրով,

- եթե թույլը թափանցել է բերանի միջոցով, անհրաժեշտ է այն հեռացնել կամ չեզոքացնել աղեստամոքսային տրակտից: Գոյություն ունի հեռացման մի քանի եղանակ: Առաջին եղանակը փսխումն է. այն կարելի է կիրառել, երբ հիվանդը գիտակցություն ունի, շնչուղիները ազատ են, և կերակրափողը վնասված չէ: Երկրորդը ստամոքսի լվացումն է: Երրորդը՝ ակտիվացված ածուխը,
- անհրաժեշտ է մեծ քանակությամբ հեղուկներ խմացնել տուժածին, ինչպես նաև կատարել աղիների մաքրում (մաքրող հոգնա) և անհապաղ ահազանգել շտապ բուժօգնություն:

## Մարտական թունավոր նյութերով թունավորումներ

### Նյարդակաթվածային ներգործության թունավոր նյութեր:

ԹՆ-ի այս խմբին են պատկանում չափազանց բարձր թունավոր ֆոսֆորօրգանական նյութերը (ՖՕՆ)՝ Չարիմը, Չոմանը, V գազերը:

Դրանք հեշտությամբ օրգանիզմ են թափանցում շնչառության օրգանների, վերքի, մաշկի, լորձաթաղանթների, ինչպես նաև աղեստամոքսային տրակտի միջոցով՝ կաթիլահեղուկ, աերոզոլային և գոլորշանման վիճակներում:

Տարբերակում ենք ՖՕՆ ախտահարման երեք աստիճան:

**Թեթև աստիճանը** բնութագրվում է բիբերի նեղացումով, տեսողության սուր անկումով, աչքերի և ճակատային մասում՝ ցավով, թքարտադրությամբ, առատ թթահոսությամբ, սրտխառնոցով, ընդհանուր թուլությամբ:

**Միջին աստիճանի** ախտահարումների դեպքում բրոնխների անցքի նեղացման հետևանքով առաջանում է սուր հևոց: Նկատվում է լորձաթաղանթների կապտություն, շարժումների կոորդինացման խախտում (երերուն քայլվածք), երբեմն՝ փսխում, փորլուծ, դող, սարսուռ:

**Ծանր աստիճանի** ախտահարումն ուղեկցվում է ջղաձգություններով, գիտակցության կորստով, հաճախակի հևոցով, բերանից առատ փրփուրի արտահոսքով: Մաշկը և լորձաթաղանթները խիստ կապտում են: **Առաջին բուժօգնություն չտա-ցած** ծանր հիվանդները մահանում են:

**Մաշկաթարախային ներգործության թունավոր նյութեր:** Այս խմբի թունավոր նյութերից է իպրիտը, որի ներգործությունն արտահայտվում է ինչպես կաթիլահեղուկ, այնպես էլ գոլորշանման վիճակում: Նրա ներթափանցման մեխանիզմը նման է ՖՕՆ-ին: Իպրիտն ունի գաղտնի շրջան, ներգործության պահին ցավը և անդուր զգացողությունները բացակայում են: Աչքի վրա գոլորշանման իպրիտի ներգործության դեպքում 2–4 ժամ հետո աչքերում առաջանում են ծակոցներ, թեթև այրոց, առաջանում է լուսավախություն, արցունքահոսություն, լորձաթաղանթների կարմրում և այտուց, սրտխառնոց, ընդհանուր թուլություն:

Ավելի ուշ (2–5 ժամ գաղտնի շրջանից հետո) առաջանում են մաշկի կարմրություն, ոչ մեծ այտուց, քոր և այրոց: 18–24 ժամ հետո առաջանում են փոքր բշտիկներ, որոնք այնուհետև վերածվում են մեծ բշտիկների:

Ծանր ախտահարումների դեպքում բշտիկներ են հայտնվում թունավորվելուց 3–6 ժամ հետո: Այնուհետև բշտիկների տեղում առաջանում են երկար ժամանակ չապաքինվող խոցեր:

Իպրիտի ընդհանուր թունավորող ներգործությունը դրսևորվում է գլխապտույտով, թուլությամբ, սրտխառնոցով, փսխումով, ջերմաստիճանի բարձրացմամբ, քնկոտությամբ, ընդհանուր ճնշվածությամբ: Ծանր ախտահարվածների մոտ նկատվում են գրգռվածություն և ջղաձգություններ:

**Ընդհանուր ներգործության թունավոր նյութեր:** Այս խմբի թունավոր նյութերից են կապտաթթուն և քլորցիանը: Թունավորումը տեղի է ունենում շնչառության օրգանների ու աղեստամոքսային տրակտի միջոցով:

Կապտաթթուն կաթիլաձեղով վիճակում օրգանիզմ կարող է ներթափանցել վերքերի, լորձաթաղանթների, մաշկի միջոցով: Արագընթաց թունավորման դեպքում մահը կարող է վրա հասնել համարյա ակնթարթորեն: Դանդաղընթաց թունավորման դեպքում սկզբում զգացվում է դառը նշի հոտ, բերանում դառը մետաղական համ, այնուհետև դրսևորվում է բերանի խոռոչի լորձաթաղանթի զգացողության անկում, կոկորդի գրգռում: Առաջանում են սրտխառնոց, գլխացավ, գլխապտույտ, թուլություն: Նկատվում է լորձաթաղանթների և մաշկի վառ վարդագույն երանգավորում, բիբերի լայնացում, ակնագեղի դուրսալքում, հեոց, ջղաձգություն: Այնուհետև վրա են հասնում զգացողության կորուստ, շնչառության և սրտի գործունեության խիստ խանգարում: Անոթազարկը դառնում է հաճախակի, թույլ, ոչ ռիթմիկ: Ավելի ուշ տեղի է ունենում շնչառության կանգ դեռևս աշխատող սրտի դեպքում:

**Հեղձուցիչ թունավոր նյութեր:** Հոգեթմիական ներգործության թունավոր նյութեր: Այսպիսի թունավոր նյութերից են BZ տիպի միացությունները: BZ նյութով թունավորվելիս տուժածի մոտ առաջանում է էյֆորիայի վիճակ (հարբելու զգացում), խախտվում են համաձայնեցված շարժումները (երերուն քայլվածք), առաջանում է մկանային թուլություն: Այնուհետև զարգանում են կենտրոնական նյարդային համակարգի ախտահարման նշաններ: Տուժածները դժվարությամբ են կողմնորոշվում ժամանակի և տեղանքի հարցում: Նկատվում է բիբերի լայնացում, լորձաթաղանթների և մաշկի չորացում, սրտխփոցի սուր հաճախացում: Հնարավոր են հոգեկան գրգռվածություն, շարժողական ակտիվության բարձրացում և շատախոսություն, որից հետո վրա են հասնում հանգստի և արգելակման շրջանները:

Ախտահարման ծանր աստիճանի դեպքում տուժածների գիտակցությունը մթազնում է, խոսակցությունը դառնում է անկապ: Ջարգանում է շարժողական

գրգռվածություն, անհանգստություն, վախի զգացում, տեսողական և լսողական զգայախաբուծություն:

**Արտասովաբեր և գրգռիչ թունավոր նյութեր:** Սրանք այն քիմիական միացություններն են, որոնք գրգռում են գլխավորապես աչքերի զգայուն նյարդային վերջույթներն: Այդպիսի ԹՆ բնորոշ ներկայացուցիչներն են քլորպիկրինը և քլորացետոֆենոնը:

Արտասովաբեր ներգործության ԹՆ թունավորման դեպքում զգացվում են այրոցներ, աչքերի մեջ ծակոցներ, նկատվում է ուժեղ արցունքահոսություն, լուսավախություն, կոպերի սեղմում և այտուց:

Ծանր թունավորումների դեպքում սաստկանում են աչքերի գրգռումը, կոկորդի ու կրծքավանդակի այրոցները, հազը, հարբուխը:

**Գրգռիչ թունավոր նյութերի** խմբին են պատկանում այն միացությունները, որոնք գրգռում են հիմնականում վերին շնչառական ուղիների զգայուն նյարդային վերջույթները: Դրանցից են՝ դիֆենիլքլորարսինը, ադամսիտը, CS նյութերը:

Գրգռիչ թունավոր նյութերով թունավորվելիս նկատվում են փռշտոց, քթնմպանում այրոցի զգացում, քթահոսություն, արցունքահոսություն, հազ: Հայտնվում են ցավեր կրծոսկրի հետևում, գլխացավ, սրտխառնոց:

Ծանր թունավորումների դեպքում այդ ախտանիշներն ուժեղանում են: Շնչառությունը դանդաղում է և դառնում մակերեսային, դեմքը կապտում է: Հաճախ տեղի են ունենում շնչառական և հոգեկան խանգարումներ, մկանային թուլություն, շարժումների համաձայնեցման խախտում:

**Առաջին բուժօգնությունը:** Այս թունավոր նյութերով թունավորվածների կյանքը փրկելու համար առաջին բուժօգնության միջոցառումները պետք է իրագործվեն ամենակարճ ժամկետներում: Անհրաժեշտ է օգտագործել հատուկ դեղամիջոցներ՝ հակաթույներ: Ընդ որում, վճռական նշանակություն ունի ինքնօգնությունը և փոխօգնությունը:

Քիմիական ախտահարման օջախ մտնելուց առաջ փրկարարները պետք է ընդունեն մեկական հաբ հակաթույն 2-ից, հազմեն հակազագ, պաշտպանական հագուստ, պաշտպանական ռետինե երկարաճիտ կոշիկներ և ձեռնոցներ: Պետք է նկատի ունենալ, որ ՖՕՆ-ով, իպրիտով և մի քանի այլ ԹՆ-ով ախտահարվածները զգալի վտանգ են ներկայացնում առաջին բուժօգնություն ցույց տվողներին, նույնիսկ քիմիական խոցման օջախից տարհանվելուց հետո:



## ՅԻՇԻՐ

1. Անկախ ԹՆ-ի տեսակից, ամենից առաջ **անհրաժեշտ է** տուժածին հազգնել հակազագ կամ վնասված հակազագը փոխարինել սարքինով:

2. Հակազագաղ հազցնելուց անմիջապես հետո ծանր տուժածների մկանների մեջ կամ մաշկի տակ ներարկիչ-տյուբիկով **անմիջապես ներարկել** անտիդոտի 2 չափաբաժին, միջին կամ թեթև ծանրության դեպքում՝ 1 չափաբաժին:
3. Մաշկաթարախային ներգործության ԹՆ-ով ախտահարման ժամանակ հակազագաղ հազցնելուց անմիջապես հետո կատարել մաշկի բաց մասերի մասնակի սանիտարական մշակում ԱՀՓ վերցրած հեղուկով և բոլոր տուժածներին տարհանել բուժփիմնարկ:
4. Ընդհանուր ներգործության ԹՆ-ով ախտահարման ժամանակ հակազագաղ անմիջապես հազցնելուց հետո տուժածին շնչելու համար տալ հակաթույն (ջարդել հակաթույնով սրվակը և դնել հակազագաղի դիմակի տակ): Տուժածներին շուտափույթ հանել վարակված գոտուց և տեղափոխել բուժփիմնարկ:
5. Հեղձուցիչ ներգործության ԹՆ-ով վարակված բոլոր տուժածներին հակազագաղ հազցնելուց հետո վարակման օջախից հանել և տեղափոխել մոտակա բուժփիմնարկ: Նրանց վտանգավոր գոտուց հանելիս անհրաժեշտ է **արձակել օձիքը և հագուստի կոճակները՝** շնչառությունը թեթևացնելու համար:
6. Հոգեփիմիական թունավոր նյութերով թունավորվածներին հակազագաղ հազցնելուց հետո **շտապ տեղափոխել** բուժփիմնարկ:
7. Արցունքաբեր և գրգռիչ ԹՆ-ից տուժածներին հակազագաղ հազցնելուց հետո հանել վարակված գոտուց, գրգռումը վերացնելուց հետո լվանալ աչքերը, բերանը ողողել մաքուր ջրով, օգտագործել անտիդոտ:

ԹՆ ախտահարումը կանխելու կամ թուլացնելու նպատակով կատարում են մարդկանց լրիվ կամ մասնակի սանիտարական մշակում, հագուստի, պաշտպանական միջոցների և հանդերձանքի գազազերծում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր նյութերն են կոչվում ԹՆ:
2. Թունավոր նյութերի ի՞նչ խմբեր գիտեք:
3. ԹՆ խմբերի թունավորող հատկությունները:
4. Նշե՛ք առաջին բուժօգնությունը յուրաքանչյուր ԹՆ-ով ախտահարման դեպքում:
5. Ներկայացրե՛ք սանիտարական մշակման ձևերը և կարգը:

## Կենցաղային թունավորումներ

**Թունավորում մեթիլ սպիրտից (մեթանոլ, փայտի սպիրտ):** Մեթիլ սպիրտը տեսքով և հոտով չի տարբերվում էթիլ սպիրտից (զինու սպիրտ): *Մեթանոլի* մահացու չափաբաժինը 40–250 մլ է: Նրա 5–10 մլ քանակությունը խմելը կարող է արդեն առաջացնել կուրություն: Տեսողության վատացումն սկսվում է թունավորման 2–5-րդ օրերին՝ հետագայում առաջացնելով ժամանակավոր կամ մնայուն կուրություն:

Թեթև թունավորման ժամանակ՝ արագ հոգնածություն, գլխացավ, սրտխառնոց:

Միջին ծանրության թունավորման ժամանակ՝ ուժեղ գլխացավ, գլխապտույտ, սրտխառնոց, փսխում, քնկոտություն, անտարբերություն շրջապատի նկատմամբ և այլն:

Ծանր թունավորման դեպքում վերոհիշյալ ախտանիշներն արագ զարգանալով՝ վերածվում են գիտակցության կորստի, հիվանդն ընկնում է կոմայի մեջ: Արտաքին ծածկույթները կապտում են, շնչառությունը դառնում է մակերեսային, բիբերը լայնանում են, արյան ճնշումը՝ ընկնում:

**Անհետաձգելի առաջին օգնությունը:** Ստամոքսի վազում 1–2%-անոց սոդա-ջաջրով կամ սովորական ջրով, լուծողական: Որպես հակաթույն օգտագործում են էթիլ սպիրտը՝ օդու կամ կոնյակի ձևով: Սկզբում տալիս են 100 մլ 30%-անոց լուծույթը, այնուհետև 2 ժամը մեկ՝ 50 մլ քանակությամբ, 4–5 անգամ, իսկ վերջին օրերին 2 անգամ՝ 100 մլ քանակությամբ: Անպայման պետք է դիմել բուժհիմնարկ:

**Թունավորում էթիլ սպիրտից (զինու սպիրտ):** Թունավորումն առաջանում է օդու, կոնյակի, զինու, գարեջրի չարաշահումից: 96% սպիրտի մահացու դոզան հասուն մարդու համար՝ 400–500 մլ, երբ ընդունվում է մեկ ժամվա ընթացքում: Կան սննդատեսակներ, որոնք բավականին դանդաղեցնում են էթիլ սպիրտի ներծծման արագությունը աղեստամոքսային տրակտում, և վերոհիշյալ քանակությունը հարբերականորեն կարող է թունավորման նշաններ չառաջացնել (օրինակ՝ կենդանական ճարպով հարուստ սնունդը, եփած միսը, եփած կարտոֆիլը):

**Թունավորման նշանները:** Սկզբում՝ տրամադրության բարձրացում, շատախոսություն, հետագայում կոնցենտրացիան ավելանալով արյան մեջ՝ հանգեցնում է գիտակցության կորստի (կոմայի): Արտաքին ծածկույթները պատվում են առատ, սառը քրտինքով, դեմքը կարմրում է, ջերմաստիճանն ընկնում: Առաջանում է փսխում, ակամա միզարձակություն և կղում: Բիբերը նեղանում են, շնչառական սուր խանգարման դեպքում՝ լայնանում: Արյան ճնշումն ընկնում է, պուլսը՝ հաճախանում:

**Առաջին օգնությունը:** Հիվանդին պառկեցնել կողքի՝ խուսափելու համար փսխման զանգվածը շնչափող ընկնելուց, որը կարող է շնչահեղձման պատճառ

դառնալ: Կատարել ստամոքսի լվացում սողայի 1–2%-անոց լուծույթով կամ սովորական ջրով, հրավիրել շտապ բուժօգնություն:

**Թունավորում էթիլեն գլիկոլից (անտիֆրիզ):** Էթիլ գլիկոլը օչարականման քաղցրահամ թափանցիկ հեղուկ է, գտնվում է անտիֆրիզի բաղադրության մեջ: Մահացու դոզան մոտավորապես 100–150 մլ է: Թունավորման նշաններն են՝ սկզբում երևում են հարբածության նշաններ, առաջանում է փսխում, լուծ, ցավ ստամոքսի շրջանում, գլխացավ: 100 մլ-ից ավելի ընդունելու դեպքում առաջացնում է գիտակցության կորուստ: Ջարգանում է երիկամային սուր անբավարարություն, լյարդի սուր անբավարարություն, և տուժածները մահանում են այդ բարդություններից:

**Առաջին օգնություն:** Արագ առաջացնել փսխում, կատարել ստամոքսի լվացում: Անգիտակից վիճակում գտնվող տուժածին պակեցնել կողքի՝ փսխման զանգվածով շնչահեղձությունից խուսափելու համար: Որպես հակաթույն, ինչպես մեթիլ սպիրտի ժամանակ, այստեղ էլ օգտագործում են էթիլ սպիրտ: Հրավիրել շտապ բուժօգնություն:

**Թունավորում նավթամթերքներից (բենզին, կերոսին):** Թունավորվում են ինչպես խմելու, այնպես էլ նավթամթերքների գոլորշիներով հագեցված օդը շնչելու ճանապարհով: Հատկապես վտանգավոր է եթերացված բենզինով թունավորումը:

Թունավորման նշաններն են՝ գլխացավը, գլխապտույտը, հարբածության նշանները, գրգռվածությունը, սրտխառնոցը, փսխումը: Ծանր դեպքերում՝ շնչառության խանգարում, գիտակցության կորուստ, ցնցումներ: Կարող է առաջանալ նաև ծանր թոքաբորբ: Խմելու ժամանակ գրգռվում է աղեստամոքսային տրակտի լորձաթաղանթը՝ առաջացնելով այրող ցավեր բերանի, կոկորդի, կերակրափողի կամ որովայնի շրջանում, երբեմն առաջանում է լուծ:

**Առաջին օգնություն:** Տուժածին դուրս բերել թունավոր գոլորշիներով հագեցած միջավայրից: Խմելու դեպքում՝ կատարել ստամոքսի լվացում սովորական ջրով, որից հետո տալ վազելինային յուղ՝ 200 մլ քանակությամբ, ակտիվացած ածուխ կամ ձեթեր: Հրավիրել շտապ բուժօգնություն:

**Թունավորում շմոլ գազից (ածխածնի մոնօքսիդ):** Սա անգույն, անհոտ գազ է: Առաջանում է նյութերի թերալյումից. որպես առաջացման աղբյուր կարող է հանդիսանալ յուրաքանչյուր կրակ կամ ներքին այրման շարժիչ, որում տեղի է ունենում թերալյում: Ծմոլ գազը շնչառական համակարգի միջոցով հայտնվելով արյան մեջ՝ կապվում է հեմոգլոբինի հետ՝ առաջացնելով կայուն միացություն, որը ունակ չէ թթվածին տեղափոխելու, առաջանում է թթվածնային սուր քաղց: Ծանր թունավորման դեպքում այն հանգեցնում է մահվան:

Թունավորման նշաններ են՝ գիտակցության մթազնումը, մկանային թուլությունը, հետագայում՝ կարճատև ուշագնացության երևույթները: Ծանր թունավորման դեպքում առաջանում է գիտակցության կորուստ, շնչառության խանգարում, փսխում, մաշկն ունենում է ալ կարմիր գունավորում:

**Առաջին օգնություն:** Թունավորվածին այդ միջավայրից անմիջապես դուրս բերել մաքուր օդ: Որպես հակաթույն տալ թթվածին, շնչառության սուր խանգարման ժամանակ՝ արհեստական շնչառություն: Հրավիրել շտապ բուժօգնություն:

**Բոտուլիզմ (սննդային թունավորում):** Սննդային թունավորումն առաջանում է բոտուլինային ցուպիկի արտադրած թույնից: Այդ միկրոօրգանիզմներն ապրում են ոչ թթվածնային պայմաններում: Նրանք կարող են աճել ապխտած մսակտորներում, զանազան պահածոներում՝ հատկապես տնային պայմաններում փակված: Թույլը անկայուն է եռման ջերմաստիճանում՝ 20–30 րոպե եռացնելուց այն լրիվ քայքայվում է:

**Թունավորման նշանները** երևում են 2–3 ժամից մինչև 2–3 օր հետո՝ կախված օրգանիզմի մեջ թույնի քանակից, ինչպես նաև օրգանիզմի դիմադրողականությունից: Սկսվում է սրտխառնոց, փսխում, երբեմն ցավ փորի շրջանում, գլխապտույտ: Հիվանդի բիբերը լայնանում են, կլման ակտը՝ խանգարվում: Առաջանում է լեզվի, փափուկ բիմբի, կոկորդի կաթված, կաթվածի են ենթարկվում դեմքի և շնչառական մկանները (միջկողային մկաններ, ստոծանի): Ծանր ընթացի դեպքում վրա է հասնում շնչառության կանգ և մահ:

**Առաջին օգնություն:** Սննդային թունավորման դեպքում, անկախ այն բանից, թե երբ է կերել, կատարել ստամոքսի լվացում, շնչառական ակտի սուր խանգարման դեպքում՝ արհեստական շնչառություն, միաժամանակ հրավիրել շտապ բուժօգնություն:

## Կենդանիների և միջատների կծած, խայթած վերքեր

**Կծած վերքերն** առաջանում են ընտանի և վայրի կենդանիների կծելուց (շուն, կատու, գայլ և այլն): Վերքի եզրերը լինում են անհարթ և կարող են արյունահոսել: Կծած վերքերից տուժածը կարող է հիվանդանալ *կատաղություն* կոչվող հիվանդությամբ: Այդ պատճառով կծած վերքերով տուժածը պետք է ստանա կատաղության դեմ ներարկում:

**Առաջին օգնության** ժամանակ պետք չէ շտապել արյունահոսությունը դադարեցնել: Արյան հետ վերքից հեռանում է կծող կենդանու թուքը: Թույլատրվում է վերքը լվանալ օճառաջրով՝ հոսող ջրի տակ: Այդ վերքերին որևէ քսուք չի կարելի դնել: Դրանք մշակելուց հետո պետք է դնել չոր վիրակապ:

**Ոչ թունավոր օձերի** ատամների հետքը չորս շաբթ է, դրանք շատ փոքր ծակոտիների շաբթեր են՝ երկուսը վերին ծնոտի ատամներից, երկուսը՝ ստորին: Ոչ թունավոր օձերի կծելու դեպքում լինում է ցավ, վերքի շրջակայքում՝ այտուց: Նման դեպքերում հիվանդին տալ ցավազրկողներ, մշակել վերքը, դնել վիրակապ:

Շատ վտանգավոր է **թունավոր օձերի կծածը**, որովհետև թույնի ազդեցությունն օրգանիզմի վրա կարող է առաջ բերել կենսական կարևոր օրգանների գործունե-



ության խանգարում և երբեմն՝ մահ: Արտաքինից թունավոր օձի կծածը նման է ծակած վերքի, երևում են երկու խայթող ատամների տեղերը և երկու շարքով փոքրիկ ատամների հետքեր:

Կծելուց անմիջապես հետո կծած տեղում առաջանում է այրող ցավ, կարմրություն, արյունազեղում: Արագ զարգանում է այտուցը: Կարճ ժամանակ հետո ի

հայտ են գալիս ընդհանուր թունավորման երևույթներ՝ բերանում չորություն, ծարավի զգացում, սրտխառնոց, փսխում, դող, ընդհանուր թուլություն: Հնարավոր է նաև լուծ: Խայթոցից 8–24 ժամվա ընթացքում առաջանում է ծանր շոկային վիճակ:

Հայաստանում տարածված քսաներեք տեսակի օձերից թունավոր են երեքը՝ տափաստանային իժը, փոքրասիական իժը, գյուրգան:

**Առաջին օգնություն:** Թույլ չտալ, որպեսզի տուժածը քայլի, կատարի ինքնուրույն շարժումներ: Դա կնպաստի թույնի արագ տարածմանը: Եթե օգնություն ցույց տվողը



*Օձի խայթոց*

տիրապետում է տեխնիկային, և բերանի լորձաթաղանթը առողջ է, կարելի է ծծել թույնը և անմիջապես թքել: Այս ձևով կարելի է հեռացնել թույնի մոտ 50 %-ը: Այնուհետև վերքին դնել չոր վիրակապ: Եթե վերքը վերջույթների վրա է, ապա անշարժացնել վերջույթը, ինչպես կոտրվածքների ժամանակ: Տուժածին հեղուկներ խմացնել (թեյ, գոլ ջուր): Չի կարելի ակոհուլային խմիչքներ տալ: Չի թույլատրվում նաև այրել խայթոցի շրջանը, չի կարելի ծակծկել վերքը և չի կարելի վերջույթին լարան (ժգուտ) դնել: Հատկապես վտանգավոր է լարանը, քանի որ այն ոչ միայն կարող է առաջացնել գանգրենայի երևույթներ, այլև հանելուց հետո թույնը և քայքայման արգասիքները ավելի արագ կտարածվեն օրգանիզմում՝ առաջ բերելով այսպես կոչված «տուրնիկետային շոկ»:



*Կարիճը մարտական դիրքում*

Նշված բոլոր գործողությունները պետք է կատարել արագ և տուժածին պատգարակով շտապ տեղափոխել հիվանդանոց:

**Կարիճների խայթի** տեղում առաջանում է այրող բնույթի ուժեղ ցավ, կարմրու-

թյուն, այտուց: Ընդհանուր թունավորման երևույթներ գրեթե չեն լինում: Կարող է լինել թույլ գլխապտույտ, արտխառնոց: Սովորաբար այս երևույթներն անցնում են 1–2 օրից:

Տուժածին տալ ցավազրկող, վերքին քսել որևէ բուսական յուղ, դնել անուշադրի սպիրտի թրջոցներ: Խայթված մասը պետք է անշարժացնել և տուժածին տալ մեծ քանակությամբ հեղուկներ:

**Մեղվի խայթից** անմիջապես հետո առաջանում է այրող ցավ, կարմրություն, այտուց: Մեղվի խայթից հետո, եթե խայթը մնում է վերքի մեջ, առաջին հերթին պետք է ունեւիով հեռացնել այն, վերքին դնել սառը թրջոցներ, քսել գինու կամ խնձորի քացախ: Մեղվի և այլ միջատների խայթը վտանգավոր է նրանով, որ կարող է առաջացնել ընդհանուր ալերգիկ ռեակցիա և հանգեցնել անաֆիլաքսիկ շոկի:



## ՅԻՇԻՐ

1. **Չի կարելի** կծած վերքերի արյունահոսությունը դադարեցնել, չի կարելի տուժածին ալկոհոլ տալ:
2. Խայթոցից տուժածին **արգելել** ինքնուրույն շարժումներ անել, քայլել:
3. **Չի կարելի** խայթոցի շրջանը ծածկել կամ խայթած վերջույթին լարան դնել:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ տարածված թունավորումներ կան կենցաղում:
2. Որո՞նք են թունավորվածներին օգնելու ընդհանուր սկզբունքները:
3. Ո՞րն է մեթիլ սպիրտի անտիդոտը:
4. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում կծած, խայթած վերքերի ժամանակ:



## Ալերգիա: Ալերգիկ ռեակցիաներ: Անաֆիլաքսիա

Օրգանիզմի մեջ երկրորդ անգամ որևէ հակածինի (անտիգենի) ներմուծումը և ներթափանցումն արյան մեջ հանգեցնում է դրանց նկատմամբ արդեն ստեղծված հակամարմինների հակազդեցությանը, որը բնութագրվում է *ալերգիա* ընդհանուր հասկացությամբ: Հակածինը, որը նաև կոչվում է ալերգեն, օրգանիզմ կարող է մուտք գործել մաշկային շփման, շնչառության, ուտելու, խայթոցի կամ ներարկման ճանապարհներով:

Ալերգիայի հիմնական ձևերն են տեղային ռեակցիան, մոլաքորը, ալտուցը, շիճուկային հիվանդությունը, անաֆիլաքտիկ շոկը: Այս դրսևորումները բաժանվում են 2 ձևի՝ արագ և դանդաղ ռեակցիաների:

Ալերգիայի դանդաղ ընթացող ձևի դեպքում ախտանիշներն ի հայտ են գալիս միայն մի քանի ժամ անց, զարգանում են 2-3 և ավելի օրերի ընթացքում և ընթանում են ավելի թեթև (առաջանում են որոշ դեղանյութերից ու քիմիական նյութերից):

Արագ տիպին է պատկանում անաֆիլաքսիան, որն առաջանում է օտարածին սպիտակուցի կրկնակի ներմուծման դեպքում: Անաֆիլաքսիան զարգանում է արագ՝ մի քանի վայրկյանի (կամ ժամի) և մի քանի րոպեի ընթացքում (անաֆիլաքտիկ շոկ), առաջանում է սուր թոքային և սրտանոթային անբավարարություն և կարող է ունենալ մահացու ելք: Այն կախված չէ ներթափանցող նյութի քանակությունից կամ օրգանիզմ ներթափանցելու ճանապարհից:

Նման հատկությամբ են օժտված բուսական ծազման որոշ սպիտակուցներ (խոտատենդը), կաթը, ելակը, ձվի սպիտակուցը, մեղրը, ինչպես նաև որոշ դեղանյութեր (հակաբիոտիկներ, պատվաստանյութեր, շիճուկներ) և միջատների խայթոցները:

Անաֆիլաքսիայի ընդհանուր ախտանիշներն են՝ առատ քրտնարտադրություն, դող, վարդագույն փրփրոտ, հեղուկ խորխ, զարկերակային ճնշման անկում, դատապարտվածության զգացողություն, մաշկի կարմրություն և եղջերացան (մոլաքոր), քոր: Նկատվում է նաև շատ բնորոշ այրոցի զգացում բերանում և քթի խոռոչում: Դեմքը կարմրում է և այտուցվում: Հետագայում՝ թոքի այտուց, գիտակցության կորուստ, ակամա միզում, ցնցումներ և այլն:

Այտուցն ընդգրկում է դեմքի, վերջույթների և կրծքավանդակի մաշկը: Առանձնապես վտանգավոր է լեզվի և կոկորդի սուր այտուցը, որ հաճախ զարգանում է այնքան սր ընթաց, որ վայրկյանների ու րոպեների ընթացքում առաջացնում է շնչահեղձություն:

**Առաջին օգնությունը:** Տուժածին հանգստացնել ու պառկեցնել, հնարավորության դեպքում տալ թթվածին: Փորձել որոշել ալերգենը և ազատել հիվանդին նրա ազդեցությունից: Եթե ալերգիան սննդի հետ է կապված, ապա կատարել ստամոքսի լվացում, իսկ եթե միջատի խայթոցից է, ապա հանել խայթը և դնել սառը թրջոց: Տուժածին տալ հակաալերգիկ դեղամիջոց: Բոլոր դեպքերում պետք է տուժածին անհապաղ բուժկետ տեղափոխել:

## **Մթրեսային իրավիճակներ, ամբոխի հոգեբանությունը (խուճապ)**

Մթրեսային իրավիճակներում տուժածների մի մասը տեղում քարանում է, չի կարողանում տեղից շարժվել: Ոմանց մոտ էլ խուճապի վիճակն առաջ է բերում

ապակողմնորոշում, նրանց թվում է, որ փրկության համար պետք է անմիջապես փախչել. առաջանում է խառնաշփոթ, իրարանցում, հրմշտոց, փախուստ: Նրանք վտանգի են ենթարկում և՛ իրենց, և՛ շրջապատի մարդկանց: Տուժածների որոշ մասն էլ իրեն շատ ազդեալիվ է պահում՝ հարձակվելով բոլորի վրա (այդ թվում նաև օգնություն ցույց տվողների վրա):

**Ամբոխը** հավաքված մարդկանց շատ մեծ խումբ է, որը որևէ արտակարգ իրավիճակում (վթար, պայթյուն, երկրաշարժ և այլն) կարող է խուճապի մատնվել՝ վտանգելով յուրաքանչյուրի կյանքը: Այդ ժամանակ ամբոխի վարքը պակաս վտանգավոր չի դառնում, քան այն արտակարգ իրավիճակը, որը խուճապի պատճառ էր դարձել:

Հետզհետե ամբոխը դառնում է անկառավարելի, բոլորը խուճապահար փախչում են վտանգից, միշտ համոզված լինելով, որ վիճակը ծայրահեղ վտանգավոր է: Խուճապահար փախուստը դադարում է միայն այն ժամանակ, երբ մարդիկ համոզվում են, որ գտնվում են վտանգավոր գոտուց դուրս:

Խուճապի մեջ գտնվող մարդկանց կանգնեցնելը կամ նրանց գործողությունները կառավարելը շատ դժվար է, իսկ երբեմն էլ՝ գործնականորեն անհնար: Յուրաքանչյուր ամբոխ կարիք ունի կամ **առաջնորդի**, կամ էլ **ատելության՝ որևէ օբյեկտի հանդեպ**: Կախված այն հանգամանքից, թե այս երկուսից որն է առկա, ամբոխը մեծ պատրաստակամությամբ ենթարկվում է կամ էլ ավերում:

Երբեք չպետք է դառնալ խուճապային տրամադրությունների, բացականչությունների և այլ գործողությունների աղբյուր (չբղավել և չվազել):

Ամբոխն արագ է ուժասպառ լինում և հանգստանում, երբ հասնում է ինչ-որ բանի: Այդ ժամանակ խմբերի բաժանված մարդիկ շատ արագ ուշքի են գալիս, փոխում են իրենց վարքագիծը և տեղի ունեցածի գնահատումը, քննադատում գործողությունները: Ամբոխում **գոյատևման** լավագույն կանոնն ամբոխը շրջանցելն է: Եթե դա հնարավոր չէ, երբեք չպետք է փորձել ամբոխին հակառակ շարժվել: Եթե ամբոխը ձեզ արդեն ներառել է իր մեջ, պետք է խույս տալ ճանապարհին գտնվող յուրաքանչյուր անշարժ առարկայից՝ սյուններից, պատերից և ծառերից, այլապես կարող եք ուղակի ճգնվել:

Եթե ձեռքից որևէ բան է ընկել, ոչ մի դեպքում չպետք է փորձել կռանալ և վերցնել: Պետք է կոճկել հագուստի բոլոր կոճակները:

Ամեն դեպքում ամենահուսալի միջոցն է՝ շտապ հեռանալ այդ վայրից:

## Էպիլեպսիա

**Էպիլեպտիկ նոպան** սկսվում է գիտակցության կորստով, տուժածն ընկնում է գետնին, և սկսվում են ցնցումներ: Դեմքը կապտում է, **բբային ռեակցիան՝ քացակայում**, չնայած անոթազարկը շոշափվում է: Բերանը փրփրոտ է, երբեմն վարդա-

գույն փրփուրով: Կարող է տեղի ունենալ նաև ակամա միզարտադրություն և կղում:

Նոպան տևում է 3–5 րոպե, որից հետո հիվանդը ոչինչ չի հիշում:

Որքան վախով է նա սպասում նոպայի, այնքան հաճախ է դա լինում:

**Մտաջին օգնությունը:** Էպիլեպսիայի նոպայի ժամանակ չի կարելի կատարել սրտի անուղղակի մերսում (կրծքային սեղմումներ) և ներփչումներ, քանի որ տուժածի մոտ ուղղակի գիտակցության կորուստ է, իսկ անոթազարկն առկա է: Այդ սխալին կարող է դրդել բբային ռեակցիայի բացակայությունը:

Նոպայի ժամանակ պետք է միայն ուշադիր լինել, որպեսզի հիվանդը ցնցումների պահին չվնասի իրեն: Դրա համար շուրջը դնում են բարձեր կամ փափուկ այլ իրեր, հեռացնում կարծր առարկաները: Հիվանդին թեքում են կողքի վրա՝ թքով և փսխման զանգվածներով խեղդվելը կանխելու համար: Լեզուն չվնասելու համար բերանի անկյունում մտցնել շորի կտոր, թաշկինակ, ռետինի կտոր և այլն:

**Չի կարելի** ատամների արանքում դնել մետաղյա առարկաներ, քանի որ դրանք կարող են կոտրել ատամները և առաջացնել շնչափակում: Նոպայից հետո հիվանդը պետք է 1–2 ժամ քնի, որպեսզի լիովին վերականգնվի:

Էպիլեպտիկ նոպաները կանխարգելվում են, եթե հիվանդները պարբերաբար ընդունում են իրենց դեղորայքը:

**Հիստերիկ նոպա:** Ի տարբերություն էպիլեպտիկ նոպաների, հիստերիկ նոպաները «մեկ դերասանի թատրոն» են:

Հիվանդի գիտակցությունը միշտ տեղում է, նա դիտավորյալ է ներկայացնում ցնցումային նոպա՝ իր ցանկությունների կատարմանը հասնելու համար: Էպիլեպտիկ նոպայի պես, բայց զգուշորեն վայր է ընկնում, ցնցվում է, տնքում, սակայն, ի տարբերություն էպիլեպտիկ նոպայի, բբային ռեակցիան պահպանված է, երբեք ինքնակամ տակը չի միզում կամ կղում: Բերանից փրփուրը միշտ սպիտակ է, քանի որ լեզուն երբեք չի կծում: Նոպան կարելի է շատ հեշտ ընդհատել՝ ապտակելով կամ սառը ջուր լցնելով վրան:

Նոպայի կրկնությունը կանխելու համար նրան պետք է հեռացնել մարդկանց միջից կամ մարդկանց հեռացնել նրա տեսադաշտից:






























## ՅԻՇԻՐ

1. Ամբոխի փախուստի դեպքում երբեք չպետք է կռահալ գետնից որևէ բան վերցնելու համար:
2. Էպիլեպսիայի նոպայի ժամանակ չի կարելի կատարել սրտի մերսում, չի կարելի ատամների տակ մետաղյա առարկաներ դնել:

# Պայմանական նշաններ

Հավելված 1

	Գնդի հրամանատար		Ջրիկի հրամանատար ՄԳ՝ մեքենայի հրամանատար, ՏԳ՝ սանկի հրամանատար
	Գումարտակի հրամանատար		Նշանառու օդերևոն
	Վաճառի հրամանատար		Ավագ հրաձիգ
	Վաճառի հրամանատար		Դիդուկահար
	Վաճառի հրամանատարի սեղակալ		Գնդացրորդ
	Վաճառի հրամանատարի սեղակալ		Նոնականետորդ
	Վաճառի հրամանատարի սեղակալ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով		Նոնականետորդի օգնական
			Դրաձիգ
	Վաճառի ավագ սեյսմիկ		Վարորդ, ՄՎ՝ մեխանիկ-վարորդ
			Ջրահափոխարդիչ
	Վաճառի ավագ		Դեռևակի մարտական մեքենա
	Վաճառի սանիտար-հրահանգիչ		Տանկ
			Ավտոմեքենա
	Դասակի հրամանատար		

**Բիշքեկյան արձանագրությունն ուժի մեջ դնելու մասին  
համաձայնագրի տեքստը (կրճատումներով)**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Արձագանքելով 1994 թվականի մայիսի 5-ի Բիշքեկյան արձանագրության մեջ շարադրված՝ կրակի դադարեցման կոչին և հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի Արձանագրության վրա՝ հակառակորդող Կողմերը համաձայնեցին հետևյալում.

1. Ապահովել կրակի և ռազմական գործողությունների լրիվ դադարեցումը՝ 1994 թվականի մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից:

.....

4. Սույն պայմանավորվածությունն ուժի մեջ կմտնի այն բանից հետո, երբ այն կստորագրվի բոլոր հակամարտող կողմերի կողմից:

Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդով

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս. Սարգսյան

Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատար Ս. Բաբայան

*Բաքու 1994 թ.  
մայիսի 9*

*Երևան 1994 թ.  
մայիսի 10*

*Ստեփանակերտ 1994  
թ. մայիսի 11*

### Հակագազի օգտագործման կանոնները

Հակագազը կրում են պայուսակի մեջ՝ ձախ կողմից՝ ուսագոտին զգած աջ ուսին, իսկ պայուսակի կափույրը՝ դրսի կողմից:

Հակագազը կարող է լինել 3 դրոթյամբ՝ «Երթային», «Պատրաստ» և «Մարտական» (հակագազը հագած):

Հակագազը մարտական դրոթյան բերվում է ինքնուրույն կամ «Ճառագայթային վտանգ», «Քիմիական վտանգ», «Գազեր» հրամաններով:

*Հակագազը հագնելու համար պետք է՝*

- շունչը պահել ու աչքերը փակել,
- գլխարկը վերցնել գլխից և դնել կողքին կամ սեղմել ծնկների արանքում,
- պայուսակից հանել հակագազը,
- երկու ձեռքով բռնել հակագազի դիմային մասի ներքևի մասից՝ բութ մատներն ուղղված դեպի դուրս,
- ներքևի մասը դնել ծնոտի տակ և հագցնել գլխին՝ վերևի մասը հասցնելով ծոծրակին,
- խորը արտաշնչել և բացել աչքերը,
- գլխարկը դնել գլխին:

*Հակագազը հանելու համար պետք է՝*

- աջ ձեռքով վերցնել գլխարկը,
- ձախ ձեռքով բռնել դիմային մասի կափույրատուփից, մի փոքր քաշել ներքև և ձախ ձեռքի շարժումով առաջ ու վեր՝ հանել գլխից,
- գլխարկը դնել:

### Ֆիզիկական պատրաստության ընդունելության քննության վարժություններն ու զնահատականները

Վարժության անվանումը	Զառի միավորը	Գնահատականները		
		գերազանց	լավ	բավարար
<b>Քաղաքացիական դիմորդների համար</b>				
Զգումներ պտտածողի վրա	անգամ	11	9	7
Վազք 100 մ	վ	13.6	14.2	14.8
Վազք 1000 մ	ր,վ	3.15	3.25	3.35
<b>Զինծառայող դիմորդների համար</b>				
Զգումներ պտտածողի վրա	անգամ	13	11	9
Վազք 100 մ	վ	14.1	14.6	15.6
Վազք 1000 մ	ր,վ	3.20	3.30	3.40



**Ռազմական տերմինների համառոտ բառացանկ**

**Ա**

- Ականանետային մարտկոց - минометная батарея
- Ակոսափող - нарезной ствол
- Ամրաշինական կառույց (ամրակառույց) - фортификационное сооружение
- Ամրացված շրջան - укрепленный район
- Անընդհատ կրակ - непрерывный огонь
- Անձնակազմ - 1. личный состав, 2. экипаж
- Անձնախումբ - команда
- Անմիջական պետ - непосредственный начальник
- Ապաժավարում - свертывание
- Ապաժավարում մարտակարգից նախամարտակարգի - свертывание из боевого порядка в предбоевой
- Աջակցող ուժեր - поддерживающие силы
- Առաջանշանառում - упреждение
- Առաջապահ - авангард
- Առաջապահ դիրք - передовая позиция
- Առաջապահ ջոկատ - передовой отряд
- Առաջնահերթ խնդիր - ближайшая задача
- Առավոտյան ստուգում - утренний осмотр
- Առջևի եզր (զիծ) - передний край
- Ավերիչ կրակ - разрушающий огонь
- Արկ - 1. снаряд, 2. выстрел
- Արձակում գործնապի տարածքից - увольнение из расположения части

**Բ**

- Բալիստիկ հրթիռ - баллистическая ракета
- Բեկորային նռնակ - осколочная граната
- Բոցավառիչ - воспламенитель

**Գ**

- Գաղտնալսում - подслушивание
- Գաղտնապահակ (գաղտնաջոկատ) - секрет
- Գետնամերձ հետազիծ - настильная траектория
- Գերաթռիչք - перелет
- Գերձզգրիտ զենք - высокоточное оружие
- Գլխամասային դետր - головной дозор
- Գլխամասային երթային ուղեկալ (ԳԵՌԻ) - головная походная застава (ГПЗ)
- Գնդակների ցրում - рассеивание пуль

- Գնդացրային ջոկ - пулеметное отделение
- Գնդի վարչակազմ - управление полка
- Գնդի կառավարում - управление полком
- Գրոհային խումբ - штурмовая группа
- Գրոհի հետմղում - отражение атаки
- Գումարտակ - батальон

**Դ**

- Դաշունային կրակ - кинжальный огонь
- Դասակ - взвод
- Դեսանտավորում - десантирование
- Դետք - дозор
- Դիվիզիոն - дивизион
- Դիտակետ - наблюдательный пункт

**Ե**

- Երկետային տվյալներ - исходные данные
- Ելման բնագիծ - исходный рубеж
- Ելման կետ - исходный пункт
- Ելման շրջան - исходный район
- Եռաշարայուն - колонна по три
- Երթադարձ - привал
- Երթակարգ - походный порядок
- Երթային պահպանություն - походное охранение
- Երթային քայլ - походный шаг
- Երթաշարք - походный строй
- Երեկոյան անվանականչ - вечерняя поверка
- Երկայնակի փորակ (ակոս) - продольный паз
- Երկտողան շարք - двухшереножный строй

**Զ**

- Չարկանաձգային մեխանիզմ - ударно-спусковой механизм
- Չինվորական հարգանքի մատուցում - отдание воинской почести
- Չինվորական պարետ - военный комендант
- Չորակոչ - призыв
- Չորահանդես - военный парад
- Չորահավար - мобилизация
- Չորաշարժ - маневр
- Չորաշարժային պաշտպանություն - маневренная оборона
- Չորավարժարան - полигон
- Չորատեսակ - род войск
- Չորացրում - увольнение

Չորացրում պահեստազոր - увольнение в запас

**Է**

Էպիկենտրոն - эпицентр

Էսկարպ - эскарп

**Ը**

Ընթացապաշար - запас хода

**Թ**

Թերաթռիչք - недолет

Թերակազմ - некомплект

Թիկունքային երթային ուղեկալ - тыловая походная застава

Թռիչքային պատրաստություն - летная подготовка

Թև - фланг

Թևանցում - охват

Թևային գորշարժ - фланговый маневр

**Ժ**

Ժամանակավոր կրակային դիրքեր - временные огневые позиции

Ժամապահ - часовой

**Ի**

Ինժեներական ապահովում - инженерное обеспечение

Ինժեներական արգելափակոցներ - инженерные заграждения

Ինժեներասակրային ստորաբաժանում - инженерно-саперное подразделение

Ինքնագնաց հրետանային կայանք - самоходная артиллерийская установка

Ինքնօգնություն - самопомощь

Իրադրության գնահատում - оценка обстановки

**Լ**

Լարափակոց - проволочное заграждение

Լողացող փոխադրիչ - плавающий транспортер

Լրակազմ - комплект

Լուսացրող գնդակ - трассирующая пуля

**Խ**

Խաչածև կրակ - перекрестный огонь

Խափանիչ կրակ - заградительный огонь

Խիտ շարք - сомкнутый строй

Խոչընդոտ - препятствие

Խրամարջիչ - ячейка

Խրամախորշ - ниша

Խրամուղի - траншея

Խուսանավում (խուսավարում) - маневр

**Ծ**

Ծածկածեղք - перекрытая щель

Ծավալման բնագիծ - рубеж развертывания

Ծավալում - развертывание

Ծավալում երթակարգից նախամարտակարգի - развертывание из походного порядка в предбоевой

Ծավալում նախամարտակարգից մարտակարգի - развертывание из предбоевого порядка в боевой

Ծավալուն շարք - развернутый строй

Ծխածածկույթ - дымовая завеса

Ծխաքողարկում - дымовая маскировка

**Վ**

Վատարողական հրաման - исполнительная команда

Վարձադրություն - 1. приказание, 2. распоряжение

Վարձավորման բնագիծ - рубеж регулирования

Վարձավորման կետ - пункт регулирования

Վեղծ առջևի եզր (զիծ) - ложный передний край

Վեղծ դիրքեր - ложные позиции

Վենտրոնացման շրջան - район сосредоточения

Վենտրոնացված կրակ - сосредоточенный огонь

Վողմնորոշիչ - ориентир

Վործանիչ կրակ - уничтожающий огонь

Վրակային դարան - огневая засада

Վրակային խոցում - огневое поражение

Վրակային նախապատրաստություն - огневая подготовка атаки (наступ.)

Վրակային պատրաստություն - огневая подготовка

Վրակի կառավարում - управление огнем

Վրակի կենտրոնացում - сосредоточение огня

Վրովի հանդերձանք - носимое снаряжение

**Հ**

Հաղորդակցության ուղի - ход сообщения

Համազարկային կրակ - залповый огонь

Հանդերձավորում - экипировка

Հանդիպական մարտ - встречный бой

Հանկարծակի հարձակում - налет

Հաշվարկ - расчет

Հեռավորություն (շարային պատրաստության) -  
дистанция

Հեռագահ խնդիր - дальнейшая задача

Հետախուզական դարան - разведывательная  
задача

Հետախուզական դետր - разведывательный  
дозор

Հետխույն գրոհ - атака в пешем порядке

Հետքաշում - отход

Հետևակային - пехотинец

Հետևակային դասակ - пехотный взвод

Հետևակացման բնագիծ - рубеж спешивания

Հետևակացում - спешивание

Հետևակի մարտական մեքենա (ՀՄՄ)- боевая  
машина пехоты (БМП)

Հիպոկենտրոն - гипоцентр

Հրակնատ - 1. амбразура, 2. бойница

Հրածգարան - стрельбище

Հրաման - 1. команда, 2. приказ

Հրամանատարական դիտակետ - командно-  
наблюдательный пункт

Հրամանատարական կետ - командный пункт

Հրամանատարություն - 1. командование, 2.  
команда

## Չ

Չգարանություն - баллистика

Չեքրի գնդացի - ручной пулемет

Չեքրի նռնակ - ручная граната

## Ճ

Ճակատամարտ - сражение

Ճառագայթային հիվանդություն - лучевая бо-  
лезнь

Ճակատային գրոհ - фронтальная атака

Ճեղքում - прорыв

## Մ

Մահաբեր ազդեցություն - убойное действие

Մասնակի մշակում - частичн. обработка

Մարտական ապահովում - боевое обеспече-  
ние

Մարտական լրակազմ (ՄԼ) - боевой комплект  
(БК)

Մարտական հերթափոխություն - боевое де-  
журство

Մարտական ներդաշնակում - боевое слажива-  
ние

Մարտական պատրաստակամություն - боевая  
готовность

Մարտական պատրաստություն - боевая под-  
готовка

Մարտակարգ - боевой порядок

Մարտապաշար - боевой запас

Մարտավարական գործարժություն - такти-  
ческое учение

Մարտարշավային ջոկատ - рейдовый отряд

Մարտկոց - батарея

Մարտով հետախուզություն - разведка боем

Մենահատ կրակ - одиночный огонь

Միաշարային - колонна по одному

Միատողան - одношереножный

Միջին դիման կետ - средняя точка попада-  
ния

Մոտոհրածգային վաշտ - мотострелковая ро-  
та

## Ն

Նախամարտակարգ - предбоевой порядок

Նախնական հրաման - предварительная ко-  
манда

Նահանջ - 1. отход, 2. отступление

Նմանակում - имитация

Նշանարան - пароль

Նշանագարկ - бой

Նշանագարկի կուտակում - кучость боя

Նշանակետ - цель

Նշանածողիկ - прицельная планка

Նշանառման անկյուն - угол прицеливания

Նշանառման գիծ - линия прицеливания

Նշանառման կետ - точка прицеливания

Նշանառություն - прицеливание

Նշանառու կրակ - прицельный огонь

Նշանացուցում - целеуказание

Նուր շարք - разомкнутый строй

## Շ

Շարային կեցվածք - строевая стойка

Շարային ստուգատես - строевой смотр

Շարային - колонна

Շարում պարապմունքների համար - развод на  
занятия

Շրջանցող ջոկատ - обходящий отряд

Շրջանցում - обход

Շուրջօրյա (օրվա) վերակարգ - суточный на-  
ряд

## Ո

Որոնում - поиск

Որոնողական ջոկատ - поисковый отряд

Որոշման ընդունում - принятие решения

**Չ**

Չկառավարվող հրթիռ - неуправляемая ракета

Չկառավարվող ռեակտիվ արկ - неуправляемый реактивный снаряд

**Պ**

Պահակարաշխում - развод караулов

Պահակադիր - разводящий

Պահակախմբերի կարգացուցակ - расписание караулов

Պահակախմբերի հերթափոխ - смена караулов

Պահակային կետ - сторожевой пост

Պահակային պահպանություն - сторожевое охранение

Պահակային ջոկատ - сторожевой отряд

Պահակատուն - караульное помещение

Պահակետ - пост

Պահակետերի տեղաբաշխման ուրվագիծ - схема расположения постов

Պահեստային հրամանատարական կետ - запасный командный пункт

Պահեստատուփ - магазин

Պահպանակ - предохранитель

Պահպանություն - охранение

Պայթուցիկ լիցք - разрывной заряд

Պայթուցիկ նյութեր - взрывчатые вещества

Պաշար - запас

Պաշտպանական բնագիծ - оборонительный рубеж

Պաշտպանական կառույցներ - оборонительные сооружения

Պաշտպանական օպերացիա - оборонительная операция

Պաշտպանության անհատական միջոցներ - индивидуальные средства защиты

Պաշտպանության կայունություն - устойчивость обороны

Պաշտպանության կոլեկտիվ միջոցներ - коллективные средства защиты

Պաշտպանության հաղթահարում - преодоление обороны

Պաշտպանություն - 1. оборона, 2. защита

Պաշտպանություն զանգվածային խոցման զենքից - защита от оружия массового поражения

Պաշտպանունակություն - обороноспособность

Պատասխան - отзыв

Պատերազմական գործողությունների ռազմաբեմ - театр военных действий

Պատասպարման գոտի - полоса прикрытия

Պարեկ - патрульный (патруль)

Պարեկային ծառայություն - патрульная служба

**Ջ**

Ջոկ - отделение

Ջոկատ - отряд

Ջրային արգելափակոցներ - водные заграждения

Ջրային արգելք - водная преграда

**Ռ**

Ռադիոկապ - радиосвязь

Ռադիոհետախույզություն - радиоразведка

Ռադիոտեխնիկական գործեր - радиотехнические войска

Ռադիոքողարկում - радиомаскировка

Ռազմական դրություն - военное положение

Ռազմական հայեցակարգ - военная доктрина

Ռազմական հզորություն - военная мощь

Ռազմական տեխնիկա - военная техника

Ռազմական տեղադրություն - военная топография

Ռազմաճակատ - фронт

**Ս**

Սակրային գործեր - саперные войска

Սահմանապահ գործեր - пограничные войска

Սանիտարական մշակում - санитарная обработка

Սպառազինության սովորական տեսակներ - обычные виды вооружения

Սպառազինություն - вооружение

Ստորաբաժանում - подразделение

**Վ**

Վայրէջք - 1. посадка, 2. приземление

Վաշտ - рота

Վառելիքաբաշխային նյութեր - горючесмазочные материалы

Վարակազերծում - дезинфекция

Վարակված տեղամաս - зараженный участок

Վարժաաարք - тренажер

Վերկաց - подъем

Վերջապահ - 1.арьергард, 2. замыкающий

Վերջնագիր - ультиматум

Վճռական գրոհ - штурм

**Տ**

Տանկավազանի ուղղություն - танкоопасное направление

Տարածություն (շարային պատրաստության) - интервал

Տարբերիչ նշաններ - опознавательные знаки

Տարհանման կետ - эвакуационный пункт

Տարհանում - эвакуация

Տեխնածին աղետ - техногенное бедствие

Տեղաբաշխում - расположение на месте

Տեղազննում - рекогносцировка

Տեխնիկական ապահովում - техническое обеспечение

Տեխնիկական սպասարկում - техническое обслуживание

Տեղանքի հետախուզում - разведка местности

Տեղանքի պաշտպանական հատկանիշներ - защитные свойства местности

Տեղափակում - локализация

Տեղեկամատյան - формуляр

Տրված ուժեր և միջոցներ - приданные силы и средства

**Յ**

Յամաքային զորատեսակներ - рода сухопутных войск

Յամաքային զորքեր - сухопутн. войска

**Ու**

Ուժերի վերախմբավորում - перегруппировка сил

Ուժերի կենտրոնացում - сосредоточение сил

Ուժերի հարաբերակցություն - соотношение сил

Ուժերի և միջոցների գերազանցություն - превосходство в силах и средствах

Ուղեկալ - застава

Ուղեկցորդ - выводной

Ուղիղ նշանառություն - прямая наводка

Ուղղակի պետ - прямой начальник

Ուղղապահ - направляющий

Ուղղորդում - наведение

**Փ**

Փակ կրակային դիրքեր - закрытые огневые позиции

Փանփշտահան - извлекатель пуль

Փանփշտանոց - патронник

Փոխադրովի հանդերձանք - возимое снаряжение

Փոխադրովի ռադիոկայան - возимая радиостанция

Փոխգործողություն - взаимодействие

Փոխօգնություն - взаимопомощь

Փոկակալ - антабка

Փող - ствол

Փողակալ - цевье

Փողանցք - канал ствола

Փողատուփ - ствольная коробка

Փողի պահպանակ - ствольная накладка

Փուստ - осечка

Փուստ կրակ - стрельба холостыми патронами

**Ք**

Քառաշարայուն - колонна по четыре

Քիմիական ապահովում - химическое обеспечение

Քիմիական զենք - химическое оружие

Քիմիական զորքեր - химические войска

Քիմիական հետախուզություն - химическая разведка

Քողարկման միջոցներ - маскировочные средства

Քողարկում - маскировка

**Օ**

Օդային հետախուզություն - воздушная разведка

Օդային մարտ - воздушный бой

Օդային տագնապ - воздушная тревога

Օպերատիվ դադար - оперативная пауза

Օպերատիվ գործարժություն - оперативное учение

Օպերատիվ թիկունք - оперативный тыл

Օպերատիվ խումբ - оперативная группа

Օպերատիվ հետախուզություն - оперативная разведка

Օպերատիվ պատրաստություն - оперативная подготовка

Օպերատիվ քողարկում - оперативная маскировка

Օրապահ - дневальный

Օրվա կարգացուցակ - расписание дня

Օրվա վերակարգ (շուրջօրյա վերակարգ) - сурточный наряд

## Բովանդակություն

ԷՋԵՐ ՀԱՅ ՈւԱԶՄԱՐՎԵՄՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ .....	3
Հայ ժողովուրդը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ.....	3
Հայ ժողովուրդն Արցախյան ազատամարտի ժամանակ .....	9
Հայկական բանակի կադրերի պատրաստման համակարգը .....	17
ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ .....	21
Օդային հարձակման միջոցների դեմ պայքարի ձևերը .....	21
Զինվորի գործողությունները ժամանակակից համագորային մարտում .....	24
Զինվորի պարտականությունները մարտի դաշտում .....	24
ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ .....	33
Ձեռքի բեկորային նռնակներ .....	33
Ձեռքի բեկորային նռնակների տեսակներն ու մարտական բնութագրերը .....	33
Ձեռքի նռնակների լիցքավորումը, նետելու եղանակներն ու կանոնները .....	34
Նռնակների օգտագործման անվտանգության կանոնները .....	35
Հրաձգային զենքի փամփուշտների տեսակները և կառուցվածքը .....	37
Ավտոմատով կրակելը .....	38
Հրաձգության կանոնները .....	38
Հրաձգության հնարավոր խափանումները և դրանց վերացման միջոցները .....	40
ՀՀ ՁՈՒ ԿԱՆՈՆԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	43
Ժամապահի պարտականությունները: Նրա անձեռնմխելիությունը .....	43
Ժամապահի պարտականությունները պահակետի ընդունման-հանձնման ժամանակ .....	45
Զենքի լիցքավորման և լիցքաթափման կարգը: Ժամապահի զենքի դիրքը պահակետում .....	46
ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ .....	49
Ջոկի շարքերը .....	49
Ջոկի ծավալում և երթային շարքերը .....	49
Ջոկի շարքի նոսրացումը և խտացումը .....	49
Ջոկի վերադասավորումը .....	50

<i>ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ</i> .....	52
Տեղագրական քարտեզների կորդինատային և կլիմետրային ցանց .....	52
Դիրեկցիոն անկյուն .....	54
Տեղանքի գնահատումը .....	57
Տեղագրական քարտեզը որպես մարտի կառավարման միջոց .....	56
<i>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</i> .....	57
Պատերազմ վարելու մեթոդներն ու միջոցները .....	57
Պատերազմ վարելու մեթոդները .....	57
Պատերազմ վարելու միջոցները .....	59
<i>ՄՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</i> .....	63
Բնակչության պաշտպանությունն արտակարգ և	
պատերազմական իրավիճակներում .....	63
Անհատական պաշտպանության միջոցներ .....	63
ճառագայթային, քիմիական հետախուզության և	
բաժնեչափական հսկողության սարքեր .....	66
Բնակչության պաշտպանության հիմնական ձևերը .....	69
Վարակազերծում և սանիտարական մշակում .....	72
Գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանությունը .....	74
Փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ .....	77
<i>ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ</i> .....	81
Արտաքին ազդակների ներգործությունը օրգանիզմի վրա .....	81
Այրվածքներ .....	81
Արևահարություն, մարմնի ընդհանուր սառեցում, ցրտահարություն .....	83
Քիմիական այրվածքներ: Էլեկտրավնասվածք: Ջրահեղձում:	
Ճառագայթային ախտահարումներ .....	85
Թունավոր նյութեր, թունավորումներ .....	89
Մարտական թունավոր նյութերով թունավորումներ .....	90
Կենցաղային թունավորումներ .....	94
Կենդանիների և միջատների կծած, խայթած վերքեր .....	96
Ալերգիա: Ալերգիկ ռեակցիաներ: Անաֆիլաքսիա .....	98
Սթրեսային իրավիճակներ, ամբոխի հոգեբանությունը (խուճապ) .....	99
Էպիլեպսիա .....	100
Հավելվածներ .....	102
Բովանդակություն .....	110

ՎԱՐԴԳԵՄ ՕՀԱՆՅԱՆ, ՍԱՐԳԻՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԼԵՌՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ,  
ՎԱՀԱԳՆ ԱՌԱՋԵԼՅԱՆ, ՎԱՉԱԳԱՆ ԱՍՏԱՆՅԱՆ, ՖԻԻԴԱ ԵՐԻՑՅԱՆ,  
ՌՈՒԴԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԻՐԱԲՅԱՆ

Ընդհանուր խմբագիր՝ **Մարգիս Մարգարյան**  
Մասնագետ խմբագիր՝ **Վարդգես Օհանյան**

Հրատարակիչ տնօրեն՝ **Սուրեն Չունգուրյան**  
Համակարգչային ձևավորող՝ **Միսակ Գևորգյան**  
Սրբագրիչ՝ **Ծովինար Հովհաննիսյան**

Չափսը՝ 70x100 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:  
7.0 տպ. մամուլ: Պատվեր՝ 909:  
Տպարանակը՝ 39600:



«ԱՍՏԳԻԿ ԳՐԱՏՈՒՆ» հրատարակչություն  
ք. Երևան Գևորգ Քոչարի 21,  
հեռ.՝ (37410) 52-88-00,  
E-mail: [ast\\_gratun@yahoo.com](mailto:ast_gratun@yahoo.com)

Տպագրվել է՝ «Տիգրան Մեծ» ՓԲԸ տպարանում